

Բնագիտ

ՔԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՄ ԳԵՂԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՈՐՈՐԵՍՏԻ

Բ. ՏԱՐԻ 1963
ՅՈՒՆՈՒԱՐ

1

پاكين
مجله شهریه ادبیة وفنیة علمیة
مدیر المسؤؤل
السیدارتین کارنیک قزانجیان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

բ ա գ ի ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐԴԱՆԵՍԻ

ՎԱՐԻՁ ԽՄԲԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐ
ԵՂ. ՊՕՑԱՋԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ
Յ. ԳԵՂԱՐԴ
Յ. ՈՍԿՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
Վ. ՕՇԱԿԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

ԽՄԲ.
ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ
Կ. ՄԵՀԵԱՆ
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ
Ա. ԵՐԿԱԹ
Պ. ՍՆԱՊԵԱՆ
ԳՈՒՏՅԻ Պ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆ
Ռ. ԳԱՋԱՆՃԵԱՆ
Վ. ԿԱՏԱՐԵԱՆ
Ս. ԲԵԴՈՒԻՆ
Ճ. ՍԹԱՅՆՊԵՔ
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ
ԵԴ. ՏԱՐՕՆԵԱՆ
Վ. ՕՇԱԿԱՆ
ՏՈՔԹ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ
Բ. Փ.
Մ. Զ.
Կողքի ճկար՝ - Ժ. ԿԵՅԵՐՉԻՆԵԱՆ

Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Բ. ՏԱՐԻ, ԳԻՒԻ 1

ՅՈՒՆԱՅԻՍ 1963

ՊԵՏՐՈՒԹ

ԽՍՀՄ ԳՐԱԿԱՆ

« Բ Ա Գ Ի Ն »

Բ. ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ



Գրականության և արուեստի այս հանդէսը ժամացոյցի մը կանոնաւորութեամբ իր հրատարակութեան առաջին տարին բոլորեց:

«Բազմ»ի խմբագրութիւնը, քաջալերուած առաջին տարուան գրական վաստակէն և ընթերցող հասարակութեան մէջ գտած ընդունելութենէն, աւելի վճռական և աւելի հաւատաւոր՝ կը ձեռնարկէ Բ. տարուան հրատարակութեան, վստահ՝ թէ գրական ստեղծագործութիւնները պիտի անին ու ծաղկեցնեն մեր գրական անդատումը: Հայ գրասէր հասարակութիւնը աւելի մեծ հետաքրքրութեամբ և աւելի արթուն գրական ճաշակով մը պիտի փնտէր գրականութեան այս ամսագիրը, որ կոչուած է դրօշակիրը հանդիսանալ Հայ Գրականութեան և արուեստի շարժումներուն, մասնաւորաբար սփիւռքի Հայութեան մէջ:

«Բազմ»ի հրատարակութիւնը անհրաժեշտ պահանջի մը արդիւնքն էր: Մերձաւոր և Միջին Արեւելքի մէջ համալսմբում հայ զանգուածները կէս միլիոնէն աւելի թիւ մը կը հաշուեն, հայեցի կրթութեամբ զանգուած մը, որ իր մտաւորական և գրական ապրումներուն արտայայտիչը պիտի ձևենաւ:

«Բազմ» հայ հոգեկան արտայայտութիւններու մեհեանն է, որ միտքը կրնայ բոլորով և ուղիղ ճանապարհով հասնիլ հայ մարդու սիրտին և մտքին:

[Handwritten signature]

Մենք կը հաւատանք հայ հանճարին եւ տաղանդին: Կը հաւատանք լռյսի պաշտամունքին որ մեր ցեղին գլխաւոր յատկանիշն եղաւ: Դարերու ընթացքին, թագմապիսի միջավայրերու մէջ, աննպաստ պայմաններու տակ, Հայ միտքը խաւարէն դարձաւ դէպի լռյսը, գոեհեղութենէն դէպի արուեստը ու արուեստին զանազան արտայայտութիւնները:

Մեր ազգային գերագոյն յատկանիշը ստեղծագործութիւնն է, - արուեստ, գրականութիւն, ճարտարապետութիւն: Մէկ խօսքով՝ ՄՏԳԻ ԼՈՅՍ: Հայուն հոգեկան աղբիւրը առատարուիս եղած է մեր գրականութեան ռուկնդարէն մինչեւ մեր օրերը: Ժամանակակից նիւթապաշտութիւնը եւ քաղաքական յոռետեսութիւնները չեն կրնար ցամաքեցնել ռուկիւն աղբիւրը Հայ միտքին:

Այս հաստատ հաւատով կը շարունակենք մեր նամբան, այն վստահութեամբ, թէ Տիրոջ Այգին անփոխարինելի ժառանգութիւնը պիտի մնայ եկող սերունդներուն:

Գրական մեր ըմբռնումները բանաձեւած ենք «Բագին»ի առաջին քիւլի խմբագրականով: Երբ կը ձեռնարկենք Բ. տարւան հրատարակութեան, մեր գրական դաւանանքը նայնը կը մնայ: Այս ամսագիրը ազատ քեմը պիտի ըլլայ հայ գրագէտներուն եւ մտաւորական ընտրանիին: Մեզ շահագրգռողը տաղանդն է: Տաղանդէն բխած գրական ստեղծագործութիւնները, երբ օծում են անոնք արուեստով ու խորքով, ունին ռն եւ լեզուական մաքրութիւն, կը հիւրընկալուին մեր հանդէսին մէջ եւ կը զնահատուին: Մեր վերապահումները աւելի լաւին ձգտում մը իբրեւ պիտի է մեկնաբանուին: Անոնք որ պիտի փափախին գրականութեան նուիրեալը ըլլալ, բծախրոնդութիւնը պիտի համարեն արուեստին քարձուցքները նաւեկու իբրեւ գերագոյն եւ անխալակամ ուղի:

Նորահաս գրողները պիտի փայլանենք՝ միշտ այն համոզումով թէ նոր սերունդի շարքերէն կը ծնին վաղուան բանաստեղծներն ու գրագէտները: Խստապահանջութիւնը այս պարագային՝ սկսնակ գրողի օգտին է: «Բագին»ի խմբագրութիւնը անձնական շփումներով կամ նամակագրութեամբ՝ նորահաս գրողներուն պիտի օժանդակէ, որ թերութիւններէ զգուշանան եւ ձգտին կատարեալին:

Մէկ տարւան հունձք արդէն մատուցած ենք հայ ընթերցողներուն: Տարւան մը բովանդակութենէն դուրս կը տեսնէք թէ «Բագին»ի շուրջ համախմբուած են մօտ 60 գրողներ, արեւմտէ 20-ը հին հեղինակներ են, 22-ը միջին սերունդի հեղինակներ, արեւմտէ գրական ամուն մը ունին, եւ 18-ը նոր գրողներ: Այս համախմբումն իսկ յազարանակ մըն է գրական այս հանդէսին համար:


Ուժերու համախմբումը արդէն նպատակներէն մէկն է «Բագին»ի:

Հայ միտքի միախառն արտայայտութիւնը եւ անոր ընդհանրական բաշխումը սփիւտի ընթերցողներուն՝ կը ստեղծէ գրական մթնոլորտ մը ցրուած Հայութեան մէջ եւ կը պահպանէ Հայ ազին առողջ եւ կենսունակ:

Խմբագրութիւնը կը ձգտի նոյնացնել եւ հետաքրքրական դարձնել այս ամսագիրը, որ գաղութէ գաղութ հոգեկան կապի գորուոր ազդակ մը սկսած է արդէն հանդիսանալ:

Իսկ մեր բարեկամներուն եւ թաժանդդներուն կը մնայ լայնօրէն տառածել «Բագին»ը, որպէս նուիրական աշխատանք մը յաղագս Հայ գրականութեան վերելքին:

146-2000



ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՋՐՈՒՑԻԿՆԵՐ՝ ԸՆԴՄԷՁ ԱՆԱՄՆՈՑ

ԿՈՎԸ.— Մե՛ղք որ կով եմ ծնած...
ԵՁԸ.— Եթէ կով չծնէիր, պիտի ծը-
նէիր ինծի պէս եղ...:

ՀԱԻԸ.— Ըսելու ձեւը կրնայ տար-
բեր ըլլալ, բայց մորթուելու ձեւը նոյնն
է:

ՊՂԻԹԸ.— Ձմեռը լաւ անցուցի՞ր...
ՃՊԻԹԸ.— Ձեմ գիտեր. քնացած
էի:
ՊՂԻԹԸ.— Քանի որ քնացած էիր,
ուրեմն լաւ անցուցիր ձմեռը:
ՃՊԻԹԸ.— Բայց ես չգլացի լաւ
անցընելու:
ՊՂԻԹԸ.— Ամէն բան զգալով չըլ-
լար, այլ երբեմն մտածելով:
ՃՊԻԹԸ.— Մտածելը ի՞նչ է...
ՊՂԻԹԸ.— Ի՞նչպէս բացատրեմ
մտածելը՝ առանց գործելու, ներսէն տը-
խատիլ է:
ՃՊԻԹԸ.— Ատիկա խենթի գործ է:
ՊՂԻԹԸ.— Մօտեցար բացատրու-
թեան: Խենթի գործ չէ. խենթեցնող
գործ է...:

ՎԱԹԵԱԿԸ.— Տեսածիս համաձայն,
մեր կեանքը թելէ մը կախուած է...
ՀԱԻԸ.— Կը կարծեմ որ աւելի տո-
կուն բանէ մը կախուած է մեր կեանքը:
Եթէ մեր կեանքը թելէ մը կախուած
ըլլար, մարդիկ կը կտրէին մկրատով:
Մեր կեանքը կախուած է պարանէ մը,
որ կ'անցնի մեր կոկորդէն, քանի որ մեզ
կը կտրեն դանակով ու մեր կոկորդէն:
ՎԱԹԵԱԿԸ.— Դուն շատ իրապաշտ
ես: Ի՞մա ըսելու ձեւ մըն էր:

ԱՌԱՋԻՆ ԿԱՊԻԿԸ.— Մե՛ղք որ մարդ
ծնած չեմ...
ԵՐԿՐՈՐԴ ԿԱՊԻԿԸ.— Եթէ մարդ ծը-
նէր՝ ի՞նչ պիտի ընէիր...
ԱՌԱՋԻՆ ԿԱՊԻԿԸ.— Նախարար կամ
նկարիչ պիտի ըլլայի: Եթէ Ափրիկէի
մէջ չկարենայի նոր պետութեան մը նա-
խարարը ըլլալ, Եւրոպայի մէջ նկարիչ
կը դառնայի:
ԵՐԿՐՈՐԴ ԿԱՊԻԿԸ.— Մէկ բանով
կրնանք միտնալուիլ. թէեւ կապիկներս
մարդ չենք, բայց մարդիկը կապիկ են
ընդհանրապէս:

ԹՈՒԹԱԿԸ.— Կա՛տու, գո՛ւն ալ ըն-
տանի կենդանի ես...
ԿԱՏՈՒՆ.— Եւ կրկնապէս: Նախ՝ ըն-
տանի կենդանի մըն եմ. երկրորդ՝ կ'ապ-
քիմ հետը ընտանիքին, որուն մէկ շատ
փայփայուած անդամն եմ:
ԹՈՒԹԱԿԸ.— Իբրաւունք ունիս: Ըն-
տանիքի մը անդամներուն մէջ, կարեւոր
դերք մը կը զբաւեն կատուները:
ԿԱՏՈՒՆ.— Ինձմէ յետոյ կու գայ
լուսը:
ԹՈՒԹԱԿԸ.— Անկէ ալ յետոյ, խողը
կու գայ կը կարծեմ:
ԿԱՏՈՒՆ.— Ես ընտանիքը կ'ազատեմ
մուկերէն...

Կ. Զ. Ա. Կ.

ԹՈՒԹԱԿԸ.— Բայց քեզի պէսներէն ո՞վ պիտի ազատէ ընտանիքը...

✽

ԽՈՁԸ.— Ի՞նչ բախտաւոր են մարդիկ, որոնք կը մեռնին բնական մահով. մինչդեռ մենք պիտի սպաննուինք...

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՁԸ.— Փիլիսոփայ եղիւր, ընկեր: Այնպէս ենթադրէ թէ մեր բնական մահն ալ սպաննութիւն է: Ասկէ դատ, միթէ մարդիկը բնական մահով կը մեռնին: Հարկը միւրոնի մէջ հաղիւ մէկ մարդ կրնաս գտնել բնական մահով մեռնող: Մենէ աւելի բախտաւոր չեն մարդիկը: Կը սպաննուին աստիճանաբար, կամ յամբարար անձնասպան կ'ըլլան կամայ ակամայ:

ԽՈՁԸ.— Ուրեմն մարդիկն ալ մեզի շփոթեցաւ են, թէ եւ չունին երեւոյթ դժբախտի:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՁԸ.— Որովհետեւ իրենց դժբախտութեան զիտակցութիւնը չունին:

ԽՈՁԸ.— Ես կը կարծէի թէ մարդիկ համոզուած են իրենց միակ զիտակից տրարածները ըլլալուն:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՁԸ.— Ատիկա մարդկային յաւակնութիւն մըն է:

✽

ՇՈՒՆԸ.— Լսեցի՞ր, շնեղբայր, ճարտի մէջ, բնականէն անպոչ շուները շատ յարգի են եղեր: Ազնուականները միայն անպոչ շուներ կը պահեն եղեր իրենց տուններուն մէջ: Ի՞նչ է պատճառը ի պատուի ըլլալուն անպոչ շուներուն: Արդեօք մարդու նմանիւնի՞ն է...

ԵՐԿՐՈՐԴ ՇՈՒՆԸ.— Տխմա՛ր, դուն մարդիկը անպո՛չ կը կարծես...

ՇՈՒՆԸ.— Ես պոչաւոր մարդ, կամ մարդու պոչ չեմ տեսած...

ԵՐԿՐՈՐԴ ՇՈՒՆԸ.— Մարդը կը պահէ իր պոչը: Քաղաքակրթութեան մարդը, ինչ կուտակցութեան ալ պատկանի, պոչի խնդրին մէջ պահպանողական է:

✽

ՍԱԳԸ.— Հնդկահաւ քոյրիկ, այս օ-

րերս, մեր տէրը՝ ուղած ուտելիքներդ կու տայ, կը տխրիս...

ՀՆԴԿԱՀԱԿԸ.— Անմիտ սաղ, չե՞ս գիտեր որ մահուան դատապարտուածներուն ուղած ուտելիքը կու տան:

✽

ԳԱՌՆՈՒԿԸ.— Մայրիկ, դայերը ինչո՞ւ կ'ատեն մեզ: Սոսկալի է անոնց ատելութիւնը:

ՈՁԽԱՐԸ.— Գայլերուն ատելութիւնը բան մը չէ, գառնուկս: Սոսկալի՞ն՝ մարդոց մեզի հանդէպ ունեցած սէրն է:

✽

ԵԿԲԱՆԻԿԸ.— Թութակ, թէ եւ կը ջանաս մարդու պէս խօսիլ, բայց չես յաջողիր իրական մարդու մը պէս խօսիլ:

ԹՈՒԹԱԿԸ.— Ճիշդ է, բայց զիտցիր որ մարդոցմէ շատերը կը խօսին թուութեաներու պէս:

✽

ՋՈՐԻՆ.— Մարդոց առջեւ միշտ էլ ձեռնալու չես:

ԷՇԸ.— Կ'ուզես որ ջորի՞ ձեռնամ: Ես պատիւ ունիմ:

✽

ԷՇԸ.— Երբեմն աւանակ ձեռացիր:

ԱԻԱՆԱԿԸ.— Ուզեմ չուզեմ:

✽

ՇՈՒՆԸ.— Մարդոց համար մենք չընտրեա՞նք խորհրդանշան ենք, թէ հաւատարմութեան խորհրդանշան...

ԵՐԿՐՈՐԴ ՇՈՒՆԸ.— Հաւատարիմ շնութեան խորհրդանշան:

✽

ՈՁԽԱՐԸ.— (Որ յափշտակուած է գայլի) պիտի ուտես զիս, այնպէս չէ՞...: Ա՛հ, ինչո՞ւ այսքան շար ես միշտ...

ԳԱՅԸ.— Քեզ սիրող, քեզ պաշտպանող շուներն ու մարդերը միթէ քեզ չե՞ն ուտեր: Միտքով անհամ ու մարմ-

նով համով ոչխարս, անարգար խոսքերով մի՛ խանդարեր արորժակս: Հաւատա՛, չարք ես չեմ: Ես Խնչպէս չար կընամ ըլլալ, երբ դադարեմ: Գաղանները երբեք չար չեն: Իմ եւ նմաններուս մէջ չարը Անօթութիւնն է. մինչդեռ մարդոց մէջ ճիշդ հակառակն է: Գաղաններս կ'ուտենք ու կը հանդարտինք, իսկ մարդիկ կ'ուտեն ու կը կատողին:

✽

ԾԻԾԵՌՆԱԿԻԼ.— Պարոն աղբւր, քեզ միշտ կանանդով կը տեսնեմ: Տե՛ս, ես մէկ էգ միայն ունիմ. զայն կը սիրեմ ու յաւէտ հաւատարիմ եմ:

ԱՔԱՌԻԼ.— Եթէ դուն մէկ էգ կը սիրեմ ու մէկին հաւատարիմ ես, ես քառսուն հաւ կը սիրեմ ու քառսունին ալ հաւատարիմ եմ:

ԾԻԾԵՌՆԱԿԻԼ.— Դուն կ'երեւի ծնած ես մահահտական...

ԱՔԱՌԻԼ.— Ես ծնած եմ աղբւրական, ու կ'սպրիմ կեանք մը բնական:

✽

ԱԳՈՒԱԻԼ.— Աղուէս, քեզի համար կ'ըսեն թէ շատ խորամանկ ես:

ԱՂՈՒԻՍԻԼ.— Ո՛հ, ես անիծեմ այն խորամանկութեան որ ամէնուն ծանօթ է: Ո՛հ, ես անիծեմ ի՛մ խորամանկութեան, երբ շարթուան տասնընորս օրուան տասներկու օրը սոված եմ:

ԱԳՈՒԱԻԼ.— Բայց շաքարը եօթը օր է:

ԱՂՈՒԻՍԻԼ.— Գիտեմ: Դուն ալ գիտցիր որ անօթին համար մէկ օրը՝ երկու օր է: Գիտցիր նաեւ որ ապիուական եմ իրրեւ անօթի: Այսինքն չեմ ուտեր դիակ կամ լէշ: Կ'ուտեմ քաներ լաւորակ, հաւորակ: Ու կը նախընտրեմ իմ անօթութիւնս, քան քու կշտութիւնդ:

ԱԳՈՒԱԻԼ.— Ես խորամանկութեան մասին խօսեցայ միայն, իսկ դուն կը խօսիս անօթութեան մասին ու կշտութեան, ինծի նետելով քարեր:

ԱՂՈՒԻՍԻԼ.— Ատ ալ կշտանալու կերպ մըն է:

✽

ՇՈՒՆԵԼ.— Աղտոտ ու զնասակար մուկ, ըսէ՛ ինծի թէ Խնչ է ցեղիդ պաշտօնը աշխարհի մէջ...

ՄՈՒԿԻԼ.— Ամօ՛թ որ չես գիտեր: Մուկերս ենք որ մշակութային կապի միութիւնը ստեղծած ենք բովանդակ աշխարհի: Եւ մարդիկ նոր է որ կը հետեւին մեզի: Առաւելապէս կը ծառայենք գիտութեան: Մուկերս ենք որ մանրէները կը փոխադրենք առ ի քննութիւն: Մուկերս ենք որ կը նահատակուինք, յանուն գիտական փորձերու: Մեծ է մուկերուս միսինը՝ ապերախ մարդկութեան համար:

ՇՈՒՆԵԼ.— Բայց դուք մանրէներ կը փոխադրէք երկրէ երկիր, ու պատճառ կ'ըլլաք համաճարակի:

ՄՈՒԿԻԼ.— Բայց ե՞րբ տեսնուած է որ գիտութիւն, քաղաքակրթութիւն տարածուին, առանց մանրէի:

✽

ԿԱՊԻԿԻԼ.— Կ'ըսեն թէ մարդիկ նախապէս կապիկ էին: Խնչպէս եղած է որ անոնք յառաջդիմած են...

ԵՐԿՐՈՐԻ ԿԱՊԻԿԻԼ.— Անհող եղիր: Առանց կապիկներուս, մարդիկ բանիկ մը չեն կրնար ընել: Երբ Հրթիռ արձակեցին դէպի մթնոլորտ, մէջը նախ կապիկ մը դրին: Երկրի վրայ ալ, երկնքի մէջ ալ իրենց ոահմէրանները մենք ենք: Հպարտ եղիր, յիմար:

✽

ԱՐԾԻԻԼ.— Մարդիկ մթնոլորտին մէջ չունեն ու կապիկներ բարձրացնելով՝ կը պղծեն մեր կոյտ արձակաբանը:

ԵՐԿՐՈՐԻ ԱՐԾԻԻԼ.— Մարդիկ միշտ չունեն ու կապիկները երկինք հանած են, իսկ իրենց արժանաւորներն ալ դարձած են գետնէ գետին:

✽

ԱՌԻԻՄԻԼ.— Գիտէ՞ր որ մարդիկ իրենց մէջ գտնուող ուժեղներն ու քաջերը «առիւծ» կ'անուանեն...

ԵՐԿՐՈՐԻ ԱՌԻԻՄԻԼ.— Եթէ մեր մէջ

վախկոտներ, վատեր գտնուէին, մենք ալ զանոնք «մարդ» կ'անուանէինք... փոխադարձաբար:

❖

ԱՐԾԻՒԻԸ.— Կարգ մը պետութիւններ իրենց զինանշանին մէջ՝ ինչո՞ւ կը դնեն արծիւի պատկեր...:

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԾԻՒԻԸ.— Հաւանաբար, կ'ուզեն ըսել՝ թէ իրենց թագաւորութիւնը թռչուն է. այսօր կայ, վաղը չկայ. կը թռչի կ'երթայ...:

❖

ՃՆՃՂՈՒԿԸ.— Աղաւնիներ, դո՞ւք ալ կը կռուիք: Դո՞ւք ալ կը խլէք կեր՝ իրարու կտուցէ: Ես ձեզի կը կարծէի օրհնեալ, օրինակելի: Գիտէի որ էք նշանակ միամտութեան, անմեղութեան, հաւատարմութեան, հաշտութեան, խաղաղութեան եւ սիրոյ: Ափսո՞ս, ուրեմն ամենայն ինչ պատրա՞նք է, պատռո՞նք է... ասփսո՞ս...:

ԱՂԱՒՆԻ ՄԸ.— Վերջացուցի՞ր քարոզը, ճնճղուկ արեղայ: Երկրայիններ ու Երկնայիններ զարմանալի զուգարդիպութեամբ մը աղաւնիներու յանձնած են առաքելութիւններ առաքինութեանց: Մենք ի՞նչպէս կրնայինք իրադրօժել այդ բոլորը, քանի որ ունինք ստամոքս, սիրտ, գլուխ, մարմին: Մենք պէտք էր ըլլայինք լոկ լոյս, համակ հոգի: Կուրծն է կանոնը կեանքին: Երբ մարմին կայ, մտքն չի կայ. երբ ուտել կայ, ատել կայ: Երբ անանի կայ, սպաննել կայ: Մարմինը մեքենայ մըն է, որ մեղք կ'ար-

տագրէ: Աշխարհի մթնոլորտին մէջ անմեղ մնալը՝ կը նմանի ջուրը իյնալուն, ու չթրջելուն. ճահիճը իյնալուն, ու չաղտոտելուն. անխափոշի մէջ թաւալելուն, ու չսեւնալուն:

ՃՆՃՂՈՒԿԸ.— Այս աշխարհի մէջ, ամէն արարած՝ ինք իր պաշտպան փաստարանն է. բայց ո՞չ ոք իր դատախազը չէ:

❖

ԱՌԱՋԻՆ ՁԻՆ.— Գիտէ՞ք, ընկերներ, թէ ի՞նչպէս կ'ուզէի վրէժ լուծել մեր ամբարտաւան տիրոջմէն: Հեծնէի իր վրայ ու խթանելով եւ խաբարանելով զինք, պոռոյտ մը կատարէի քաղաքսին մէջ:

ԵՐԿՐՈՐԴ ՁԻՆ.— Իսկ ես կ'ուզէի մեր գոռոզ տէրը լծել կառքի: Ես ալ կ'ուզէի կառավար ըլլալ ու զինք վաղցրնել քառասմբակ:

ԵՐԿՐՈՐԴ ՁԻՆ.— Ես ալ կ'ուզէի զինք ծառայեցնել իր կոչումին, կրկէսի մէջ խաղցնելով՝ խաբարանիս հրամաններուն հպատակ:

ՉՈՐՐՈՐԴ ՁԻՆ.— Ընկերներ, մենք իբրեւ ահիպարանոց երկվարներ՝ ազնւականներ ենք, ու պարտինք մնալ ասպետական: Ձեր փափաքները կը գտնեմ անվայել ու անիրազոքօքելի: Ես պիտի բաւականանամ՝ մեր մարդուկին մոռութիւն զարնելով այնպիսի կից մը, որ պահ մը պարէ ահամայ, ապա երկրպագանէ:

Ն. Գ.

(Վերջը յաջորդով)



4. ՄԵՆԵԱՆ

ԿԻՍԱՓԱԿ ԴՐԱՆ ԵՏԵՒ

■ Տխուրի տառափն ձեռքով տակ նրկար մեմախոսութիւն մըն է վարի աղ-
նարկը, սքով Կ. Մեհեմմ փարիզի մէջ տարիքը առած սպասուհիի մը բերմով
կ'անցրապառնայ Արտաստեմանի մեր քիւ մէկ մտահոգութեամ' - *այլապէս*
ժամագրի: Որքա՞ն սրտայոյզ կը հնչեն մեր անցնիւն, պարզ կնոջ մը բերմն
մէջ դրուած պարզունակ այդ բառերը, ազգային մեծագոյն տաղանդ մը անա-
ղանգած ուտեմ: ■

Փողոցի երկփեղկ դրան փակ մասին
ետեւ, ձեռնահիւս սեւ շալ մը ուտերուն,
կանգնած էր ան, երբ կիներ ու ես իջանք
մեր բնակարանին ներքին սանդուղնե-
րէն:

Դարձուց գլուխը, իր թափանցող
ահնարկովը շափեց-չափչփեց երկուքս
եւ, կրկին նայելով դէպի դուրս,

- Եւ՞նթ են՝ ի՞նչ են, աս անձրեւին
փողոց կ'ելլուի՞, - բտաւ ինքն իրեն՝ լը-
ռելի ձայնով մը:

= Հա՛յ է, - չչնջեց կինս ինծի՝ աղ-
նարկելով կնոջ:

Մօտեցանք դրան: Անձրեւը, զոր
չէինք նկատած յարկաբաժնէն իջնելէ ա-
ռաջ, կասեցուց մեզ եւս դրան առջեւ:

- Պիտի սպասենք, ըսի կնոջս, եւ,
ընդոստ, քայլ մը ետեւ դացի՝ դերձ մը-
նալու համար ջուրերէն, զորս ցայտե-
ցուց փողոցէն սուրացող ինքնաշարժ մը:

Տիկինը, որ վաթսուին մօտ կ'երեւ-
ւէր, գլուխը յանկարծ դարձուց մեզի
եւ, քիչ մը շփոթ,

= Զեհէր հայ էք, - ըսաւ ժպտուն,
- եի՛շ վրանիդ չգրի:

- Ինչո՞ւ, - ընդմիջեցի նոյնպէս
ժպտուն, - հայու չե՞նք նմանիր:

= Ի՛հ, տիկինը՝ քիչ մը, - վրայ

բերաւ՝ կարծէք սխալ մը պարտկելու
փութկոտութեամբ:

- Իսկ ե՞ս:

= Ի՞նչ մեղքս պահեմ, դուն բնաւ
չես նմանիր հայու:

Եւ, խօսքը ուղղելով կնոջս,

- Անանկ չէ՞, տիկին, - ուղեց առ-
նել անոր հաւանութիւնը:

Յետոյ ձեռքը տարաւ գլխուն, թաշ-
կինակովը, զոր սեղմեր էր ափին մէջ,
սրբեց թրջուած մազերը, եւ՝

= Ձեռնանա՛ս, միւսիւ՛, - կրկին
դարձաւ ինծի, - հայ ըսածդ զալիլալէ
չ'ելլեր ես... Ամէնքս ալ Աստուծոյ ըս-
տեղծածներն ենք. քիթը բերանը չէ կա-
րեւորը, սի'րտով հայ ըլլալու է մարդ:

- Զի՛չդ է, - պատասխանեցի, - հա-
յու նմանիլը չէ կարեւորը, ո՛չ ալ՝ հայ
ծնած ըլլալը. այլ՝ հա՛յ ապրիլը:

= Հապա՞, - բարձրացուց ձայնը՝
մօտենալով ինծի, - ի՞նչ աղէկ ըսի Գի-
թով բերնով Հայեր կան Էի՛ Հայութենէն
բա՛ն չունին իրենց ներսիդին... Դուն
ինծի՛ հարցուր ատանկները:

- Կ'երեւի ծանօթներ շատ ունիս, -
ըսի, - թէ եւ այս թաղը քիչ Հայեր կան:

= Ես աս թաղէն չեմ: Կիրակի
«սոողիթս» օրն է. էկայ՝ մեր գեղացի-

ներէն մէկը տեսնելու: Ետեւի փողոցը
կը բնակի:

— Պրուսայի շրջաններէն ես:

— Ինչէն հասկցար, — յանկարծ ցը-
ցեց պլուրը:

— Շալէ'դ:

Փպտեցաւ գոհունակ, շալը շտկեց
ուտերուն վրայ դուրդուրանքով մը եւ՝

— Մօրս յիշատակն է, — ըսաւ — հօ-
րենական տունէս ա'ս մնացած է. մա-
սունքի պէս կը գողտմ վրան:

— Այո՛, յիշատակները քաղցր են:

— Աղջիկս դըօխս կ'ուտէ քի չգոր-
ծածեմ. փարիզի մէջ ամօթ է, կ'ըսէ.
հո՛գա: Ինչ չէշիտ ուզես կայ աստեղ...

— Ուրեմն համազօրացիներ ալ ու-
նիս:

— Այո՛. աստեղը մէկ կու գամ, հին
օրերը կը յիշենք...

— Զէքիմիլիսնը, Թուրալիսնը...

— Ա'ս ալ գիտէ, նայէ՛, — ողուոր-
ուեցաւ յանկարծ՝ խոշոր բանալով աչ-
քերը, — մեր կողմերէն չըլլա՞նք... հը՞...
Օրթագեղէն են, թէ Սէօլեղէն...

— Ո՛չ, — ըսի, — ջուրին միւս եզեր-
քէն եմ:

— Զէքիմիլիսնէ՛րը, — աւաղեց՝ չար-
ժեւով գլուխը, — տէտենքն մնացած
զէքիմիլիսնը ձեռքիդ ու ինկանք աս
դժոխքը:

— Փարիզի գեղեցիկ է:

— Ինչո՞ւս պէտք փարիզի ազուո-
րութիւնը: Ես քեզի բան մը ըսե՞մ. աս
տեղ զեկիմիլի ալ ճեհիլի քաղաք է: Փա-
րա ունեցողը կոմ ճաշիլ էղողը քաղաքին
տէրն է: չունեցողն ալ ինծի պէս կը չար-
չարուի...

— Առողջութիւն ըլլայ, քոյրի՛կ, —
վրայ բերի, — դրամը ամէն բան չէ:

— Է՛ հա՛, ա'ս ալ չիտակ է, ամմա,
չոր առողջութիւնն ալ... ո՛ւր դառնաս
դրամ կ'ուզէ նէ՛...

Երեսները կը փալիւլէին յղկուած
մարմարի նման: Եւ իր կ'ուր գէմքին
վրայ՝ կարմիրի մը երանգները կը մաս-
նէին անհետացած գեղեցկութիւն մը
գեղջկական: Իր յարաշարժ ու կապոյտ
բիրբուրուն փայլը ուղիմութիւն մը կ'ար-

տայայտէր:

Անհամբեր կ'երեւէր:

— Զուլացած՝ տեղս տեղաւորուիմ,
ըսի, բայց անմիջապէս մէկէն սկսաւ եւ
մտայ այս բայց դունն ներս: Վախնամ
ուշանամ. քառսուն գործ ունիմ ընելիք:

— Տան գործերը կրքեք չեն վերջա-
նար, — մէջ ինկաւ կինս, — միշտ ետեւէն
պիտի վաղես:

— Տանդ տիրուհին ըլլաս՝ ուրի՛շ է,
տիկի՛նս, բայց մեղի-պէսները...

— Տե՛ղ մը կ'աշխատիս:

— Աշխատանք՝ ըսէ, ծեծկուիլ ըսէ՝
ի՛նչ կ'ուզես ըսէ... Ժամանակին տուն-
տեղ ունեցիր տէ, էլիք էկուր էրէկուան
խլէղին հրամանի՞ն տակ չարչարուէ կե-
ցիր... Տուն ու տեղէ, մաքրութենէ
հասկնայ նէ սիրտս չի ցաւիր:

— Ընտանիքի՞ քով ես:

— Այո՛. խրվեքքար ըսելու տեղ՝
ալաֆրանկա անուն մը դրեր են... պօմ
ա դաւ քէն... Ի՞նչ ըսել է՝ գիտե՞մ:

— Աղէկ գէշ ընտանիքի մէջ ես վեր-
ջապէս...

— Ընտանիք ըսածդ ա՛լ... ամա՛ն,
ի՞նչ գիտնամ... հիմակուանները...

— Ինչո՞ւ:

— Կիւլէ էրիկ կնիկ էն... Զեմ գի-
տեր՝ քաղաքը կ'ընէ, դրամը կ'ընէ:

— Հայե՞ր են:

— Այո՛. եւ՛մ՝ քիթով բերնով. հա-
րիւր օտարին միջեւ տեսնես՝ մէկէն
կ'ըսես քի հայ են:

— Քեզի համար առաւելութիւն մըն
է ասիկա:

— Խերով բարով չըլլա՞ր:

— Ինչո՞ւ, — հետաքրքրուեցաւ կինս,
— օտարին հետ աւելի գոռար է անո
չուշտ:

— Անոնց միշակ սօսաթնին հայ է:
Տղաքը ըսես՝ բա՛ւ մը հայերէն չեն գի-
տեր:

— Տան մէջ հայերէն չեն խօսիր:

— Մարերնին կը ձգէ՞. Աքսամ կ'ու-
նենան, կ'ըսէ... Քա՛, Կիւլէիլմ հայե-
րէնին աքսամ ընելը նոր իմացայ... Ե-
թէ հայերէն խօսին, ֆրանսերէնը ֆրան-

սացիի պէս չեն կրնար խօսիլ, կ'ըսէ տի-
կինը, եւ տղաքը կը հեռացնէ քովէս:

— Իսկ հայրենի՞ն:

— Գիտեա՛լ անգամ չ'ուզեր. չէշիտ
մը էրեկը, չէշիտ մը՝ կնիկը: Տղաքը ք-
սեա՝ մէմէ՛ն, մէմէ՛ն ըսելէն վրաս կը
վերնան: Արթըն է, ի՞նչ է՝ կը քաշէ գէ-
հէր...

Պահ մը լռեց: Յետոյ՝

— Ամա՛ն, — վերսկսաւ, — աղէկ քան
չէ՛ ըրածս: Պիտի ըսէ՞ք քի՛ հացերնին
կ'ուտէ, էստեւուն կը խօսի. ամա՛ն, սիր-
տըս կ'էրի: Պազի՛ ես ինծի կ'ըսեմ քի՛
ձկնո՞՛ էրթամ, քաշուի՛մ սենեակս, պա-
տառ մը հացս ուտեմ, նէ՛ տեսնեմ, նէ՛
ալ լսեմ:

— Ո՞ր տեղացի են, — հետաքրքրուե-
ցայ:

— Մեր գեղէն է էրեկը:

— Ուրեմն կը ճանչնայի՞ր տաղուը-
նէ:

— Հարկա՛ւ. կնի՛կն ալ: Էրեկանը հա-
րը ամառ ձմեռ ձին հեծած Պուրսա
կ'երթար կու գար: Ծուռ Աստուրին
թոռն է: Աստուրեանին գետնը նե-
տած՝ «մօտիւն Աստուր» կղած է...

— Իսկ կի՞նը:

— Օվաճըքն է: Մարտիկա՛ դուր են
գիրար: Անկէ հոս՝ չոր հացի մը էտե-
ւէն... Գիտէ՛ք՝ պատերազմի տեսն աչ-
քը փէ՛ք էղողը բեռը շտկեց: Բաներ մըն
ալ կը պատմեն. հայու մը խաղ խաղա-
ցեր են: Իրա՞ւ է, սո՞ւտ է, շար բերա՞ն
է, գիտե՞մ:

— Ի՞նչ գործով կը դրաղին:

— Թախէռլի գործ կ'ընեն: Իրենց
փապրիֆամ կ'աշխատէի. տունին մէջ
վատահիւի մէկը կ'ուղենք, ըսին՝ տուն
առին գիւ: Փապրիֆամ որ տեսնես՝ ափ
ի բերան կը մնաս: Ամէն մէկ մաքիմամ
քանի մը միլիոն կ'արժէ:

— Կրցեր են շահիլ ու պիտի վայե-
լեն անշուշտ:

— Բա, թո՛ղ վայելեն, հէլա՛լ ըլլայ,
— մեղմացուց ձայնը, — մինակ էի...

— Ի՞նչ:

— Ինծի՛ նայէ, միւսի՛ւ, — մտերմու-
թիւն մը գրաւ ձայնին մէջ, — չտեսած

մարդը մէկէն ի մէկ փարա տեսնէ նէ...
Ատ նաւապէ՛ք փարան չկա՞յ, տունէ մը
ներս մտա՞ւ՝ տունին համը հոտը կը
փախցնէ: Երտակը՝ ճունճուղին կաթը
պակաս է տունին մէջ:

— Ուրեմն այդքան հարո՞ւստ են:

— Ճերմակ պապոզակով աշնի՞ն կ'ու-
ղես, կուլիլու՞նա՞ր կ'ուղես... Գիտէ՞ք
քի՛ չէ՞մ ուրախանար. կ'ուրախանա՞մ.
հա՞յ են նէ. ամա՛ն, երբ չըսիքնէն դուրս
բաներ տեսնեմ...

Տեղատարափը կը շարունակուէր:
Շարը կրկին շտկեց ուտերուն վրայ: Ծակ-
տէն ետեւ ըրաւ ինկող մագերուն թելե-
րը եւ՝

— Գամուէցանք՝ մնացինք, — զփո-
հեցաւ:

— Երեւի տիկինը կ'օգնէ ամուսնոյն,
— ըսի, — այստեղ ամէն մարդ կ'աշխա-
տի:

— Փո՛ւ, — քրքջաց՝ բերնին տանելով
թաշկինակը, — պիտի օգնէ՞... Օր մը
օրանց իրարու հետ էղած ունի՞ն... է-
րեկը ի՞ր գործին, կնիկը՝ ի՛ր:

— Ասանձի՞ն գործ ունի տիկինը:

— Նայէ՛ ի՞նչ հոր կը փորէ միւսիւղ,
— դարձաւ կնոջ, — ըսել պիտի տայ ու-
մէն բան... Մատամը օթո՞ ունի, — հեզ-
նական շեշտով մը երկարեց բառը — հատ
մը ունէ՞ր՝ չհանեցաւ. հիմա ամերիքա-
կան մը առած է: Մէքընի օղը աղ-
տոտ է, չեմ կրնար շնչել, կը խեղդուիմ,
կ'ըսէ...

— Քանի որ նիւթական վիճակնին կը
ներէ...

— Ի՞նչ... Կը ներէ լսելով՝ քանգալունը
հագնիլ՝ լերան քիլիկները ասոր անոր
հետ ըսի՛ր ընելո՞ւ էրթալ... Կը վայլէ՞
հայ կնկան...

— Հիմա տունը ուղորական բաներ
են, — ընգծիլեցի՝ ջանալով մեղմել վըր-
դովումը, — աչք գոցէ՛ անցի՛ր. աղջիկդ
չէ՛ վերջապէս... Դուն հանգի՞ստ ես՝
ա՛ն նայէ:

— Լսեցի՞ր, տիկին, — կրկին դար-
ձաւ կնոջ, — աչք գոցէ, կ'ըսէ միւ-
սիւղ... Ըսել է՝ ա՛լ մոռնանք պեղ ու
պատիւ, տուն աւ տեղ... Հայութենէն

ի՞նչ կը մնայ... Հա՞յ կ'ըսեմ էս անանկներուն... Օր մըն ալ ինծի չըսէ՞ք ի, Մարիամ, անունդ գէշ կը հնչէ, տիկիններ կու գան ժառ Փիֆսիս, Մարի պիտի կոչենք քեզ... Արուես պիտի ցառկեց մէկէն: Ինծի նայէ, տիկին Բրաբ, ըսի... Հապա՛, Բրաբ կ'ըսեմ ի՛րեն. Բրաբ է նէ... Ժազլի՛նս ո՛րն է... Հա՛, տիկին Բրաբ, ըսի, ես Աստուծու տուած հացէն վազ կ'անցնիմ, անունէս ու մեռնէս վազ չեմ անցնիր... Մարիամ է կած եմ, Մարիամ ալ պիտի էրթամ... Անունիս մէջ հօրս մօրս ձայներ կան, ըսի, ազգիս ու արուեսիս ձայնը...

Երեսները շառագունեալ էին: Կը հեւար: Եւ ինծի աշակէս թուեալ, թէ մը տապալակեցուած «ժազլիներ» եւ դէմս կեցող Մարիամը երկու սերունդներ էին՝ արիւնով իրարու հարազատ, բայց ըմբռնումներով ու նախախրոթմաններով իրարու հակադիր...:

— Զգո՛ղ հեւար, — հետաքրքրուեցաւ կինը:

— Ի՞նչոք պիտի դժգոհի. մի նեղուիր, Մարիամ, ըսաւ, տեղին պէտք է յարմարինք... Մենք ալ, նայէ՛, մեր անունները... Աղէ՛կ էք բրած, ըսի, գիտես քի Ֆրանսացին կը հաւնի՞ր աս բրածուդ... Անունդ կը փոխես՝ արուանդ կընա՞ս փոխել, տիկին Բրաբ, ըսի... Խորթ կը հնչէ եղբր... Հո՛գս, ըսի, խըրաւ... Ա՛լ չհամբերեցի... Պողոս կապել՝ էրթալս էկաւ... Խաթիբը չմնայ ամա, ըսի, Բրաբը ձգած՝ ժազլին էկած ես նէ հօրդ մօրդ ազլիկը ըլլալէ դադարած ես...

— Ծա՛տ լաւ ըսեր ես, ապրի՛ս, տիկին Մարիամ, — ուրախացաւ կինը:

— Հարկա՛ւ... Նայէ՛, ըսի, սա սալնդ կը տեսնե՞ս: Փառքէ կ'ըսէք, ի՞նչ կ'ըսէք. շարաթը մէյ մը միլիայել կու տաս եւ ֆէլէիմ կտորները ոտքերնուս կը զնենք քի յաահինք՝ չիյնանք... Իշտե՛ ատանկ միլիայի վրայ են կեցած Ֆրանսայի Հայերը, ըսի, կը սահի՞նք կոր, տիկին Բրաբ, մէկիկ մէկիկ կ'իյնան կոր... Կը հապկեմ, ըսի:

— Ի՞նչ պատասխանեց:

— Ի՞նչ պիտի պատասխանէ: Հայու թիւները ե՞ս պիտի փրկեմ, ըսաւ: Հայու թիւները, դուն պիտի չփրկես ամա, դուն՝ քե՛զ, ես ալ դիս պիտի փրկեմ քի Հայու թիւները փրկած ըլլանք, ըսի:

Շունչ տուաւ: Նայեցաւ դուրս: Յետոյ կրկին դարձաւ մեզի եւ ձեռքովը հպկով կնոջն թեւին,

— Մեր գրոց բրոցները եւ խօսողները հիմա բան մը առեր՝ կ'երթան, — վերսկսաւ հեղինակն շեշտ մը ձայնին մէջ, — ո՛ր թերթը բանաս, ո՛ր ճառախօսը մտիկ ընես՝ ազգապահպանում, հայապահպանում... Ասանկի պէս բառ մը... Նոր իմաստ բրին ատ բան ալ: Հայը ե՞րբ ինքզինք պահելու մտաւ ըրած չէ: Նո՞ր է քի կը հատնինք: Մաս մըն էինք՝ զմրայա մօրուքով վարժապետ մը բերին գեղը: Յեղափոխական է կը փոխային: Կոկորդինա պատուել կու տար, աւելի՛ ուժով, աւելի՛ ուժով կ'ըսէր երբ «Տէ՛ր, կեցո՛ղ դու զհայս» կ'երգէինք: Փա՛ռք Աստուծոյ, — դժգոհանք մը դրաւ ձայնին մէջ, — Տէրը պահե՛ց պահպանեց հիմա, բունը աւելած թրու չունեներու պէս, ցիր ու ցան էնք... Ու մենք մեղի կը սրտանք կոր՝ «Հա՛յ, կեցո՛ղ դու զհայս»...: Հապա «Հա՛յ ապրինք, եղբա՛րք»...: Արշակ թագաւորը Պարսիկին զէմ կոռեցաւ Հայը Հայ պահելու համար: Վարդանը Աւարայրի մէջ մեռաւ՝ Հայը Հայ պահելու համար: Մ. Մեարոպ Հայ գիրքը գտաւ՝ Հայը Հայ պահելու համար...: Ու քալէ էկո՛ւր մինչեւ մեր օրերը... Անդրանիկ, Գեորգ Չաւուշ, դաշնակ, հնչակ... Ասոնք ա՛մէնքն ալ Հայու թիւները պահելու, պահպանելու համար չէին... Հայը ե՞րբ աղատած է, միւսի՛ւ, ինքզինքը, իր Հայու թիւները պահպանելու հոգէն... Գիտե՛ս քի նոր բան մը կ'ընեն կոր: Հը՞, — յանկարծ ուղիղ նայեցաւ ինծի, — դուն ալ ատ գրոց բրոցներէն չըլլա՞ս...

— Ե՛ս:

— Այո՛, խօսք խորաթաղ փէ՛ք գըրառ է, — շեշտեց... «Ես», — ամ կ'ընես ամա, ատ ճառերը, յօդուածները

վրա՛ս գրէ... Ատոնք ամէնքն ալ պա-
րապ խօսքեր են... Բառ չա՛տ, շարե-
ցէք իրարու քով... Հանդիպողը հիմա
Հայը Հայ պահելու ելեր է խօսքով...
Ճառ խօսելու տեղ՝ անուն ու լեզու փո-
խողները թերթերուն մէջ ծաղր ու ծա-
նակ ըրէք Տի, Ժաղիւնները Բարս միան,
Ժաններն ալ Օհաննէս... Ի՞նչ տղոց ու
աղջիկներուն ետեւէն ինկեր էք... Ձու-
ռւողները է՛ն առաջ մեծերն են... Տղա-
քը ի՞նչ յանցանք ունին... Ի՞նչ առեւթ
իրենց որ բան սպասէք իրենցմէ... Ա-
մէն բան տունէն կ'ըլլայ, ճի՛շդ է...

= Այո՛:

- Տղան Հայ շինողը մարը պապան
էն. է՛ն առաջ՝ մարը... Ծարիրածը մո-
րուց կ'ըլլայ, կ'ըսէին մեր ծերերը...
Իշտէ Հայն ալ ատանկ է: Մար մը ուզէ
նէ՛ քսան օտարին քով Հայ՝ կը մեծցնէ
իր դաւազը... Կաթին հետ՝ հայերէ՛նն
ալ կու տայ... Ահա՛ն... Հայը ե՛րբ
ուրիշ լեզուներ չէ սորվեր ու խօսեր.
ասորերէ՛նը կ'ուզես, պարսկերէ՛նը կ'ու-
զես, արաբերէ՛նը, թուրքերէ՛նը, Փը-
րանսերէ՛նը, գերմաներէ՛նը... Եւ՛մ՝
Ասորի՛ն, Պարսիկի, Անգլիացիի՛ պէս...
Անա՛նկ է թէ չէ... Այո չե՛ս ըսեր նէ,
- սրտնեղեցաւ ինծի:

= Շատ ճիշդ է, ըսի:

- Օրը օրին, սանկ նանկ ապրուստ
մը ունեցողներէն վախ չկա՛յ, միւսի՛ւ,
-կրկին բարձրացուց ձայնը, - սասնկ-

նե՛րն են Հայութեան արմատը չորցնող-
ները:

= Այո՛, մեծ մասամբ, - վրայ բե-
րի:

Անձրեւը մեղմացեր էր: Այլեւս
միայն կը նժար:

Մօտեցաւ դրան: Նայեցաւ դուրս:
Եւ կրկին դառնալով մեզի,

- Կը ներէ՛ք, - ըսաւ, - զլօխ ցաւ-
ցուցի... Էրթամ: Մինչեւ Փորդ տը
Նէօյի ժամ մը մնալու ունիմ: Ժամը
քանի՞ն հղաւ:

= Վե՛ց, - պատասխանեցի, - եօթ-
նին տեղդ կ'ըլլաս:

- Նայէ՛, մինչեւ Բ անձրեւը չկե-
ցաւ՝ դուրս չելանք: Դո՛ւն, ես, մեզի
պէսները կէս-գոց դրան ետեւ կեցող-
ներն էինք: Ճախիլը կը կենա՞յ: Հազար
ըսէ Բ անձրեւ է՝ կը թրջուիս, մտիկ
կ'ընէ՞: Կը ձուլուինք կո՛ր պոռալը ա-
տո՛ր կը նմանի... Կրնաս նէ աս գոց
դրան էտեւը կեցուր տղաքն ու աղջիկ-
ները...

Ձեռքը երկարեց կնոյս: Յետոյ՝ ին-
ծի: Ափովը կրկին շտկեց մագերը եւ ե-
լաւ դուրս:

Նյանք նաեւ մենք:

Ամպերը ցրուեր էին եւ իրիկնազէ-
մի մարմրուն ցուքեր վարդի շափրակներ
կը նկարէին ամպերու յամեցող ծուէն-
ներուն վրայ...

Կ. Մ.

7

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

Պոյ Երէստ

Ճանչցած էին ղերար բարեկամի մը տան մէջ, ամառնային եղանակին բացումը կատարող հաւաքոյթի մը ընթացքին:

Փօլ շատ ալ վարժ չէր այդ աղմկոտ հաւաքոյթներուն. ու, ճիշդը ըսած, շատ ալ չէր սիրէր զանոնք: Ոմանց անյագ տենչը՝ ամէն գնով զուարճանալու, աղմուկն ու իրարանցումը, եւ մանաւանդ հաւաքոյթին մէկ ծայրէն մինչեւ միւսը լաւագոյն ժպիտ մը ցուցադրելու պարտաւորութիւնը՝ ի վերջոյ կը զայրացունէին, կը խրտչեցնէին զինք:

Փօլ ապաստանած էր ուրեմն խաղաղ անկիւն մը, միակ ընկերակից ունենալով իր բաժակը, եւ այնպէս ցոյց կու տար որ իրրեւ թէ կը հետաքրքրուի քիչ անդին նստած մէկու մը շատախօսութիւններով, երբ նշմարեց տանտիրուհին, որ դէպի իր անկիւնը կ'արշաւէր, ետեւէն քաշելով խօրտեաշ աղջիկ մը: Ան ուղիղ իր վրայ կը խուժէր յանդիմանական շարժումներով:

— Ահա քեզի վարուելակերպ... պայթեցաւ տանտիրուհին, Փօլին քով հասնելէ ետք: Առ քեզի ձեւեր...: Թանգարանի՞ մը մէջ ենք արդեօք:

Յետոյ, մէկու մը նման որ յանկարծ կը յիշէ թէ պարտականութիւն մը ունի կատարելիք:

— Ահա Սօնիան, ըսաւ, դառնալով խարտիչահեր աղջկան, եւ փոխան ծառայութեան... ահա Փօլը: Ու հեռացաւ հովի պէս արադ, պարտականութիւնը կատարած մէկու մը գոհունակութեամբ, չմոռնալով սակայն ազդարարել:— Բայց

մանաւանդ չփրկոտփայէք. պարեցէ՛ք, պարեցէ՛ք, պարեցէ՛ք...

Առանձին մնալով աղջկան հետ, Փօլ վարակուեցաւ յեղակարծ ու յիմար անձկութեամբ մը: Ինք, որ այնքան համարձակ էր սովորաբար, այնքան ինքնավստահ... յանկարծ ահա, չէր գիտեր ո՞ր բառարանին դիմել, ո՞ր ջրհորէն քաշել իր բառերը: Անկասկած որ պիտի ընկեր մէկ լռութեան վիճի մը մէջ, եթէ գրաւիչ ու քաղցր այդ ձայնը օգնութեան չհասնէր իրեն:

— Յետոյ, չպարե՞նք այլեւս. չլսեցի՞ք տանտիրուհին հրահանգը:

— Գիտէ՞ք ինչ...

Պէտք չունեցաւ բացատրութիւններ տալու: Խարտիչահեր աղջիկը քաշած տարած էր զինք արդէն փխտիմ վրայ, ու կը հաստատէր, ի վնաս իրեն թէ ինչ վարպետի հետ էր գործը...: Ի հարկէ, Փօլ ամէն ճիշդ կը թափէր, հազար ներողութիւն կը խնդրէր, չկրնալով սակայն չկոխկռտել խեղճ աղջկան փոքրիկ ոտքերը:

— Ներեցէք ինձի, ըսաւ, պարը հաղիւ աւարտած. ու կարօտով լեցուն նայուածք մը նետելով դէպի իր անկիւնը՝ — տեսա՞ք թէ ի՞նչ պարող եմ:

— Բայց AS մը, ծաղրեց աղջիկը, կեղծ հիացումով մը, իրական AS մը:

— Կրնաք ծաղրել, ընկճուեցաւ Փօլ. պէտք է խոստովանիմ սակայն, թէ շատ ժամանակ չեմ ունեցած: Եւ արդէն, եթէ նոյնիսկ ազատ ժամերու ճոխութեան մը մէջ լողայի, ոչ իսկ չիւղ մը պիտի

ուզէի զոհել թմրուկներու ձայնով քաշել սորվելու համար: Կացէք, գացէք խրնդ-րեմ, եւ ձգեցէք զիս առանձին: մի մեռ-ցընէ՛ք ձեր երեկոն, ինծի նման անճարա-կի մը հետ: որսւ՛ր կը յորդի լաւ պա-րողներով:

Սակայն, տարօրինակ երեւոյթ, խարախահեր աղջիկը չէր իսկ բարկա-նար: Երկարօրէն կը դիտէր զինք, չա-րանճի նայուածքով մը, յետոյ, կրկին քաշելով զինք դէպի փխտ:

— Ի՞նչ կարեւորութիւն ունի, ի՞նչ նշանակութիւն ունի, ստատանա՛ն տանի բոլոր լաւ պարողները, եկէ՛ք, այս իրի-կուն միայն ձեզի հետ պիտի պարեմ: Քաջ առաջ, օ՛ն...

Այդ բոպէէն սկսեալ, քարքին իմաստ մը առաւ Փօլին համար, եւ առին ժամե-րը արժէք: Ինչքա՛ն բարի էր այս խարտ-եալ աղջիկը, ինչքա՛ն քաղցր... եւ այն-քան պա՛րզ, անմեղունակ... Ի՞նչ հոգա-ծու էր զիմացիներն հանդէպ, զիմացիներն հարցերը լուծելու, իրը ընելու:

Այլ չզատուեցան իրարմէ, հաւաքոյ-թին ամբողջ եւեռութեան. անհոգ ամէն բանի եւ ամէնուն հանդէպ՝ աւելի կը քաշէին քան կը պարէին, զուարճանա-լով ոչինչով մը իսկ:

Ոչ իսկ պար մը փախցուցած էին, ու երբ նորի մը կը սկսէին, Փօլ զգաց որ իր պարընկերը կ'ուժաթափուի, կը կքի: Աղջիկը կանգ առաւ, գունատ. ձեռքը տարաւ կուրծքին ու հազիւ լսելի ձայ-նով մը պաղատեցաւ որ զինք տանի դուրս, պատշգամ:

— Մի՛ մտահոգուիր, ըսաւ, անգամ մը որ դուրս ելան. ներսի բազմութիւ-նը, տաքը... մարդ կը խեղդուի ներսը:

Յուշիսի այդ օրը բացառիկ տաք ե-ղած էր, եւ իրիկունը, հակառակ իր զաղջութեան, դանդաղ ազատագրում մը կը բերեր իր հետ: Դիմացը, հորիզոնին վրայ, լինէրը հիւանդազին զոյներ հա-զած էին: Երեկոն անիրական թափանց-կութիւն մը կու տար անոնց եւ ամբողջ զանգուածով կը միացնէր զանոնք ծիրա-նի զոյն երկինքին:

Սօնիա յենած էր պատշգամի եր-

կաթներուն, Փօլի կողքին, ամբողջովին կողքին, ու վերացած կը թուէր տեսա-րանին վահութիւնէն:

Իրօ՛ք անհանգիստ եղած էր, թէ ոչ այդ դասական ռազմավարութեան դի-մած էր, իրեն հետ առանձնանալու հա-մար: Փօլ չփորձեց ճշդել. կը բաւէր ըզ-գալ, որ ան հոն էր, քնքուշ, լուռ, վեր-ջացող օրունան մէջ, անփութօրէն կըռթ-նած իրեն:

— Ինչքա՛ն տխուր են, ըսաւ աղջի-կը, կարծես ինքն իր հետ խօսելով. ինչ-քա՛ն տխուր են երեկոները որ կ'իջնեն, մերջացող բաները...

— Տիուր է, երբ առանձին ես, ուզեց նշել Փօլ. տխուր է, երբ ինքզինքդ մի-նակ կը զգաս:

— Այդ ճիշդ է, շատ ճիշդ պոսթիկաց յանկարծ աղջիկը, իր մտածումներուն մէջ անակնկալօրէն թողաղբածուած մէ-կու մը պէս. բայց... մարդ միեւնի է, միշտ միեւնի: Յետոյ, յոգնած շէշտով մը՝ «Ինչքան ալ պայքարիս, շարունա-կեց, ինչքան ալ մաքաւիս շրջապատ մը ստեղծելու համար դուն քեզի, բարեկամ-ներ ունենալու համար, ոչինչ կրնայ ար-դիւնել որ ամէն իրիկուն վերադառնա ինք-զինքդ աւելի միեւնի քան երեւիցէ, որ զգաս ինքզինքդ սա դիմացը արածող կո-վուն պէս, նահատակի աչքերով սա կո-վուն...»

Յանկարծ լուեց աղջիկը, մէկու մը պէս՝ որ բոսած է պէտք եղածէն աւելին. ու լռութիւնը կրկին տեղաւորուեցաւ ի-րենց երկուքին միջեւ:

«Առանձին... Ա՛ն... կը կրկնէր Փօլ ինքնիրեն: Ա՛ն, որ ճկտիթի մէկ շարժումով հիացողներու եւ թրկնա-պահներու գունդ մը ամբողջ կրնայ ի-րեն վիճուորագրել ու ողողել այդ դուն-դերով առանձնութեան յետին բոպէ մը անում: Ա՛ն, այդքան թարմ, այդքան դեռատի, այդքան խարտեալ ու երջա-նիկ, այդքան չէն, ուրախ... Ի՞նչ ա-ռանձնութիւն, ի՞նչ լքուածութիւն. խո-րամանկ խաղ մը չէ՞ր միթէ այս ամէնը, կամ երիտաւարական քմայք մը պար-զապէս ինքզինք... Ծեր կոշիւնը:

Հապա եթէ ճշմարիտ էր, եթէ իրաւ առանձին էր, իրաւ... անգրադ, այս խարտեալ աղջիկը՝ ի՞նչ անխոտոտվանելի հեռանկարներ այն տունն, Աստուած իմ, ի՞նչ արբեցուցիչ պատեհութիւններ... Բայց տակաւին պէտք չէ՞ր անապարել, շարժիլ արագ, կանխելու համար աւելի ճարպիկ մէկը, որպէսզի ան չիւրացնէր իրմէ առաջ եւ այդ հեռանկարները եւ այդ քաղցր... պատեհութիւնները:

Այս մտածումներուն մէջ թաղուած՝ Փօլ յարձակողական ծրագիրներ կ'որոնար, երբ աղջիկը անակնկալ հարցումով մը.

— Կը հաւատա՞ք բարեկամութեան:

— ...

— Ըսել կ'ուզեմ բարեկամութեան կնոջ մը եւ տղամարդու մը միջեւ, մաքուր եւ անկեղծ բարեկամութեան: Նըման այն բարեկամութեան որ նոյն սեռին պատկանող երկու հոգիներ եղբայրաբար իրար կը կապէ. կը հաւատա՞ք, ըսէք:

Եւ առանց ժամանակ տալու Փօլին որ պատասխան մը տեղաւորէ՝ «պիտի կրնայի՞ք նման բարեկամութիւն մը պահել, օրինակի համար... ինձի հետ:

Բարեկամութիւն, իրեն հետ... Բայց ի՞նչ կը բարբառնայ խորտիւահեր սա անմիտը: Միթէ՞ այնքան միամիտ է կարծելու համար որ նման բան մը կը մերժուի իրեն:

Ճիշդ է որ պահանջուած բարեկամութեան տեսակը մտածել կու տար. «մաքուր» եւ «անկեղծ» այդ ածականները ոչ յուսադրելի էին եւ ոչ ալ օգեւորութիւն ներշնչող: Բայց ետ մուրթակ ըսուածը տակաւին կը սընտաւանէ՞ այդչափ պարզ արարածներ որոնք չգիտնան խաղալ «մաքուր» ու «անկեղծ» այդ բառերուն հետ, ինչպէս նաեւ անոնց օգգակից մօտ ու հեռու բոլոր բառերուն: Գոյութիւն ունի՞ն տակաւին տխմարներ, որոնք իրենց բառապաշարին մէջ չունենան նմանօրինակ բառեր, դորձածելու համար զանոնք եթէ ոչ նուազ «մաքուր», եթէ ոչ նուազ «անկեղծ», գէթ աւելի... արդիւնաւոր

նպատակներու համար:

Եւ ինքը, Փօլ, այդչափ տխմար, այդչափ է՛շ պիտի ըլլար մերժելու համար նման հրաւէր մը, վանելու համար այս խարտեալ, այս... խոտոտվանելի բարեկամութիւնը:

Բառեր պէտք չեղան որպէսզի աղջիկը հասկնայ որ տղուն կողմը համաձայն էր, համակերպած. մէկըի թողած անշուշտ այդ «մաքուր» ու «անկեղծ»:

Եւ իսկոյն, անպաստի տեսարաններու վրայ բացուող պատուհանի մը նման, աղջիկը բացուեցաւ մտերմութեան նոր էջի մը պէս, լի՝ անսահման քնքշութեամբ: Երկար մնացին պատշգամբին վրայ, անտարբեր դէպի աղմուկը սրահին, ուր պարերը իրարու կը յաջորդէին դժոխային կշռոյթով մը:

— Աւելի լաւ կ'ըլլայ որ մեկնինք, ըսաւ Սօնիա ժամանակ մը ետք, քիչ մը նայ մոռնայի քեզի իմաց տալու թէ՛ վաղը, Կիրակի, փիքսիքսի պիտի երթանք ամէնքս:

— Ուրե՞ք, այդ ամէնքը:

— Մեր խումբը: Պիտի մեկնինք կանուխէն, դուն, ես, միւսները. կը ներկայացնեմ զանոնք քեզի:

Եւ երբ Փօլ բողբի շարժում մը կ'ընէր՝ «Պիտի գաս չէ՞. անպայման պիտի գաս, այլապէս կը հրաժարիմ ես ալ, շարունակեց Սօնիա, ինչքան հաճելի պիտի ըլլայ»:

Միայն հաճելի չեղաւ այդ փիքսիքսը, եղաւ հոյակապ: Արեւածագէն մինչեւ մայրամուտ եւ մինչեւ ուշ գիշեր, Սօնիա իր կողքին եղաւ, բթաչափ մը իսկ չհեռացաւ իր ջովէն: Անհուն քաղցրութեամբ գուրգուրանք մը ծնաւ Կիրակիի այդ տրեւուն հետ ու պարուրեց Փօլը մինչեւ ուշ գիշեր:

Սօնիա իր կողքին էր միշտ, ուշադիր ու պատրաստակամ: Եւ այնպիսի հետաքրքրութիւն մըն էր Սօնիային հետաքրքրութիւնը Փօլին հանդէպ, այնպիսի քաղցր հոգածութեամբ լեցուն ու շարունակութիւն մը՝ որ չէր կրնար չչոյնել էրիկ մարդու հպարտութիւններուն ամէնէն փորձառուն անգամ: Մահաբանայի

Կիրակի մը վերջապէս...: Շրջանակի մէջ առնուելու եւ յաւիտեանս պահուելու արժանի Կիրակի մը, բացի քանի մը մանրամասնութիւններէ անշուշտ, քանի մը մանր կէտերէ՝ որոնք բիծեր կը նետէին այս փայլուն օրուան վրայ ու կը հալածէին Փօլի մտածումը այրող ափսոսանքի մը պէս:

Նախ այն կիպիչ մտածումը թէ պէտք էր այս ամէնը թողուլ վաղն առաւօտ իսկ, կ'ընէր զինք օտարական մը այդ խումբին մէջ: Անապարտ թուրիստ մը կարծես՝ որուն լուսանկարչական մեքենան միայն կ'ընայ մասնակցիլ այցելուած վայրերու կեանքին եւ որ իր վրէժը կը լուծէ յիշատակէ՝ զիջելով: Ի՞նչ կըրնար ընել, իր ընտրած գործը զրկած էր զինք ազատութենէ եւ շարաթը անգամ մը միայն, կարճատեւ անգամ մը կ'ազատագրէր զինք: Որով պէտք էր յաջորդ օրն իսկ վերսկսէր սովորական ու սովորական գոյութիւնը օրերուն, մինչ հոս, այս շուաշուարող բազմութիւնը իր տըրամագրութեան տակ պիտի ունենար ամէն ինչ... եւ ամէնքը:

Կար յետոյ՝ այն երիտասարդ ու զրուարթ Ռոսէն որ առաւօտուն Սօնիան ներկայացուցած էր իրեն որպէս խումբին ամենահամակրելին. սա Ռոսէն, այնքան ուշադրաւ ու ներկայանալի եւ որ այդ ամէնուն վրայ հոյակապ օթօ մըն ալ ունէր. իրը եղող, մի միայն իբր, սեփական օթօ մը, որ կը շրջանէր քեզ առջին իսկ ակնարկով, որ կ'ընդունէր քեզ իր վայելչութեան ամբողջ ծանրութեամբը: Աս Ռոսէն որ ամէն ինչի վրայ արհամարհանքով նայելու երեւոյթ մը ունէր, եւ որ սակայն նուազ փնտրութեամբ չէր բռնուր ինչ կողմէ ու մանաւանդ Սօնիայի...:

Երեկոն շուտով իջաւ այս փիլիսոփայ Կիրակիին վրայ: Վերադարձի պատրաստութիւնները աւարտելէ ետք, Ռոսէն առաջարկեց Սօնիային, իր օթոյնով վերադառնալ:

— Չէ, շնորհակալ եմ, Փօլին հետ պիտի երթանք:

— Լաւ, լաւ, հասկցանք. նետեց միւ-

սը. այս ֆրէնտը ալ բեր, տնոր ալ տեղ կ'ընենք:

Այս սակարկութիւնը հեռու էր Փօլին անձնասիրութիւնը շոյելէ: Պիտի նախընտրէր ամբողջ մարաթոն մը քալել, քան թէ ընդունիլ չքեղ առատաճեռութիւնը սա նորափետուր Ռոսէին: Սակայն, Սօնիա արդէն տեղաւորուած էր ետեւի նստարանին վրայ, եւ զինք իր քով կը քալէր:

— Լաւ է, չէ՞. կը փոփոար Սօնիա. արդէն իսկ կ'ընեն, թէ իմ այս ֆրէնտս ես. լաւ չէ՞, ըսէ՛:

Գիւղ հասնելէ ետք, Սօնիա խնդրեց Փօլին, որ ընկերանայ իրեն մինչեւ իրենց տունը. ու հոն, իրիկուան կիսամութին մէջ, իրենց տան պարտէզի վանդակորմին առջեւ, երկարօրէն պահեց զինք, պատրուակելով թէ ըսելիք ունի:

Ըսելիք ունէր, այո, յայտնի էր. սակայն բաւական կը չարչարուէր սկսելու համար. այդ ալ յայտնի էր. եւ, կարծես ջանալով շփոթութիւնը ծածկել՝ «Ուրեմն վաղը կը մեկնի»...:

Ուշ էր, մութը կոխած էր արդէն. օդառնելով խաւարէն, շարճնի, պզտիկ սատանաներ սողոսկած էին Փօլի մտածումէն ներս:

— Ի՞նչ կը սպասես, կը փոփոար անոնցմէ մին, չուրջդ գիշեր չէ՞, չօգտուի՞ս: Գիշերը ի վիճակի է պաշտպանելու ամէնէն քնուր գեղումներն անգամ, ամէնէն խենթերն անգամ...:

— Խեղճ՝ ալ արարած, հեղճօրէն կը ծիծաղէր ուրիշ ձայն մը. ինչո՞ւ կը կարծես որ քեզ պահեց քովը, մինչեւ այս ժամը... Ինչո՞ւ չես օգտուիր ստուերներուն մեղսակից պաշտպանութիւնէն...:

— Բայց ինչքան ապուշ ես... կը ծաղրէր ուրիշ մը. խեղճուկս... եթէ միայն կարենայի տեղը ըլլալ...:

Սատանի անիծեալ ծագերը այնքան բաներ փոփոացին, այնքան հեպեցին, վերաւերեցին... Այնպէս մը ըրին՝ որ Փօլ այլեւս պարտաւորուեցաւ գործի անցնել:

Այդ ըրպէն սկսեալ ամէն ինչ խառնաբառեցաւ եւ դէպքերը կայծակի արա-

գուծեամբ իրարու յաջորդեցին: Փօլ մօտեցաւ աղջկան, հակեցաւ անոր վըրայ, չրթները փնտռեցին Սօնիայի չրթները, հանդիպեցան ջրին եւ ի վերջոյ դրեթէ հասած էին իրենց նպատակին, երբ յանկարծ, աղջիկը եւ մղեց գինջ:

— Բայց, ի՞նչ ունիս Փօլ, ի՞նչ պատահեցաւ քեզի:

Փօլ, ամօթահար՝ վերադառաւ ինքզինք: Պիտի նախընտրէր փշուր փշուր ըլլալ եւ թաղուել, քան թէ զգալ ինքզինք այդքան փոքրացած, այդքան աշարք...:

— Ներողութիւն, դառաւ քաջութիւնը միմեջեւ, ներողութիւն:

Կը պատրաստուէր փախչելու, երբ Սօնիա, շարժումով մը կեցնելով գինջ, երկու ձեռքերը առաւ ձեռքերուն մէջ, ու ջերմութեամբ սեղմելով՝

— Բայց ներողութիւն խնդրելու պէտք չունիս, Փօլ. դէ՛ ինչ քան մը չըրիր. եւ վարանոտ ծայրով մը՝ — քեզ՝ Փօլ, ըսէ՛ թէ բարեկամ պիտի մնանք, մենք, երկուքս. ըսէ, շուտ ըսէ:

Եւ մինչ Փօլ դերեզմանային լռութիւն մը կը պահէր՝

— Նայէ, շարունակեց Սօնիա. խոստում մը պիտի տաս ինծի, հիմա. երգում ըրէ, որ բարեկամութիւնդ պիտի պահես միշտ, ինչ ալ պատահի: Խոստացի՛ր Փօլ, խոստացի՛ր:

Այդպէս ուրեմն, բարեկամութիւն, միշտ բարեկամութիւն: Այո, անշուշտ, ինչպէ՛ս կըցիւր էր մոռնալ... Բարեկամութիւն, «մաքուր» բարեկամութիւն, «անկեղծ» բարեկամութիւն...:

Ասոր համար էր ուրեմն, որ մինչեւ այս ուշ ժամը պահած էր զինք: Կորցելու համար իրմէ, բարեկամութեան երգում մը... Այո, այո, ինչո՞ւ չէ. բարեկամութիւն, եղբայրութիւն, մաքրութիւն, անկեղծութիւն, եւ մնացեալ բոլոր աւետարանական նշանախօսքերը. ինչո՞ւ չէ: Այդ բաները մեծաքանակ կը ծախուին, այնքան աժան էն, այնքան հասարակ...:

«Բայց եւ այնպէս, տարօրինակ չէ՞, կը մտածէր Փօլ, բաժնուելու պահուն:

զաւեշտական չէ՞, որ այդքան կատաղօրէն հետամուտ ըլլայ այդ հասարակ բաներուն. կառչի այդ թշուառութիւններուն»:

»

Յաջորդ կիրակի, Փօլ դառաւ Սօնիան, հոն ուր բաժնուած էին իրարմէ: Միեւնոյն մանդակորմին առջեւ, կոթնած նոյն ծառին: Մածուկ դոհունակութիւն մը զգաց, տեսնելով որ աղջիկը միեւնոյն հագուստը հագած էր, կարծես յաւելեալ ապահովութիւն մը տալու համար իրեն, հաւատարմութեան նոր փաստ մը: Ու եղաւ այնպէս, որ կարծես բնաւ քան մը փոխուած չէր, կարծես բնաւ բաժնուած չըլլային իրարմէ, հեռացած չըլլային:

— Ինչքան կարօտեցայ քեզի, անպարեց ըսել աղջիկը, եթէ դիտնաս թէ ինչքան փնտռեցի ներկայութիւնդ: Չար, ներելի՞՞ է այսքան երկար բացակայիլ:

Ձանք ու ճիգ թափած էր առաջուց պատրաստելու օրուայ յայտագիրը: Մանրամասնօրէն պատրաստուած յայտագիր մը, որ կ'օգտագործէր ամենայն տին վայրկեաններն իսկ, օրը սահմանող վերջին կոտորակներն անգամ:

— Օրը մեզի կը պատկանի, ըսաւ Սօնիա ճառագայթող զուարթութեամբ մը: Այնպէս մը կարգադրած եմ որ մատ մը իսկ չհեռանանք իրարմէ, մնանք միասին ամբողջ օրը: Ու, շարահանձի՛ր՝ «կը յուսամ անհաճոյ չէ պարոնին, չէ՞»:

Առաւօտը անցուցին մազլիցելով մերձակայ բլուրները: Երկուքը առանձին: Կէսօրին, յայտագիրը կը նախատեսէր ճաշ՝ աղջկան տունը. «Առիթէն կ'օգտուիս ծանօթանալու համար մերիններուն, ըսած էր Սօնիա. պապան կ'ուզէ անպայման ճանչնալ քեզ»:

Կէսօրէ ետք, պիտի երթային տիար Թոփէին, փայլփլուն օթօն ունեցող պարոնին: Փօլ շատ ալ խանդավառուած չէր յայտագրին այդ մասով, առանց սակայն կարենալ խոստովանելու տոբիկա: Սա չփայցուած ձագուկը վստահութիւն չէր ներշնչէր իրեն, բնդհակառակն: Այդ չփայցածը, այդ չըլլուն պերճանքը, մնա-

յուն վտանգ մըն էր իր աչքին, կայուն վտանգ մը, Սօնիայի կապակցութեամբ: Փօլի ճիգերը սակայն ապարդիւն մնացին. պատրուակ մը չկրցաւ դռնել, չկրցաւ խուսափիլ, ու գացին միասին այդ փաթեթիմ:

Ռոմէ տէր ու տիրական էր հոն, կարեւոր ու իշխող անձնաւորութիւն մը. հաւաքոյթին առանցքն էր ան կարծես: Անմիջապէս շրջապատած էր Սօնիան, մասնաւոր, տեսանելի հոգածութեամբ մը, զրեթէ բռնադատած էր զայն ու կը պարէր հետը անընդհատ: Կը պարէր անվերջ Սօնիայի հետ, յետին, անկարելորդ ուշադրութիւն մը միայն շնորհելով Փօլին: Գէշ-գէշ բաներ սկսան անցնիլ Փօլի միտքէն: Յանցաւոր էր հաւանաբար այդ պէշ մտածումներուն համար, նոյնիսկ կը յանդիմանէր ինքզինք կարգ մը կասկածներ հիւրընկալած ըլլալուն համար: Եւ սակայն, Սօնիայի վրայ ոչ մէկ իրաւունք, ոչ մէկ առանձնանորհում թոյլ չտալով իսկ իր անձին, Փօլ չէր հոնդուրժեր. երկրորդական, հալու տանելի աւարածի մը տեղ դասուելու այս կացութեան: Որով, քաղաքավարութեան ու կենցաղագիտութեան բոլոր իր պահեստները հասցնելէ ետք, Փօլ հասաւ այն կորակացութեան թէ լաւագոյնը ձգել հեռանալն էր: Պէտք էր հեռանալ ինք, ձգելով որ միւսները զուարճանային ազատօրէն: Պատրուակելով անակնկալ անհանգստութիւն մը, ուզեց ներողութիւն խնդրել Սօնիայէն ու մեկնիլ:

— Չի կրնար ըլլալ, բողոքեց աղջիկը, միասին եկանք, միասին ալ կը մեկնինք:

Դուրս էլլելէ ետք, երկար ատեն Փօլ երեսը կախ պահեց, յուսալով որ Սօնիա կը հետաքրքրուի իր անտրամադրութեան պատճառներով. սակայն ի զուր, Սօնիա անտեղները չէր ու ոչ իսկ պզտիկ փափաք մը կը մատնէր հարցութիւններու:

— Դիտե՞ս Սօնիա, որոշեց վերջապէս խօսիլ, խոստովանութիւն մը ունիմ:

— Իրա՞ւ:

— Իրաւ, այո, իրաւ: Երբեք աւելի առողջ չեմ եղած քան այս բոպէիս: Հերքելէս ի՞նքն անգամ այնքան առողջ ե-

ղած չէ որքան ես, հիմա:

— Հերքելէ՞ս: Հա, հա, հա. Հերքելէ՞ս...:

— Բայց, կատակ չեմ ընել Սօնիա. կ'ուզեմ պարզապէս խոստովանիլ. հիւսանդ ըլլալու համար չէր որ կ'ուզէի հեռանալ:

— Հա՞, իրա՞ւ: Ուրեմն կը կարծես թէ չե՞մ գիտեր. խենթուկ:

— Կ'ըմբռնեմ, կը հասկնամ. աչքդ բան չի փախիր... Բայց ես ալ սկսեմ եմ դարգանալ, ես ալ սկսեմ եմ հասկնալ... զուն ու Ռոմէն, օրինակի համար...:

— Լա՞ւ, լա՞ւ, կը բաւէ. կտրեց խօսքը Սօնիա, մայրական չեւտով մը. ա՞յդ է ուրեմն ամբողջ գիտութիւնդ: Երեխայ ես, խեղճ Փօլ: Հարկ կ'ա՞յ խմացնելու քեզի, թէ այդ Ռոմէն բան մըն ալ չէ ինծի համար, պարզ բարեկամ մըն է միայն: Պէտք կ'ա՞յ տեղեկացնելու, թէ ինծի համար կարեւորութիւն ունեցողը դո՛ւն ես, քո՛ւ բարեկամութիւնդ: Հաւատա ինծի Փօլ, միւսը հոսարակ բարեկամ մըն է միայն, պարզ բարեկամ մը, բայց ոչ քեզի պէս բարեկամ մը:


— Բայց, խենթեցնող չէ՞, պայթեցաւ այլեւս Փօլ: Եւ բարեկամ մը, ան ուրիշ բարեկամ մը միայն, եւ ամէնքը, ամէնքն ալ բարեկամներ: Սոստովանիմ, որ կուտ մը անգամ հասկցած չունիմ այս տիեզերական բարեկամութեան խնդիրներէն. կ'երգնում որ բան հասկցած չունիմ, բացարձակապէս ոչինչ, ոչ մէկ բան:

— Այսպէս աւելի լաւ է Փօլ, պատասխանեց Սօնիա, հանդարտ ու հաւատարմ. աւելի լաւ է բան չհասկնալ ու զոհանալ ներկային մեզի տուածովը:

Այս ըսելով, քաշեց տարաւ աղան հանդիպած առաջին տանգիւնի, որկէ իրենց կը հասնէր նուազախումբի մը կատաղի կշռոյթը:

— Մանենք, մտնենք աւարտելու մեր երեկոն այս վայրենիներու անտառին մէջ:

Բաժնուեցան ուշ դիմերի լաւի եւս բաժնուեցան կամներ:



146-2000

24/12

Թ Ա Ղ Ո Ի Մ
ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱԻՈՐԻ

••

Մարմինն անոր պասսանփուեցաւ հողով օսար,
Մինչ նախորդներն անոր փառերը ծածկեցին,
Քառերը սուրը յաւերժագեղ հայրենիքին՝
Որ վերքի պէս անոր սրտին մէջ կը կոտորէ:

Երբ երկինքէն անցան ամպերը հեռագնաց,
Կաթիլ մ'արցունմ չի նկատ անոր շիրմին վըրայ,
Ուր անաւուր սուգը ցեղին կը թանձրանայ
Նահապետի մը փողին պէս լարիւնով թաց:

Բայց հողին մէջ օսար պիտի բարախէ միշտ
Սիրսն արփային հըրաբորբոք եւ անձկայրեաց,
Բայց լռութիւնը փաղցրախօս եւ երածիւր՝

Օրհներգելով մահուան խորհուրդը պարզուած՝
Գերեզմանին մըռայլ ծոցէն կը հռչակէ
Որ թագաւորը չէ մեռած, այլ կը ննջէ:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Վ Ե Ր Զ Ի Ն

ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԵՐԵՋՄԱՆԸ



Գահ մը քափուր եւ քաղ մը սեւ անոր վըրայ .
Թագ մը ինկած գահին առջեւ . սուր մը կտտրած .
Եւ դարաւոր Յիշատակի մատնան մը բաց՝
Ուր իմ հոգիս ողբերգութիւն մը կը կարգայ :

Բայց հոն ննջողը կը սպասէ որ մէկը գայ .
Մէկը մեզմէ՝ որ զինուորներն ենք Արփային ,
Հռչակելու Յարութեան օր, եւ ծիրանին
Տարածելու լուսաբանդակ շիրմին վըրայ :

Որպէսզի, հրը իջնէ գիշերն, անինններէն
Բարձրրանայ վեհ կերպարանքն հաղացելին ,
Հագնի զըրանն եւ առնէ սուրը երբեղէն ,

Հնչեցընէ անեղ շեփոյն, ու փոքորկին
Գունդերն Հայոց վըրիժարորբ եւ լուսադէմ ,
Ծառանալով անիծապարտ ոսոխին դէմ :

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

9. ՄՆԱԳԵԱՆ

ՄՈՒՐԲԸ

Ցուցատախտակին վրայ վիճարանութեան յատուկ պարագծերի մը յայտարարութիւնը դպաւ աչքիս: Դանդաղեցայ քիչ մը: Նիւթերը պիտի ճշդէին տեղւոյն վրայ, ու փրօֆէսէօր մը պիտի դեկավարէր յարուցուած հարցերը:

Հեռանկարը խանդավառեց զիս: Արձանագրուեցայ անմիջապէս եւ Երկուշաբթի, որոշեալ ժամուն, բաբելական ալլազանութիւն ներկայացնող խումբի մը հետ՝ ներս մտայ նշանակուած սրահէն:

Փրօֆէսէօրը, յիսուսնոց այլ կայտառ մարդ մը, առաջին հերթին հետաքրքրուեցաւ ուսանողներուն ինքնութեամբ: Ու շուտով իր շրթներուն վրայ անոնց դարձան մատըմուզէլ ու միւսիքօ ամբիթէն, իթալի, անկէ, ալլըման, կրէք եւ թուրքի: Կը թուէր թէ ոչ ոք ծանօթ էր միւսին: Կը թուէր թէ անոնք առաջին անգամն էր, որ կը ժողովէին իրարու, ազգային պատկանելիութիւնները բացայայտող փրօֆէսէօրին բառերուն առջեւն էր, որ առաջին անգամ կը բանային կամ կը գոցէին իրենց սրտերը, իրարու առջեւ, իրարու գէմ:

Ուսանողներուն ծանօթանալու իր առաջին հետաքրքրութեան զոհացում տալէ ետք՝ փրօֆէսէօրը սիկարէթ մը վառեց ու լռեց: Իր լռութեան յաջորդեց իրարանցում մը: Ակնթարթի մը մէջ փոխուեցաւ տեսարանը: Շուտով Գերմանացիները քով քովի եկան, Անգլիացիները խօսակցութեան բռնուեցան, Ամերիկացիները ազմուկով լեցուցին մըթնոլորտը, Հօլլանտացի տղան Հօլլանտացի աղջկան ձեռքը ափերուն մէջ առաւ, Իտալացիները երրորդութիւն կազմեցին, տարեց թուրքը երիտասարդ թուրքին ահանջն ի վար բաներ մը սկսաւ փսփսալ: Թուրքերը փսփսալ սկսան...

Պաշարիւնս կորսնցուցի մէկէն: Այդ

խայտարղէտ բազմութեան բարձրացուցած զուարթ աղմուկը սկսաւ նեղել զիս: Կարծես մէկը անիրաւութիւն մը ըրաւ ինծի նոյն պահուն, մէկը հայհոյեց դաւանած սրբութիւններէս մէկուն, մէկը արժանապատուութիւնս վիրաւորեց: Արթուն ու անտեղիտալի գտայ մէջս նորէն այն մարդը, զոր կը ջանայի մոռնալ: Դարձած էի դարաւոր ձայներու անձնատուր նոյն անսրբազրեղի անձը, վիրաւոր ու դաժան, եւ դառնացած օտար տըղոց բարձրացուցած աղմուկէն՝ չեմ գիտեր որո՞ւ գէմ վրէժխնդիր զգացում մը կը շաղախուէր հոգիիս մէջ, պոռալու, կոռելու, արիւնելու տենդ մը կը շրջադայէր արեանս մէջ:

Փրօֆէսէօրը պահ մը ետք խօսք տաւ եւ հարցուց.

— Ձեզմէ ո՞վ կը ճանչնայ Ժան տ'Արքը:

Ամէնքն ալ կը ճանչնային Ժան տ'Արքը: Փրօֆէսէօրը մանրամասնութիւններ ուղեց, Ժան տ'Արքը գնահատող մտածումներ ուղեց: Քանի մը հոգիներ, մէկ երկու նախադասութեամբ, փորձեցին յայտնել իրենց կարծիքները.

— Սուրբ մըն է Ժան տ'Արքը, Սուրբ չէ՛, հերոսուհի է: Իր սրբութիւնը հերոսացուցած է զինք: Ընդհակառակն, իր հերոսութիւնը սրբացուցած է զինք: Իր սրբութիւնը տիեզերական եկեղեցիին կողմէ չէ նուիրադործուած: Հերոսուհի է միայն: Շատ շատ ազգային սուրբ մը...

— Լա՛ւ, ըսաւ փրօֆէսէօրը: Կը տեսնեմ որ մեր նիւթը գտնուած է արգէն: Խօսինք սուրբերու մասին: Ո՞վ է Եսուրը:

Հօլլանտացի յանդուգն աղջիկ մը առտուածահաճոյ արարչներու նպաստով սրբացուց մարդերը: Անգլիացի մը, իր կեանքը ամբողջական զոհադուքեամբ

Աստուծոյ ընծայարեւող անձը սուրբ Հոշակեց։ Սպանացի մը, մարդոցմէ եւ անոնց մեղաւոր աշխարհէն Հեռացուց ենթական եւ ճղնութեամբ պայմանաւորեց անոր սրբութիւնը։ Եւ քարի դործքով Պապին օրհնութեան արժանացած մարդն է սուրբը, յայտարարեց իտալուհի մը։

Փրօֆէսէօրը, յայտնապէս դժգոհ տրուած այս սահմանումներէն՝ աչքով կը հետապնդէր միւս ուսանողները։ Ու երբ ձայն բարձրացնող չէլտու՝ ինք մօտեցաւ անոնց։ Հարցումը ուղղեց Յոյնի մը, յետոյ Շուէտուհիի մը, յետոյ Ամերիկացիի մը։ Սուրբերը այս վերջիններս բերնին մէջ հաւ սկսան աղօթել, նորէն բռնեցին անապատի ճամբան, նուիրուեցան Աստուծոյ, օրհնուեցան Պապին։

— Գուհ, միւսիքս Լիպան, ըսէ նա՝ ինք դո՞ւն ինչ կը մտածես սուրբերու մասին։

— Հոս ըսուածներէն Հետեւցնելով, ըսի, ինծի կը թուի, թէ այս մարդին մէջ ամէնէն իրապաշտը մենք ենք, ըսել կ'ուզեմ ամէնէն մարդկայինը, եթէ կ'ուզէք ամէնէն ինքնատիւը։ Հասարակաց սուրբեր ունինք անշուշտ միւս ժողովուրդներուն հետ, առանձին օրեր յատկացուցած ենք ու կը տօնենք յիշատակը մարգարէներու, առաքեալներու, վկաներու, բայց դուքսն ներմուծուած այդ սուրբերը զիս հազիւ կը շահագրգռեն։ Մնաց որ տնտեսապէս եւ կ'առեմ բոլոր ճգնաւորները որ սուրբ Հոշակուեցան հոս, կ'առեմ կեանքին ու մարդկութեան կոնակ դարձուցած եւ անապատ քաշուած եսամոլները, ազօթելով իրենց կեանքը վերջացուցած բոլոր տնայնաբարանները։ Ասոնք մասնաւոր արժէք մը չեն ներկայացներ նաեւ մեր ժողովուրդին մօտ։ Մենք կը պաշտենք մեր ազգային սուրբերը, մեր երկրին, մեր ժողովուրդին ստեղծած սուրբերը։ Ու այդ սուրբերը անապատներէն չէ, որ եկեղեցի բերած ենք մենք։ Աղօթած կամ ճգնած ըլլալու իրողութիւնը չէ, որ ծունկի կը բերէ մեզ անոնց յիշատակին առջեւ։ Սրբութեան փառապաշտը դրած

ենք անոնց գլխուն, անոր համար, որ խառնուած են մեր կեանքին, ապրած են ժողովուրդին մէջ, ժողովուրդին համար, երբեմն լոյս տալով անոր, երբեմն յոյս տալով, այս կեանքին մէջ, այս կեանքին համար։

— Օրինակ մը, — ըսաւ փրօֆէսէօրը ուրախ, տուր օրինակ մը, յիշէ սուրբ մը եւ խօսէ անոր մասին։

— Սուրբ Մեսրոպը, մեր մեծագոյն սուրբը, որ մեր գիրերուն գիւտը ըրաւ եւ ատոր համար ժողովուրդէն ու եկեղեցիէն սուրբ Հոշակուեցաւ։

— Սուրբ Մեսրոպ, զարմացաւ իտալացի մը։

— Այո՛, Սուրբ Մեսրոպ, մեր բանաստեղծներէն մէկը երկրորդ Աստուած կոչած է զայն եւ մենք ընդունած ենք այդ հանգամանքը։

— Բայց Լիբանանի աշուրներն կազմութիւնը, որքան եւ գիտեմ, անձի մը կապուած չէ, ըսաւ փրօֆէսէօրը աչքերը լայն բացած։

Հարթեցի թիւրիմացութիւնը։

— Օ լաւ, լաւ։ Հետաքրքրական է բացառանշան ժպտելէն։ Ուրի՛շ։ Ուրի՛շ ի՞նչ սուրբեր ունիք։

— Աստուածաշունչի առաջին թարգմանիչները, մեր հին մատենագիրներէն ոմանք եւ շարք մը բանաստեղծներ սուրբ Հոշակուած են մեր մէջ եւ իբրեւ այդ դարերէ ի վեր կը պաշտուին։

— Բանաստեղծներն ալ, հարցուց Գերմանացի մը զուարթ շէշտով։

— Բանաստեղծներն ալ։ Թերեւս ձեզմէ ոմանք լսած են Գրիգոր Նարեկացիին անունը։ Մեր առաջնակարգ բանաստեղծ սուրբը։

— Gregoir de Narek ?, բացառանշան փրօֆէսէօրը հարցական եղանակով։

Շարժեցի գլուխս։

— Կը ճանչնամ։ Մեծ բանաստեղծ է։ Միջնադարու մեծագոյն գէմբերէն մէկը։

— Սուրբ Հոշակելիք նոր բանաստեղծներ չունի՞ք, հետաքրքրուեցաւ Անգլիացի մը։

— Ունի՛նք, ըսի դաւանութեամբ, ունինք։ Բայց ժամանակները փոխուած

են, եւ անշուշտ մեր արժէջափերը նոյնը չին մնացած: Առաջ մեր խոնարհ, բարի, աստուածավախ ապրումները ներշնչեալ եւ զօրեղ եղանակներով Աստուծոյ հաղորդող բանաստեղծները կը ուրբացնէինք, իսկ հիմա կը մտածենք ուրբացնել մեր յուսարարութիւնները ներկայացնող բանաստեղծները, Աստուծոյ եւ աշխարհին հանդէպ մեր ունեցած բողոքները մարմնացնողները, Աստուծոյ եւ աշխարհին հայհոյել գիտցող, հայհոյող բանաստեղծները: Ձար, յիսկալ, խաթող, խածնող բանաստեղծներուն կը պատկանի հիմա առաւելագոյն քուէն եւ ոչ թէ հակադրեցութեան քնադդէն զուրկ ճակատագրապաշտ բարեմիտներուն:

Վերջացուցի ու կոթնեցայ սեղանին: Պզտիկ իրարանցում մը սկսաւ ուրաւահին մէջ, բայց չկրցայ հետեւիլ ո՛չ շարժումներուն, ոչ ալ փոփոխութիւններուն իմաստին: Կը նայէի դիմացս, փրօֆէսէօրին, որ գլխահակ չես գիտեր ինչ բանի մասին կը մտածէր: Պահ մը ետք վերցուց դուրսը ու խուզարկու նայուածքով քննութիւն մը կատարելէ ետք՝ առաջ անցաւ ու կանգ առաւ Թուրքին առջեւ:

— Կարգը քուկդ է, միտէ՞ս Թուրքի, խօսէ նայինք ձե՛ր սուրբերուն մասին: Միտոս սկսաւ արագ ու անհանձն բարախումբի մը:

Թուրքը ալալայած ու ափսոսանքով կը նայէր փրօֆէսէօրին:

— Այո՞ւ:

Թուրքը ուտերը թօթուեց:

— Խօսէ՛:

— Ձեմ գիտեր, ըսաւ Թուրքը չոր:

— Բայց ինչպէ՞ս, զարմացաւ փրօֆէսէօրը մեզի դառնալով, ու խօսելու հրաւիրեց միւս Թուրքը:

Երկրորդ Թուրքը, իր կարգին, ուտերու եւ յօնքերու ելեւէջներով կը ջանար հանկուցել, որ չէր գիտեր, կարծիք չունէր այդ մասին, սուրբերու պատմութեամբ չէր հրապուրուած, չէր պարտապաշտ:

Ժամանակ արուեստ իրենց: Նայեցան իրարու: Իրարմէ օգնութիւն հայ-

ցեցին: Յուսահատեցան մէկը միւսին: Տարեց Թուրքը փորձեց բան մը յիշել, բայց յիշողութեան մէջ բա՛ն չգտաւ, եւ իտասարդը հիդ ըրաւ բերանը բանալու, բայց լեզուն առաջ չգնաց: Անոնք երկուքը մէկ կը ժպտէին միայն, բռնի, յանցաւոր, Թուրք ժպտաներով:

— Այո՛, խօսեցէ՛ք: Դուք սուրբ չունի՞ք:

— Ունի՛ն, ըսաւ յանկարծ անկիւնէն Յոյն տղայ մը պաղարիւն եղանակով մը, անշուշտ թէ ունին, չէ՞ք ճանչնար, օրինակ, Կարմիր Սուլթանը...

— Եւ ի՛նչ սուրբ, ձայնեց Պուլկար երիտասարդ մը:

Տարեց Թուրքը շուտով արթնցաւ: Կողմնակի դարձաւ: Ետ դարձաւ: Բաներ մը մթմթիւց: Երկրորդը հետեւեցաւ իրեն: Ի տես Թուրքերու անզօր կատարութեան՝ միւս տղաքը սկսան ակնարկութիւններ ընել, չարանալ, չարացնել իրենց դէմքի խաղերը:

— Ուրիշ սուրբեր ալ ունին, ըսաւ Յոյնը նոյն անխռով շեշտով, — Թայլամթ փաշան, իր ընկերները եւ ասոնց կարգին եւ ասոնց պէս բազմաթիւ սուրբեր...

Վերջացուց եւ ակնարկը սեւեռեց Թուրքերուն: Հակադրեցութեան փորձ չեղաւ: Լուռ էր փրօֆէսէօրը: Լուռ էին միւս տղաքը: Աղմուկ մը կար հագիթս մէջ: Յոյն տղուն նուրբ հեզմանքը փոխանակ արիւնս զուարթացնելու կռիւի տենդ մը հրահրած էր մէջս: Դող մը կը հարուածէր մարմինս եւ կ'աւզէի կռուիլ մէկուն հետ, զարնել, զարնուիլ: Կը սպասէի ձայնի մը ու ձայն չէր բարձրանար: Լռութիւն մը կար միայն սրահին մէջ. չփոթ մը կար, խռովք մը կար եւ դունաթափ երկու Թուրքեր կային:

— Այո՛, ըսաւ վերջապէս փրօֆէսէօրը, հասկնալի են եղած ակնարկութիւնները եւ յիշուած սուրբերը ծանօթ են ողջ աշխարհին... Բայց աւելի լաւ կ'ըլլայ, որ վերջացնենք, Հանդիսոտ ձգենք սուրբերը, մանաւանդ բանաստեղծ սուրբերը...

Փարիզ

Պ. Մ.

ԳՈՒՏՑԻ Պ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՈՒԺԱՍՊԱՌ, ԲԱՅՅ ՎՃՌԱԿԱՆ

■ Տիկին Գուտցի Պ. Միքայելյան երկրորդ անգամ է որ կ'երևի Բագրեի մէջ: Երիտասարդ գրագիտուհին կը շանայ արուեստի աւելի արդիական ըմբռնումի մը վրայ կառուցանել իր պատմաածիները, *Ժապրէնի* բառկամ աւագին տարր մը մտցնելով անոնց մէջ եւ գրութեան դերը վստահելով *Տիւրքի*ին, Ակադարակամ եւ խորհրդածական կտրելարացոյն մասերը իջեցնելով իրենց մուսկուլայն աստիճանին: *Տիւրքի*ին մէջ է յաճախ որ կը զարգանամ կարծես իր արուեստին միւս բոլոր տարրերը գրեթէ: Արագութեան սիրոյ մեր այս ժամանակներուն, դասական միւլթեր իսկ մեր ձեռով տալու Տիկին Միքայելյանի արդեգրած այս կերպը կը յանձնեմք մեր մեր գրագետու աշաղթութեան: ■

— Աղջիկ, ուսուցիչ մըն է միայն չե՞ս հասկնար. ի՞նչ է ապագան, ինչո՞ւ կը խաբուիս զգացումներէդ. անգամ ուսայ մը համար ամփոփէ ինքզինքդ, եւ վստահ եմ որ պիտի վերադառնաս անցեալի հաւատարակչութիւնդ:

— Հայրիկ, լա՛ւ մտածե՛ր եմ, այլ եւս անդրադառնալու գիճակ չունիմ. կը սիրեմ Արմէնը:

— Այսօր յոգնած ես, հանգի՛ստ ըրէ. վստահ եմ որ վաղը՝ օդը պայծառ ըլլալով, արամազըութիւններդ փոխուին եւ կարողութիւն ունենաս անդրադառնալու հօրդ խօսքերուն: Ի՞նչ է հայ ուսուցչի մը ամսականը. լա՛ւ մտածէ:

— Ճիշդ ասոր համար է որ կ'ամուսնանամ Արմէնին հետ. երբ դրամի պէտք ունենանք, կ'աշխատեմ:

— Աշխատի՛ր... Հայրդ դրամատան տնօրէն... որքա՛ն պատիւ պիտի բերես ինծի. մօրդ ուկորները չդողան գերեզմանին մէջ:

— Ի՞նչ, հայրիկ. մի՛ ստիպեր որ ճշմարտութիւնը պարզեմ. լաւ յիշէ թէ ծնողքդ ինչպէ՞ս տիրացաւ ներկայ հա-

րատութեան: Պատմէ՛, ըսէ՛ թէ մարդիկ ինչպէ՞ս կը տիրանան հարիւր հազարներու: Որոշած եմ քայլերս. այս ւարժ օրն իսկ Արմէնին հետ պիտի ամուսնանամ:

— Այդ օրէն անդին, զաւակս չես կը հասկնա՞ս, կը հասկնա՞ս...

Արփինէ՛՝ զլուխը յեցած պատուհանին, մտաբերելով անցեալը, մտածումները կը շօշափէր: Իրիկուան իննուկէսը կը հալածէր ամէն բարի յիշատակ իր մտապատկերին մէջ: Ժամացոյցին արծաթափայլ սլաքը կը կազար, ու ինքը իր անհամբերութեան մէջ, կը պայքարէր անոր հիւանդագին ընթացքին դէմ: Մերթ ընդ մերթ կը ճնմէր սենեակին ժողորին մէջ, յաճախ ափնար կը նետելով մանուկներուն պայծառ զէմքին վրայ:

Արմէն կ'ուշանար սոփորականին պէս: Երկու ամիս անընդհատ՝ ինքզինք մղած էր ինքնախաբուծեան սահմաններէն ներս: Հիմա, ուժերը դրեթէ սպառած, կեցած էր այդ սահմանին վրայ ու կը պայքարէր ներհակ ուժերու դէմ:

«Ինչո՞ւ կ'ուշանար Արմէն երկու ամիսէ ի վեր. ի՞նչպէս ժողովներու կը գտնուէր... Ինչո՞ւ յանկարծ կուսակցական ըլլալու փափաքը արթնցած էր մէջը»:

Ճերմակ ալաքը կը դիմաւորէր առաւօտը, որուն հանդարտ զնացքին կը միանան ամուսնոյն ոտնաձայնները:

Ընդոստ, կը ցատկէ անկողնին մէջ: Երբորդ զաւկէ մը ծնունդը մօտ էր, Հոգիէն ներս թախիժ մը կը մրոտէր այն կեանքը, որուն հետ հաշտ ապրած էր մինչ այդ: Ամէն իրիկուն կը լսէր դժբախտ մեղմիւ փակուիլը եւ ամուսնոյն յոգնած, բայց ժպտուն դէմքը: Կ'աշխատէր պահել այդ դէմքը՝ մտքին պատահալին վրայ, սակայն յոռի մտածումներ կը քարկոծէին այդ նկարը, ու ինք ուժաւառ՝ կը հեկեկար:

Ամուսնոյն զբաղեցնող լոյսը կը վառէ լոյսի շող մը կ'իյնայ իր մահճակալին վրայ: Թուղթերու խշրտոց մը քայլերը կ'առաջնորդէ ամուսնոյն սենեակը: Գիւնի փոքր դաւաթ մը դէմը, աչակերտներուն տետրակները կը սըրբադրէր:

— Արփի'կ, դեռ քնացած չե՞ս:

Աչքերը ամուսնոյն աչքերուն յառած, կը մնայ անշարժ եւ անպատասխան:

— Արփի'կ, ո՛ւշ է ժամանակը, — կը խօսի ամուսինը հանդարտ ձայնով մը: Կ'ուզէր պոռթկալ այդ վայրկեանին, թափելու ներսէն այն ինչ որ կը չարչարէր ուղեղը երկու ամիսէ ի վեր. Արմէն կը մօտենայ իրեն ու ձեռքը կը տանի որովայնին:

— Արփի'կ, անսահման կերպով ուրախ եմ. որքան երջանիկ զգալու ես. չառա՞ր կը տառապին զաւակ մը ունենալու տենչէն, իսկ դուն կը չարչրկես սա փոքրիկ ուղեղդ անտեղի մտածումներով:

— Կ'անդրադառնաս չարչարանքիս, բայց անփոփոխ կը մնաս քայլերուդ մէջ:

— Արփի'կ, քեզ սիրող ամուսինդ է հետդ խօսողը. — կը խօսի Արմէն, —

մուր սեղմելով ձեռքերը:

— Արմէ'ն, գիշերնե՛րը... առանձին... կը սպասեմ մէկու մը որ կը հեռանայ ինձմէ: Արմէ'ն, կը վախնամ առանձնութենէ: Յիշէ՛, անցեալը. հեռու չէ... այն խօսքերը որ կը փոխանակէինք իրարու: Հիմա, ամէն ինչ տարբեր է:

Արմէն՝ շրթները կը մօտեցնէ կնոջ ճակտին:

Անուշահոտի բոյր մը քթին մէջ, Արփի'նէ կ'ընկրկի ետին եւ, սարսափահար, նոզկանքով մը կը դիտէ ամուսինը:

— Գնա՛, հեռացի՛ր քովէս, — կը հեկեկայ. — այնեւ չեմ սիրեր քեզ. տուն մի՛ դար, մի՛ մօտենար ինձի:

— Արփի'նէ՛, խօսքիս մտի՛կ ըրէ՛. աւելորդ բաներ մի՛ մտածեր, — կը ջանար համոզել զինք Արմէն:

Արփի'նէ չ'ուզեր լսել ամուսնոյն խօսքերը. կը մտնէ անկողին ու վերմակը ամուր կը քաշէ դէմքին...:

Առտուն կանուխ Արմէն մեկնած էր տունէն: Գրասեղանին վրայ մոխրամանը կը ճշգէր գիշերուան աշխատանքի ժամերը: Եռչիկ ու Զաւէն իրենց մահճակալներուն մէջ կը խաղային:

— Մամա, ո՛ւր է հայրիկը, — կը հարցնէ Եռչիկ, ցատկելով անկողնէն վար:

— Դպրոցն է, շա՛տ դադած է. — կ'աշխատի խուսափել հարցումներէն:

— Մամա՛, գիշերնե՛րն ալ, — մէջ կը մտնէ Զաւէն:

— Հայրիկը շա՛տ դործ ունի, — կը պատասխանէ:

Քիչ ետք, հայիկին դէմ նստած, մազերը կը սանաթէր պրպտելով մտածումներուն պատասխանները: Կը փափաքէր հօրը հեռաձայնել. բայց անգոյստ. ան հեռու էր իրմէ. զինք տեսնել չէր ուզած ամուսնութեան օրէն ի վեր: Որո՞ւ հաղորդէր ներսի խռովքները. ո՞վ պիտի ըլլար այնքան անկեղծ որքան եղած էր ամուսինը: Ատելութիւն մը կը ծնէր մէջը, որուն երկունքին մէջ կը տառապէր, անորոշ ապագայի մը վախէն:

Ժամը չորսին կը հեռանայ տունէն: Քայլերը կ'ընթանան դէպի ամուսնոյն զարոցին թաղը: Պիտի սպասէր անկիւն մը հետեւելու ամուսնոյն մինչեւ այն վայրը որ մուկ կը մնար իրմէ: «Ուրա՛խ էի», կը մտածէ ակնարկը ձգելով զարոցականներու խումբերուն վրայ: «Մանուկ էի, եւ դեմ հոգերէ՝ կեանքը պարզ էր, ո՛չ մէկ մտահոգութիւն եւ շարժարանք. իսկ հիմա՛, ամէն ինչ տարբեր է. սիրած անձը կը դաւէ քեզի... Հայր մը կ'ուրանայ իր զաւակը, հսկ կին մը կը ստորնանայ փողոցներու մէջ»:

— Բարեւ, տիկ. Արփինէ. ի՞նչ կ'ընէք հոս այս տաքուն. ինչո՞ւ դպրոցը, սպասման սրահը չէք սպասեր Արմէնին. հիմա ան ալ կ'արձակէ իր աշակերտները:

Պրն. Սերոբ, փոխ տնօրէնն էր: — Հոգ չէ, — կը պատասխանէ, ջանալով խոսակցութենէ մը:

— Հրամայեցէք, նե՛րս եկէ՛ք, յոգնած կը թուիք ըլլալ, — կը շարունակէ փոխ տնօրէնը: — Զարմանալի բան, Արմէնն ալ յոգնած եւ մտադրաւ կ'երեւի սա քանի մը ամիսներուն: Ինչո՞ւ անշարան չէք դար. խօսի՛նք այս նիւթի մասին:

— Խնդրե՛մ, յոգնած չեմ. վիճակս չէ՞ք տեսներ Պրն. Սերոբ, — կը պատասխանէ Արփինէ հաստատ շեշտով մը:

— Յուսած այդպէս ըլլայ, — կ'աւելցնէ փոխ տնօրէնը, հարցական նայուածք մը ձգելով աչքերուն մէջ:

«Յուսած այդպէս ըլլայ» — կը մտածէ Արփինէ. արդեօ՞ք միւս աշխատակիցներն ալ նկատած էին ամուսնոյն փոփոխութիւնը:

Արմէն դուրս կ'ելլէ խումբ մը զըպըռողականներու մէջէն, տետրակներու տրցակ մը ձեռքին մէջ: Կր մտնէ խանութ մը ներս:

«Անպայման մէկու մը կը հեռաձայնէ», կը մտածէ Արփինէ:

Ի՞նչ ետք, ամուսնոյն քայլերը կ'ուղղուէին հարուստ թաղամասերը: Ուժանկապա, բայց վճռական, կը հետեւի քայլերուն:

Երբուն:

«Ինչո՞ւ այս ընթացք», կը խորհրդածէ. «Ինչո՞ւ չեմ հաւատար խօսքերուն. արդեօ՞ք հիւանդ եմ. Աստուած իմ, ի՞նչ կրնամ ընել, ինչո՞ւ կը տարուիմ զգացումներէս»:

Արմէն կանգ կ'առնէ դրամականութիւն մը խանութին առջեւ. կարծես կը վարանի ներս մտնելու: Կը դիտէ ցուցափեղկին գիրքերը, ապա կը նայի ժամացոյցին: Արփինէ կրկին կը հետեւի քայլերուն. ամուսինը կը մտնէ նորակառոյց շէնքէ մը ներս: Աչքերը կը մթապնին, կ'ուզէ վազել ամուսնոյն ետեւէն երեսն ի վեր պոռալու. «Դուն վա՛տ մըն ես, դուն կինդ կը լքես. այդ աղտոտ ոտքերովդ այլեւս մի՛ պղծեիր տանդ սրբութիւնը»: Թաց աչքերով պայուսակէն կը պրպտէ վաղուան ծախսութիւնք երկու ոսկին: Խելահորոյս, կը մտնէ ինքնաշարժէ մը ներս, մեքենավարը ուղղելով դէպի իր տունը:

— Մայրի՛կ, ի՞նչ ունիս, — կը մօտենայ Շուշիկ:

— Փո՛րդ կը ցաւի, հիւսնդ ես:

— Բժիշկին գացի. քիչ մը անհանդիստ եմ:

— Երանի՛ թէ պապան հոս ըլլար, — կը խօսի Զաւէն:

Ձգազրդեւ, Արփինէ ի գուր կը ջանար պահել արցունքները:

— Հեռացէ՛ք քովէս, — կը պոռայ զաւակներուն. — Ի՛նչ այդպէս կը նայիք երեսիս. դացէ՛ք եւ քնացէ՛ք. գիշեր է արդէն:

— Մամա՛, ժամը հաղիւ վեցն է, — կը պատասխանէ Շուշիկ. դուն չա՛տ յոգնած ես:

Ապականական դիրքէն ազդուած, փոքրիկները անկողին կը ցատկէին արցունքոտ աչքերով: Կը խուսափի անոնց հեկեկոնքէն որ կը խառնուի իրիկուան աղօթքին մէջ: Կը կոթնի ամուսնոյն գրաւեցանքին եւ աչքերը ուղղած անոր լուսանկարին, որ միշտ կը ժպտէր, «անկարելի է, պիտի երթամ նորէն», կը պոռայ վճռական, բռնաբար իջեցնելով սեղանին. «Պիտի տեսնեմ՝ եւ պոռամ ե-

բեռն ի վեր»:

Կը փակէ տան դուռը՝ վերջին ակնարկը ձգելով մանուկներուն վրդոված դէմքերուն վրայ:

Նորակառոյց շէնքը այլ եւ այլ կերպարանք կը ստանայ երեւակայութեան պատատին վրայ: Մովուն վայրագ ալիքները կամաց կամաց կուլ կու տան անոր սպիտակ ծառերը: Կը դիտէ ամուսնոյն պայքարը ալիքներուն դէմ... Կը խնդայ բարձրաձայն: Մատները կը տանի դրան: Յետին աստիճան ստորնանսրու վիճակին հետ հաշտուած էր: Ներսէն, սպանիական մեղեդի մը կ'ամբարտնջէր առնելիք քայլերը: Հրապուրիչ կնիկայ մը թեւերը կ'անցնէին ամուսնոյն վզին: Անցեալէն, բարի յիշատակներու պաթկերներ կը տողանցէին: Կ'ուղչէր հեռանալ ինքզինք սիրովելու զաւակներուն սէրով, հակայն այն պարագայ որ զոյացած էր մէջը կը բազմար յազեցումի մը, որ ըլլար յաւիտենական. բա՛ն մը որ զոյատեւէր. բա՛ն մը որուն կարենար միշտ ապաւինիլ:

Մատները կ'երթան դրան զանգին: «Վա՛տ», կ'ըսէ մտովի, «սրիկա՛յ, չե՛ս զթար ինծի»:

Դուռը բացուելով, դէմ առ դէմ կը գտնուի ամուսնոյն հետ:

Սուր անուշահոտը որ՝ առած էր ամուսնոյն վրայէն, կը լեցուի թոքերուն մէջ:

Արմէն դէմն էր, աչքերը լայն լայն յառած իրեն: Վրան կը կրէր կարտնի ճերմակ համազգեստ մը:

Վայրկեանի մը լռութիւնը կը հաղորդէ ճշմարտութիւն մը, որուն արդարեւ քննութիւն խուսափած էր ամուսնին:

Արփինէ կը հեռանայ լուռ, գլուխը կախ եւ դատարկ պայտապղը ամուր բռնած ձեռքին մէջ...

Արծաթափայլ ուլաքը կը դիմաւորէ առաւօտը:

Պատուհանին կոթնած, Արփինէ անձկութեամբ կը սպասէ ամուսնոյն: Քիչ հազ, անոր ոտնաձայները կը միանան ժամացոյցին հանդարտ զնացքին:

— Արփինէ, — կը մօտենայ ան պաշտադին, — ի՞նչ կրնայի ընել. միա՛կ շահաբեր դործն էր գպրցական աշխատանքէս յետոյ:

Անձկալից եւ յամբ, Արփինէն կը դիտէ ամուսնին:

— Ինչո՞ւ կը լռես, — կը շարունակէ ամուսնին, — մտա՛հ էի որ պիտի ամբշնայիր ինձմէ: Քանի մը ամիսէն մասնուկը պիտի ծնի. մի՛ մեղադրէր... կը սիրե՛մ ծնելիք զաւակս, կը փափաքեմ բոլորով տեսնել լաւ պայմաններու մէջ: Ի՞նչ է ուսուցչի մը ամսականը. որքա՛ն ատեն կ'ընանք աղքատ ապրիլ:

Երեւակայելով ամուսնին կարսոնի համազգեստին մէջ, եւ վերջիչելով հօր խօսքերը, Արփինէ վշտահար, կը դիտէր այն սեւ աչքերը որոնք յուզուած եւ հարցական՝ պատասխանի կը սպասէին:

— Արմէ՛ն, — կը շնչէ, — Արմէ՛ն... Բայց բառերը կը սեղմուին կոկորդին մէջ:

Մինչ սլաքը հանդարտօրէն կը խուսափէր մեռած վայրկեաններէն, Արփինէ գլուխը ամուսնոյն ուսին, կը զգար այն հեշտ ժամերը որոնք վաղահասօրէն կը սպրդէին հոգիէն ներս...:

Պոլիքսիմոն

Գ. Գ. Մ.



Ռ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԳԻՇՈՎՈՒԹԻՒՆ

Ասիկա մեր դառնութեան գիշերն է, ընկեր,
Մեր տարօրինակ մտերմութիւնը
Պէտք է պայթի ու ազմկէ.
Հոգ չէ,
Օրերը կրկին մոայլիմ,
Սակայն
Ժամերը գեղեցիկ ըլլան:

Ընկեր,
Գիմովմամբ այս գիշեր:
Ես ու դուն,
Նստիմք այսպէս, առանձին,
Դէմ դիմաց
Եւ գիմովցած
Խօսիմք, երգեմք, հայհոյեմք,
Մեր սրտերը արմավառ՝
Թաղ փրփրին,
Եռան, թափին:
Այս գիշեր գիմովմամբ,
Մռնամք
Ինչ որ կեանքը խոստացաւ՝
Բայց չընտաւ,
Ինչ ուրիշներ հարկ էր տային՝
Զտուին:

Ընկեր, խմե՛մք.
Մենք
Սրիկաներ չեղանք երբեք.
Թէեւ վայրի ու քիւրքիւ՝
Բայց ստորին չեղանք երբեք:
Մենք մեղք չունինք
Եթէ օրերը դառանան
Կը ծանրանան
Մեր երագող աչքին վրան:
Սրիկայ է դարը միայն:
Ըսէ՛, ինչո՞վ մեղանչեցինք.
Մենք սիրեցինք, ինչ որ մեծ էր,
Գեղեցիկ էր.

Մենք սիրեցինք
Ինչ որ կեանքը մեզ՝ չտաւաւ:
Ի՞նչ սիրեցինք՝
Ոչ ոք գիցաւ.
Խմե՛մք, ընկեր, եւ մի տրտմիր,
Այս ցաւը որ մեզ կը տանջէ
Գեղեցիկ է.
Ըսէ, հոգ չէ՛.
Մեր սիրտը դեռ
Ունի վերքեր
Ուրկէ կրակ դուրս կը թափի,
Անտանձ, յուսի:
Ընկեր, խմե՛մք,
Այս գիշեր մենք պիտի վառենք
Կեանքին վառած լոյսերն անգայն
Սրտերուն մէջ ու աչքերուն
Բոլո՛ր, բոլո՛ր ապրողներուն.
Որ սէրը ալ
Զըլլայ մոայլ,
Որ բարձրանայ, այբէ՛, իշխէ՛
Մեր տրտմութեանը կրակէ:

Ի՞նչ է կեանքը, ըսէ՛, ընկեր.
Այս բաժակին պէս մտերիմ
Անօթ մը հին,
Որ պիտի լեցուի ու պիտի թափի:
Խմե՛մք, խմե՛մք,
Օրերն անցնին այս գիւնին պէս հուրհրամ
Մեղրածորան,
Արեւուն տակ, ոսկի համակ,
Համակ գարուն
Ինչպէս լոյսի գիմովութիւն,
Ինչպէս գիւնին՝ մեր շրթներուն.
Արեւուն տակ բոլորը խառն,
Երբեմն անոյշ, շատ անգամ դառն
Սակայն միշտ մօր ու միշտ անխառն,
Ինչպէս սէրերը մեր կու գան
Եւ լուռ, անդաքձ կը հեռանան:

✽

Խնդանք, հեղանք գարուններն ինչ
Պիտ' քերէին՝ բայց չքերին.
Ընկեր, խմե՛նք, ի՞նչ հոգ կեանքը,
Ի՞նչ հոգ իր ցարտ գերեզմանը.
Ինչ չենք կարող լուծել մտքով՝
Գեղեցկացնենք մեր երազով.
Ինչ տխուր է՝
Հարկ է գինին գուարթացնէ,
Ինչ ուրախ է՝
Հարկ է տրտիւ ու արտասուէ,
Ինչ որ չկայ՝
Թուի այնպէս իբրեւ թէ կայ,
Եւ ինչ որ կայ՝
Հարկ է վառի, գեղեցկանայ,
Հարկ է պարէ, գինով ըլլայ,
Հարկ է կայտաւ, յոգնած՝ իյնայ.
Հարկ է ժպտի եւ յետոյ լայ,
Գեղեցկանայ՝
Ի՞նչ հոգ, ընկեր, խմե՛նք, խմե՛նք,
Մենք թէր եմք
Կեանքին դէմքին՝ գառաւ ու մեղ,
Եւ պիտ' թէնենք մեզի համար
Մահուան փորած փոսին խաւար:
Մեզի համար
Ձկայ բարի եւ չկայ չար.
Կը բաւէ որ
Սիրտը պոռայ սիրով գինով,
Կը բաւէ որ
Աչքը երեւի խնթ բոցերով
Որոնք կ'այրեն:
Ի՞նչ հոգ, ընկեր, մենք պիտ' ապրինք:
Թէ որքան ալ ըլլայ մռայլ
Երկիրը ցուր ու ձիւնը իմ,
Յամառօրէն ու ամաշտայլ՝
Մենք պիտ' ապրինք:
Կեանքն, ընկեր, բոլոր անոնց
Որոնք տուին իմաստ ու բոց
Քարին, ձայնին ու կտաւին.
Կեանքն անոնց՝
Որոնք բերին երազ ու գոյն
Նուիրական հին դարերուն.
Անոնց՝
Որոնց ըմբոստ կուրծքին
Բախտեալ մտին իբրեւ սուին,
Որոնք ինկան ու արիւնով
Ըրին կեանքի իմաստը ծով:
Կեանքն ընկեր, կիրքին, բէնին,
Եւ ոյժերու գերագոյնին ~

Գեղեցիկին:

Կեանքն, ընկեր.
Բոլոր անոնց որ կը մնան
Իբրեւ խորհուրդ յաւերժական,
Իբրեւ հեռու, անհաս, անծիր,
Տարօրինակ, խնթ սրբութիւն,
Ուր չեն հասնիր
Ուրախութիւն թէ տխրութիւն.
Կեանքն, ընկեր, այդ գիւղական
Աստուածութեան,
Որուն տաճարը ամէն օր
Կը զարդարուի գոյններով մօր,
Որուն տաճար
Իբրեւ մոխրագ, իբրեւ պարգեւ
Պիտի մարթնեմ սրտերը մեր:
Խմենք, ընկեր,
Որպէսզի ցաւն անգիտանամք
Երբ բազմին տաքելը գանգ:
Ընդմիջտ մոռանմք
Ուրիշ կրօնք ու դաւանանք.
Որ քրտական
Ահեղ երգերը բարձրանան,
Երբոր մեռնին
Տիեզերքի ձայները օին,
Երբոր մարին
Տիեզերքի գոյներն հիւանդ,
Երբ մանաւանդ
Մեր Տրտմութիւնը կրակէ
Բոց արձակէ, խանձէ, այրէ
Ինչ որ հին է, մութ է, գուր է,
Գեղեցիկ չէ:
Իսկ այս վերջին բաժակն, ընկեր,
Կեանքն անոր, գոր սիրեցի:
Մի գարտաւար, օր մը, ընկեր,
Ես խնթացայ ու սիրեցի:
Ընկեր, խմենք կեանքն անոր
Ջոր սիրեցի ու մեղացի,
Անոր, որուն թախծով խոր
Ես գինովցայ ու երգեցի:

✽

Գիտե՛ս, ընկեր, թէ ասկէ ետք
Ուրախ բառեր չկան երբեք.
Թէ անիծած տղուն համար՝
Ձարն է բարի ու բարին չար.
Թէ մեզ ծնաւ զար մը, որուն
Ստիգններէն ծծեցինք թայն.
Խմենք, ընկեր, թաղ գինովնայ
Մեր ցաւը, որ կը կոչուի սէր:

Ք. Գ.

Ե Ղ Ն Ա Ր

Գրեց՝ ՎԱՐԳԱՆ ԿԱՏԱՐԵԱՆ

Եղնար առաւօտ կանուխ իր դրան սեմին նստած՝ աղբիւր խնայող հասուն աղջիկներն ու նոր հարսները կը դիտէ։ Դիմացէն դրացի Սեդուին աղջիկը, — Ծովերը, — գլխովի փարչը ուսին, համարձակ քայլերով կ'անցնի առջեւէն, հովա-հարի պէս իր քայլերուն շուրջ օդը խաղ հանած։

Այդ ի՞նչ հասակ, այդ ի՞նչ դեղնակուրծին։ Երազին մէջ տեսած սուրբերուն ձեռքի կանաչ ու մրմուռ, երկայն մոյն ըլլար կարծես իր նորարարող ուստերով, կոկոններով...

Իր պատանեկութեան աղջիկ Եղնիկը չէ՞ր իր առջեւէն անցնողը։ Նայեցաւ իր վրայ. շօշափեց իր ոսկրուտ ձեռքերը, դուրս ծռած ծունկերը, չոր-վանդակ կուրծքը՝ եւ խորունկ ախ մը քաշեց...

Այդ ե՞րբ էր որ... Հը՞... Այդ ե՞րբ էր որ Եղնին ալ այս պարմանուհին նման կարմիր-լալա էր... Ոտքերուն կարմիր չատիկ։ Ուսին, կարմիր գլխովի փարչը։ Թեւերուն, պսպսիկով բանուած խառուտիկ թեւոց։ Գլխին, ճերմակ ու բոսոր ծաղիկներով տպուած սաւան։ Հովի նման աղբիւր կ'իջնէր։ Հը՞, այդ ե՞րբ էր։

Այդ ե՞րբ էր որ իր ալ ոտքերուն միջոցը կը կայծկւարար, երբ Պապի աշխարհէն կրակէ ցոլեք կը խրուէին իր որտին։ Ու իր շուարուն ոտքերու չատիկներուն պայտերը քարերուն զարնը-ւելով բուռ-բուռ կայծեր կ'արձակէին...

Այդ ե՞րբ է՞րբ...

Դեռ երէկ չէ՞ր որ ներկայի կայի ու անգոյն ոսկրուտ այտերուն ու չորացած շրթներուն տեղ կարմրուկ թուշեր ու նուա շրթներ ունէր։

Դեռ երէկ չէ՞ր որ ճամբու երկայնքին փռուող ածուքի կիսապատին տակ, Աստու-առտուն դարան մանող ու իր ճամբան պահող Պապի բազուկներուն յանձնուելով, իրենց սրտերուն մէջ հեշտալի կեռուք մը կը սկսէր... եւ իրենց արիւնները ձիւնհալքի ժամանակ ափեւրէն դուրս նետուող դետերու ջուրերուն նման կը փրփրէին, կ'եռային, կը յորդէին ու տաքուկ ջերմութեամբ կը վարակէին իրենց սիրող մարմինը, մինչեւ ականջներուն ծայրերը։

Այդ երէկ չէ՞ր որ Պապը իրեն կ'ըսէր «Համբարս սիրոյս փրփուրն է», ու հարիւրաւոր համարյոներ կը փակցնէր ճակատէն մինչեւ կուրծքին հովիտն ու բարձունքները։

Այդ ե՞րբ էր... Երէ՞կ թէ հին-հին օրերուն։ Այնքան հին՝ որ կարծես ուրիշ կեանքի մը, ուր աշխարհի մը մէջ պատահած ըլլար։

Ծովեր աղբիւրն էր հասած։ Եղնար ներս քաշուած, անկիւն մը կնկտած էր։ Իր փոթփոթած երեսներէն մէկ-երկու սլուս արցունքներ՝ բերնին երկու կողմերէն երկու կնճիռ առուններէ շիտակ բերանը կը գլորուէին։

Հացը զովացուց սիրաւ։ Թեթեւութիւն մը զգաց։

Արեւ երկտասարդութեան օրերը մօցան ու վարակեցին զինք։

Կարծես վերջին դատաստանի օր-
ուան փշելիք շունչէն տուին: Ու ան ապ-
րեցաւ իր հին օրերը, հին յուշերը, այն-
քան կենդանի, այնքան պատկերոտ...

✽

Հէ՛յ, կիտի ժամանակներ: Երեւէկ ըն
օրերուն:

Պապն ու Եղնար պատանիներ են,
հաղի 16 զարուհներ բոլորած: Կրակ ու
բոց: Բա՞ն կու գայ աչքերնուն: Կը սի-
րեն զիրար: Հոգի կու տան իրարու հա-
մար:

Եղնար ժամը ժամին, կուժը ուտին,
աղբիւր կը վազէր Պապը տեսնելու:

«Եղնիկս, կէյիկս, Թեթեւ քայի-
րուդ ձայնին զուրպան, տրորած հողիդ
Ֆեռնիմ: Անցած տեղէդ պետինը կը հո-
տոտեմ, կարօտս առնելու, քեզ տեսնե-
լու: Կեցիր քիչիկ մը, աչք մը ձգեմ չի-
նար հասակիդ, ինչպէս արեւը մեր արտ
ու ցանքին»:

«Պապս, հիմա չէ: Ուշ է: Լուս փը-
լաւ: Թող մնայ իրիկունան: Հիմա ուր
որ է, Նաճարենց տաւարը դիմացի օգո-
րակը կը դառնան»:

Որո՞ւ կ'ըսէր: Կրակոտ Պապը ահըն-
թարթի մը մէջ կը նետուի ղէպի Եղնա-
րը: Կ'առնէ զայն իր բազուկներուն մէջ
ու համբոյրներ զրոյմելով անոր կեռաս
չրթներուն, խոյս կու տայ, ինչպէս հո-
վր ծառի տերեւներուն մէջ: Իր ձայնը,
սրսփիւնը կայ, ու ինք չկայ:

✽

Եղնար այդին է:

Որթատունկերու շորցած ճիւղերը կը
հաւաքէ ու շալակ կը կազմէ: Նայիս
ուրկէ՛ ուր, Պապ անոր քրտինքին կծու
հոտը կ'առնէ: Թերեւս Եղնար փէշերը
չարժած ու իր հոտը ծաղիկներու բոյ-
րին էր խառնած, որ ղեփուի թեւերուն
վրայ ալիք-ալիք կը հասնէր Պապին ու
անոր առնգերն ի վեր տարածուելով կը
կծուեցնէր:

«Օօֆֆ, Եղնոյիս հոտն է, հոգուն
մեռնիմ», կ'ըսէ Պապ ու կը հետեւի շա-
ւիղէն իտ, ղէպի արեւցնող հոտի աղ-

բիւրը, — Եղնար:

«Եղնիկս, կէյիկս, Թող որ ուսիդ
դնեմ շալակդ... Ծա՛նը է: Կեցիր տես-
նեմ... Հը՛ւ դէ՛հ, ելի՛ր: Բռնէ կապերը
երկու ձեռքով: Եւ յետոյ անոր առաջն
տոնելով, կ'առնէ անպաշտպան մնացած
երեսը երկու ափերուն մէջ, կը համբու-
րէ ու կ'անյայտանայ այնպէս, ինչպէս
եկած էր:

«Աստծու փորձանք, Աստծու փոր-
ձանք», կ'ըսէր Եղնար արթած: Այտերէն
կարծես քրտինքի տեղ արիւն կաթէր:

✽

Ածուքի ցանկապատին վրայ, փշա-
տի ծառի շորցած ճիւղերուն մէջ կրկու
ճնճղուկներ կը սիրարանին:

«Ճիւ, ճիւ, ճիւ»:

«Ի՞նչ ալ տեղը գտեր են», կ'ըսէ Եղ-
նար:

Արուն թեւերը կը բացիփէ, պոչը
կը թրթռացնէ, կը քսուշտի էպին հա-
սակն ի վեր ու կը հովահարէ ոտքէն դը-
լուխ:

«Մեռնիմ քեզի, Աստուած: Ասոնք
ալ գիտեն ինչ է սէրը, եւ առիթը չեն
փախցնէր փուշերէն բղբտուելու զնով
զիրար վայելելու, կ'ըսէր Եղնար»:

«Թրբո՞ւ: Թոան ու անյայտացան,
ինչպէս Պապը իր համբոյրէն ետք:

✽

Երկու դեղին սակեղոյն թիթեռներ,
լուսաւորուած, անհող ու համարձակ
փոուեր են արեւին տակ, կանանչին վը-
րայ:

«Երեւէկ ձեզի»: Եղնար կը մօտենայ:
Ձեռն փախչիր: Կը փորձէ բռնել: Ու ա-
հա երկուքը մէկ կը բարձրանան օդին
մէջ: Ետքն ալ իրարմէ բաժնուելով կար-
ծես պահուրտուք կը խաղան ծաղիկնե-
րուն վրայ:

«Ղուրպան բլլիմ քեզի Աստուած:
Քու օղորմութեանդ: Ինչ անուշ է աշ-
խարհը: Եղնարի միտքը կ'իյնայ Պապը,
անոր համբոյրները:

— Բայց ան ժամանակներուն երիտա-
սարդները Ե՛րբ թռչուններու ու թի-

թեոններուն ազատութիւնը կը վայելէին: Ե՞րբ սիրած սիրածի կու տային: Ո՛ւշ, երկինքէն քար պիտի մաղուէր գլուխնե-
րուն: Մնողաց կապածը կապած էր, եւ
կտրածն ալ կտրած:

Միեւնոյն աշնան Պապն ու Եղնիկը
կը բաժնուէին իրարմէ ու կը նշանուէին
ուրիշներու հետ, առանց իրենց կամքին:
Ու այդ առեւտրէն ի վեր Եղնար յաճախ
պիտի ըսէր.

«Մեր ճակատի գիրն էր որ սիրած
սիրածի չի տային»:

Ածուքի ցանկապատին ետեւ դարա-
նաժուտ սպասող Պապի սիրտը եկի ելաւ:
Եղնարի ոտքերուն ձայները կ'առնէր
գետնէն:

«Բա՛, բա՛, բա՛: Մարդակենց հար-
սին նայեցէք: Ի՞նչ հարուստ կուրծք,
ի՞նչ շինար հասակ...»

«Աղջիկ Եղնար, Եղնար»:

«...»

«Եղնո, գետնուս: Ականջդ բո՛ւրդ
ես կոխած»:

Եղնարը մինչեւ բերանը իջնող պը-
լիւքի տակէն փչեց: Ետենէն կաս-կար-
միւր կտրած քիթն ու բերանը ցուցուց:
Կարծես առտուան շողի տակ բացուած
կարմիր տիկնուկ ծաղիկներ ըլլային:
Բաներ մը փոխաց ու անցաւ, զպուներ
փէշերով ճամբային ձանձները խաղ հա-
նած:

Անոր այդ կերպ անցնիլը համազօր
է «գզո՛յլ, մարդ կայ ըսելուն»:

Աճապարանքով, ծանր բեռան տակ
կքած իշուկի մը ետեւի ոտքերուն նման,
ծուկիկն իրար խառնած, շտկուեցաւ
ղէպի Մարիամ-Ձոր: Պապն ալ հեռուէն
անոր հետեւեցաւ:

Ձուրէն դուրս ցցուած խոշոր սալ-
քարի մը վրայ նստած են քով-քովի եւ
ոտքերով ջուրը կը ծեծեն:

«Ձուրէն համարյո՛րի ձայն չե՞ս առ-
ներ, Եղնիկ»:

«Օ՞ժ, ի՞նչ անուշ ես», կը համ-
բուրէ:

Արեւը տաքուկ, ոտքերնին ջուրին,
Եղնիկի կուշտին, Պապին սիրտը կը խա-
տայ. «Ձարփ-շուրփ» կը զարնէ ջուրին,

կը սկսի երգել.

«Ի՞նձ հետ մտնել ձորակիմ,
Ասկեար ու սէյրամ Եղնոս
Շող տուել արեգակիմ,
Մարալ ու զէյրամ Եղնոս:
Եղնոս, փիւսփիւղ խառ ա,
Ասկեար ու զէյրամ իմ եար,
Մօրդ ըլլիմ Ես փեսայ
Մարալ ու զէյրամ իմ եար»:

Կանգ առաւ: Թեւերը բոլորեց Եղ-
նարի վրին: Հանգչեցուց անոր գլուխը
իր կուրծքին, եւ վայրկեան մը բոլորո-
վին լրջացաւ:

«Եղնիկս, հիմա շիտակ դուն իմ
հարսը, ես քու փեսան: Ի՞նչ կ'ըսես»:

«Նո՛ր բարի-յոյս: Վեց տարիներով
ես մնացեր ես: Չարմանալի չէ՞, Պապ,
մարդ ի՞նչպէս միտածանակ կարող է
երկու անձեր սիրել: Ոոստովանիմ որ
Սեղոյին հետ աւելի վե՛հ սիրով կապ-
ուած եմ: Կը կարծեմ որ քու եւ իմ սէ-
րը տոգանք է: Մարմնի սէր: Մինչ իմս
եւ Սեղոյինը հողի, աստուածային:
Ի՞նչ կ'ըլլար: Թող մէկ օր ալ թթուած
երես ցուցնէր, որ վանգատելու առիթ
ունենայի: Ձերբաւ: Միշտ ժպիտը երե-
սին: Ա՛խ, որ առողջութիւնն ալ տեղի
ըլլար... Բայց Աստուած մարդուն մէկ
կողմը միշտ կախ կը պահէ: Չեմ գիտեր
թէ ի՞նչ համ կայ այս գողունի սիրա-
բանութեան մէջ: Միշտ «Գող սիրտը
դող»: Ես կ'ատեմ այս կեանքը»:

«Օհօօօ: Այդ ե՛րբ փիլիսոփայ դար-
ձար: Որո՞ւ յանցանքն է: Մե՛ր թէ մեզ
ստեղծողին: Մենք մեր ճակատի գիրը
կ'ապրինք: Լարուած պտուտակ մըն ենք:
Կը դառնանք մեզ լարողի քմահաճոյքին
համաձայն: Անոր ուղած ուղղութեամբ:
Օրը կը տարածամի: Գնա հիմա, անու-
շըս»:

Եղնոն հասաւ դիմացի աղբուենները:
Պապը կրկին սկսաւ երգել:

«Գճա, գնա գալիս եմ,
Ասկեար ու սէյրամ Եղնոս,
Մամ եմ գալիս լալիս եմ,
Մարալ ու ճէյրամ Եղնոս»:

Վ. Կ.

ԵՐԳԵՐՍ

Երգերս անհուն

Երկնքում պայծառ,
Աստղերն են ծիծղում
Եւ յաւերժալսա :

Երգերս վնիւ

Մշտանու ազրիւր,
Անբառամ ժպիտ
Եւ սէր եւ համբոյր:

ԵՐԳԵՐԱ յՈՅԱԻ

Հանգրուան շքեղ,
Անսպառ լոյսի
Մշտավառ կանքեղ:

Երգերս գալի՜մ

Օրերի պատգամ,
ձգմաբիտ խօսքի
Եւ ազատութեան:



Ամաչի ու անաչի

Դաշտերում անաբու,
Մի թռչուն թևաթափ,
Չչում է հեռի ի հեռ:

Ճշուժ է նա անյոյս,

Հիծելիտում ու մեռնում,
Ո՞վ գիտե, որքա՛ն յայս
Ու կարօտ իբր արտում:

စာအုပ်အမည်

Մ. ԲԵԴՈՒԻՆ

Ճ. ՍԹԵՅՆՊԵՔ

ԲԱՅԱԿԱՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

● Ճոճ Սթեյնպեյթ, ամերիկացի գրագետը որ Նոպլեյան մրցանակին արժանացավ վերջերս, եւ որուն գրականութեան ու արժէքին անդրադարձած է մերկայ թիւով վ. Օշական, երկար ատեն է որ վէպ կամ մարավէպ գրած չէ: Վերջերս, «Շուն», Ամերիկան եւ նա խորագիրը կրող գիրք մը հրատարակեց, որ արդիւնքն է Ամերիկայի յիսուն մանկեղներէն շատասունին մէջ իմանալարժէք իր կատարած շրջապոյտին:

Ճաշակ մը տալու համար Սթեյնպեյթի գրականութիւնէն, ստորեւ կը մերկայացնենք մեր քննարկողներուն հառուած մը իր տալ վերջին գրէն:

Գրուածքը կրկնակի արժէք մը ունի, իսկ նա զուգահեռաբար պատմութեան, կը մերկայանայ մեզի մանւ հեղինակը, իր ստեղծագործական աշխատանքին եւ ասոր համար գործածած միջոցներուն ու ձեւերուն մէջ:

Հատուածը մենք վերնագրած ենք: ●

Կարծեմ թէ լաւ կը ճանչնան զիս, ու բաւական մըն ալ կը յարգեն, Շեքսպիրի Ամպաստոր Իսթ Օթէլլի տնօրէնութիւնն ու պաշտօնեաները: սակայն այդ տպաւորութիւնը չեմ ունենար, երբ պանդուկ կու գամ որոտորական ճմրդկերւած զգեստներովս, չածիլուած, ճամբաներու փոխիով թաթաւուն, գիշերային ճամբորդութեան մը պատճառով աչքերս արնախոտած: Անշուշտ, սենեակ մը ապահոված էի տաղուրնէ, սակայն կէսօրէն առաջ ազատ պիտի չըլլար: Մեծ զգուշութեամբ բացատրեցին ինծի պանդուկին տեսակէտը այս հարցին մէջ. բոլորեցի անշուշտ, եւ իմ ներդրամտութիւնս շնորհիւ հոգատարին: Գալով ինծի, ուզածս լողանք մը ու անկողին մըն էր, եւ քանի որ անկարելի էր, ուրեմն պիտի տեղադրուէի սրահի բազկաթոռներէն մէկուն մէջ, ու պիտի քննանայի, մինչեւ որ սենեակս ազատ ըլլար:

Ընդունելութեան պաշտօնեային աչքերուն մէջ անհանգստութեան տպաւորութիւն մը նշմարեցի: Գիտէի, թէ իր

վայելուչ ու մեծածախս հանգստեան տաճարին համար յաւելեալ դարձ մը պիտի չըլլայի: Յարաբերութեան մէջ մտաւ ենթահոգատարի մը հետ — թէ չէ՛փաթիով անշուշտ — եւ բոլորս միատեղ, լուծուած մը դռանը: Յաճախորդ մը մեկնած էր, ճիշդ քիչ առաջ, վաղ առաւօտեան օդանաւի մը հասնելու համար. իր սենեակը դեռ մաքրուած չէր, սակայն իրենց համար հաճոյք մը պիտի ըլլար դայն իմ տրամադրութեանս տակ զննել, մինչեւ որ իմ սենեակս պատրաստ ըլլար: Խելացութիւնն ու համբերութիւնը յաջողած էին լուծուած մը տալ խնդրին: Եւ մէկը մէկը կը բերէր իր ցանկացածը. ես պիտի կարենայի լողանք մը առնել ու քնանալ, իսկ պանդուկին կը խնայուէր սրահին մէջ իմ ներկայութեանս անախարհութիւնը:

Ուրեմն, սենեակին ձեռք արուած չէր վերջին յաճախորդին մեկնումէն առդին: Ինչպէ՛քս նետեցի հանգստաւէտ բազկաթոռի մը մէջ, բարձրա՛վիզ կօշիկներս հանելու համար, եւ մէկն ալ հանեցի, նախքան նշմարելու մանրամասնու-

թիւն մը, ապա ուրիշ մը, եւ ուրիշ մըն ալ: Անհաւատալիորէն կարճ ժամանակի մը մէջ, կը մոռնայի լողանք ու քուն, եւ ինքզինքն կը գտնէի խճճուած Հարրի Մենակեացի կեանքին մէջ:

Հանգստացող, կամ քալող կենդանի մը, խոտը կը ճզմէ, թաթերուն հետքերը կը թողու, կամ որեւէ հետք: Մարդկային էակ մը սակայն, որ սննեակ մը դրսեւորէ, նոյնիսկ մէկ գիշերուայ համար, իր խոռոնուածքին կնիքը կը դնէ հանր վրայ, իր պատմութիւնը, իր կենսադրութիւնը կը թողու հոն, եւ՝ երբեմն ալ, իր ծրարներն ու յոյսերը: Իր անձնաւորութիւնը կը թաթաւէ պատեր, որոնք ետ կ'արձակեն դայն, քիչ քիչ: Այս իրողութիւնը կրնայ բացատրութիւն մը տալ ուրուականներու, կամ նման այլ յայտնութիւններու մասին: Հակառակ որ եղբայրացութիւններս կըրնան սխալ ըլլալ, սակայն շատ զգայուն եմ մարդկային հետքերու: Եւ յետոյ, երբեք չեմ վարանիր խոստովանելու իմ անուղղայ հետաքրքրութիւնս: Երբեք չեմ անցած առանց վարագործի պատուհանի մը առջեւէն, առանց ներս նայիլու: Երբեք չեմ դոցած ականջներս, երբ ինծի չվերաբերող խօսակցութիւն մը լսած եմ: Կրնամ անուշտ ինքզինքս արդարացնել, նոյնիսկ փառաւորութիւլ, ըսեալով՝ թէ իմ արհեստս կը պարտադրէ ինծի իմ նմաններս դիտել, գննել, սակայն, իրականութեան մէջ, պարզապէս հետաքրքրեմ եմ:

Հարրի Մենակեացը ձեւ կ'առնէր: Քիչ առաջ մեկնած այս հիւրը, կը վերակերտուէր, իր անձին հոս ձգած կոտորներով: Անկասկած, Շարլին, իր անկատար քիթովն անգամ, շատ աւելին պիտի գիտնար, սակայն Շարլին քովս չէր, շուներու յատուկ բաժինն էր ու կը սպասէր որ իր արդուգարդը կատարեն: Եւ սակայն, Հարրին նոյնքան շօշափելի էր ինծի համար, քան իմ բոլոր ճանչցած մարդիկս: Նոյնիսկ շատ աւելի՝ քան ուսանք: Մէկ հատիկ չէր ինք, ընդարձակ խուճիկ մը մէկ անդամն էր:

Նախքան վերականգնելը, թոյլ տը-

ւէք որ ըսեմ, թէ Հարրիին անունը Հարրի չէ: Կը բնակի Ուէսթփորթ, Քոննէքթիկըթ նահանգին մէջ: Այս տեղեկութիւնը ձեռք բերի բազմաթիւ չապիկնեւորու համար արուած արդուկիչի հաշուեցոյցէն: Մարդ մը, ընդհանրապէս, կ'ապրի հոն՝ ուր իր չապիկները լուալ եւ արդուկել կու տայ: Սակայն, կարծեմ Նիւ Եորք կ'աշխատի: Իր գէպի Շիքալո ճամբորդութիւնը, սկզբնաւորութեան դէթ, գործի ճամբորդութիւն մըն էր, քանի մը դասական գուարճութիւններով ճոխացած: Ծանօթ եմ իր անուանին, որովհետեւ պանդոկին ճամբորդներու տետրակը օտորագրած է, բազմիցս, ամէն անգամ ալ քիչ մը տարբեր գծերով, ինչ որ կը թուի ցոյց տալ, թէ գործերու այս աշխարհին մէջ շատ ալ ինքնավստահ չէ ինք, ինչպէս կը հաստատեն կարգ մը այլ մանրամասնութիւններ:

Իր կնոջը ուղղուած նամակ մը սկսած էր, որը թուղթերու զամբիւղին արժանացած էր՝

«Միրելիս,

Ամէն ինչ Օ. Քէյ է: Փորձեցի հեռախօսել մօրաբերող, սակայն պատասխան չկար: Ծառ պիտի ուզէի որ հոս ըլլայիր, ինծի հետ: Մարդ ինքզինք առանձին կը զգայ այս քաղաքին մէջ: Մոռցեր էիր ձախ թեւեղաց դնել պայուսակին մէջ, նոր զոյգ մը գնեցի, աժան, Մարլալ Թիլտէն: Կը դրեմ, սպասելով Ս. Է. ին, որ պիտի դայ քիչ ետք, կը յուսամ պայմանագրութիւնը հետք բերելով...»:

Նոյնքան լաւ եղած է, որ Վիրելիան չէ եկած Շիքալոյի կեանքը աւելի տանելի դարձնելու Հարրիին համար: Ուրովհետեւ, իր այցելուն Ս. Է. ն չէ եղած, ոչ ալ պայմանագրութիւնը, այլ խարտիչահեր կիւն մը, որ շատ բոց գոյնի ներկ կը գործածէ՝ սիկարէթի ծայրեր՝ մոխրամանի մը մէջ, ու խմելիք բաժակի մը եզերքը...: Ամբողջ շէշ մը ժառ ծանիէլ խմած էին միասին. կը մընար պարազ շէշը, կը մնային վեց հատ

ալ ստալի պարապ չիլեր. դոյլ մը կար, որ սառոյցի կտորներ պարունակած էր: Շատ ծանր անուշահոտութիւն մը կը պործածէր եւ գիշերը Հարրիի հետ անցուցած չէր: Երկրորդ բարձր գործածած էին, սակայն ոչ ոք պառկած չէր անոր վրայ. ոչ բրնձափռի, ոչ ալ շերթունքի ներկի կարմիրի հետքեր կային անձեռոցներու վրայ: Կ'ուզեմ հաւատալ թէ Լիւսի էր անունը, չեմ գիտեր ինչու: Պէտք է ջղային եղած ըլլայ. կը ծխէր Հարրիի ֆիլթըր ծալրով սիկարէթներէն. սակայն բոլորն ալ կէտ ձգած է, ու նոր մը վառած: Իր ծխած սիկարէթները չէր լքեր մոխրամանին մէջ, կը ճզմէր զանոնք: Լիւսի կը հազնէր ոտ պղտիկ, երեւութապէս զլխարկ եղող բաներէն, որոնք կ'որ սանտրերով կը բռնուէին գլխուն վրայ: սանտրերէն մէկը ինկած էր. ան է, ու պղտիկ գընդասեղ մը անկողինին քովը, որ յայտնեցին ինծի Լիւսիի խորտիչահեր ըլլալը:

Ձգիտեմ թէ Լիւսի արհեստաւորն էր, սակայն յայտնի է որ փորձառութիւնն ու գործին ըմբռնումը ունէր: Իր ետին չէր թողած բազմաթիւ հեաքեր, նշաններ, ինչպէս պիտի ընէր ամաթէօր մը: Ասկէ դատ, կար նաեւ այն, որ ան չէր գիտովցած. իր բաժակները կը պարպուէին, սակայն կարծիր վարդերու ծաղկամանը Ժաք Տանիէլ կը բուրէր — Տնօրէնութեան ուշադրութեան կը յանձնեմ —, եւ ծաղիկներուն համար բարեք մը եղած չէր ատիկա...

Կը մտածեմ թէ ինչի՞ մասին կրնային խօսած ըլլալ Հարրի եւ Լիւսի: Նըւազ մինակ զգալուն նպաստե՞ց արդեօք Լիւսի. կը կասկածիմ: Իրենցմէ ամէն մէկը բնաւ անշուշտ այն, ինչ որ կը

սպասուէր որ ընէ: Հարրի պէտք չէ այդքան խմէր, իր ստամոքսը չի վերցընէր: ստամոքսի թթուի համար գործածուող դեղերու թղթէ ծրարները զամբիւղին մէջ... Շատ հաւանաբար, իր արհեստը ստամոքսները յոգնեցնող, մաշեցնող արհեստ մըն է: Հարրի Մենակեացը հաւանաբար չի չը պարպեց Լիւսիի մեկնումէն ետք, ու մազերը լուացուած ըլլալու են: Երկու Պրոմօ-Սէլցէրի պարապ չիլեր, բազմաթիւն մէջ:


Երեք իրողութիւն, Հարրի Մենակեացի կապակցութեամբ, շատ կը հետաքրքրեն ու մտածել կու տան ինծի. առաջին՝ չեմ կարծեր թէ Կուազապոն հանոյն անպամ զգացած ըլլայ. երկրորդ՝ կը կարծեմ, որ իրաւ կը ձանձրանար, եւ երրորդ՝ ոչ մէկ բան ըրած է, որ նախատեսելի չըլլար. ոչ մէկ անպակի կոտրած չէ, ոչ մէկ անարգանք հասցուցած չէ, ուրախութեան շօշափելի փառս մը թողած չէ ետին:

Մէկ երկարավիզ կօշիկ միայն հագած, սենեակին չորս կողմը ցատկոտեցի Հարրիին փնտռելով: Մինչեւ անգամ անկողինն տակը եւ հանգերձարանին մէջ նայեցայ: Փողկապ մը անպամ մոռցած չէր: Յաւեցայ իր վրայ:

Թրգմ. Բ.

ԾԱՆՈԹ. ԹՐԳՄ. — Քանեքթիքթ եւ Նիւ Եորք մահանգները իրարու կից են, ուշաճախ կը պատահի, որ մարդիկ Նիւ Եորքի մօտ եղող Քանեքթիքթի այս կամ այն ֆազաքը ապրին եւ ամէն օր, շագնակաճով կամ ինքնաշարժով, Նիւ Եորք իրենց գործին երթան, երեկոյեան դարձեալ տուն դառնալու համար:





ՆՇԽԱՐՆԵՐ Ն. ԱՂԲԱԼԵԱՆԷՆ

Դրախօսական՝ ճշմարտագր
Գրական Յարեգիրքի.—
1914, Գոլիս:

ԲԱՊԻՆԻ քարեկամ ընթերցող մը խմբագրութեան տրամադրութեամբ տակ դրած է Ն. Աղբալեանի գրական ժառանգութեան մաս կազմող Հարժ մը գրութիւններ, որոնք խոստովանում են իրենց անհատական փնտռումները գրական եւ ֆանտաստիկական երկերի միջոցով։

Յայտնենք ամփոփաբար, թէ խմբագրութեան տրամադրութեամբ գրական այդ քանակաւ խմբագրութեան, որ պիտի սկսիմք հրատարակել ԲԱՊԻՆԻ մէջ, *անտիպիքս* քաղաքականութեամբ ու փայլուն ունեւորութեամբ մէկ կողմէ, ու հրատարակութեամբ գրութեան լրջութիւնն ու տրամադրութեամբ մանաւանդ միւս կողմէ։ Ու եթէ երկու այս արժանիքներուն վերայ աւելցնենք մասնաւոր Ն. Աղբալեանի քաղաքական կշիռ ունեցող ստեղծումն ու ֆանտաստիկական առեւտրային գործունէութեան լրջութեամբ կր զաւանջ իսկայն, թէ ի՞նչ անտիպիքս շտեղծումն է համարել պէտք է լրջաւորաբար գրութեան ընթերցումը, գրական առաջադրանքի տեղը գոյն քարերուն այս օրերուն։

Գրութիւնը, որ կու տամք ստորեւ, տպւած է Հոբելանց Բերքի 1914-ի 30 եւ 31 համարներուն մէջ եւ ընդարձակ մէկ գրախօսութիւնն է Գ. Վարուժանի եւ Սիրուհիի հրատարակած 1914-ի ՆԱԽԱՍԱՐԴԻ գրական տարեգրքին։ Գրքի մասը, բայց Արեւելահայաստանի մէջ երկրակալութիւնն ունեցող մը լրջութեամբ եւ իսկական իրաւունքով խօսքերու կտրուկն) նոյնպէս երիտասարդ, բայց արդէն վաւերական ճիշդութեամբ ու իրաւագիտութեամբ գործունէութեամբ երկու Արեւմտահայ բանաստեղծներու, Վարուժանի եւ Սիրուհիի մասին, հիմք ունենալով այս առթիւ ամենակարգ մէկական քննարկում, տպւած՝ ՆԱԽԱՍԱՐԴԻ մէջ։

Ըստ էութեան չբաժնելով հանգիստ մեծ ֆանտաստիկ գրութեան մէջ տեղ գտած կարգ մը խմբագրութեան (որոնցմէ ինքն իսկ հրատարակած տարիներ ետք) ի մասին Վարուժանի եւ Սիրուհիի ճիշդութեամբ մէջ լոյս տեսած քննարկումներուն՝ չենք կրնար չընդգծել տակաւ, այն ամէկաշառ եւ անսխալաբար ազիւն, որ կը վարէ ֆանտաստիկական գրչիւնը։ Կ'ընդգծենք հան ըստած խօսքերուն խոր ու լուրջ բնուիքը, գրական կիրքի ճշգրտութեամբ ու կենսական գիտութիւնը, որոնք, ծաւալուն հմտութեամբ մը հետ, յատկանշիչը եղան մինչեւ վերջ Ն. Աղբալեանին։

Այս ժողովածուի բովանդակութեան եւ արժէքի մասին խօսելուց առաջ՝ պէտք է մատնանշենք մի պակաս, որ մեզանից բաւական ժամանակ խլեց: Այս ընդարձակ հատորը, որին աշխատակցել են (6)-ից աւելի անուն եւ տուել 80-ից աւելի մանր ու խոշոր գրութիւն՝ նիւթերի ցանկ չունի: Մի յօդուած, բայց մանաւանդ մի բանաստեղծութիւն գտնելու համար պէտք է նորից ու նորից թերթէք գիրքը, կորցնելով ձեր ժամանակն ու ժաղէկով հատորը: Յուսով ենք, թէ յետագայ հատորները լոյս բնծայելիս հրատարակիչները չեն զլանալ ուշադիր ընթերցողին այդ տարբական դիւրութիւնը բնծեալ:

«Նաւասարդ»ը մի պատկառելի հատոր է բազմազան բովանդակութեամբ, ընտիր թղթի վրայ, խնամուած ու գեղեցիկ հրատարակութեամբ: Ունի աւելի քան 100 մանր պարզանկար, որ մեծ մասամբ առեւտած են յունական ամանների վրայից եւ ունեն դիցարանական բովանդակութիւն: Համարեա ամէն յօդուածի եւ բանաստեղծութեան ճակատն ու ոտքը զարդարուած են այդ նկարներով: Բացի այդ՝ հատորի մէջ տեղ են գտել 32 նկար, տպուած փայլուն թղթի վրա, որոնք ցուցադրում են որմանկարներ, դաշտանկարներ, դիմանկարներ, յայտնի գործիչների պատկերներ եւ արդիւնք են հայ ու օտար վրձինների: Այս հանդիմանքն արդէն «Նաւասարդ»ը զարմնում է մի սեղանի զարդ, մի թանկարան հին ու նոր, հայ եւ օտար արուեստի:

Այս հատորին աշխատակցել են համարեա բոլոր թիւրքահայ ականաւոր հեղինակները, ինչպէս նաեւ շատ ռուսահայեր: Այսպիսով «Նաւասարդ»ը կարող ենք նկատել իբր թիւրքահայ նոր գրականութեան հայելի, խիստ արժէքաւոր այն մարդկանց համար, որոնց հետաքրքրում է այդ գրականութիւնը:

Իր հարուստ բովանդակութեան եւ չքեղ հրատարակութեան հետ համեմատելով՝ զինք չնչին է եւ կարծում ենք, թէ այդ հանգամանքը պիտի նպաստէ



«Նաւասարդ»ի տարածման գործին: Մենք ջերմապէս յանձնարարում ենք այս ժողովածուն այն բոլոր մարդկանց, որոնք կ'ուզէին մի զաղափար կազմել թիւրքահայ նոր գրականութեան վրայ, ծանօթանալ այդ գրականութեան նորագոյն ձգտումներին: «Նաւասարդ»ից կարելի է բան սովորել եւ հաճոյք ստանալ:

Այս հատորը երեք մաս ունի: Առաջինը, որ կրում է «Գրականութիւն» խորագիրը, ամենից ընդարձակն է եւ բըռնում է ամբողջ գրքի համարեա մէկ երրորդը (220 էջ): Այստեղ տպուած են 48 բանաստեղծութիւն (մի-երկուսն արձակ) եւ 24 վիպակ, գրոյց, պատկեր, ուղեղրական յուշեր, բնութագրեր, եւ այլն: Սրանց մեծագոյն մասն ինքնուրոյն են: Երկու հատուած Միցկիւից, մի ոտանաւոր Վիկ. Աղանուրից, երկու էջ «Մտածումներ արուեստի մասին» Օդ. Ռոդէնի եւ Ս. Ուայլդի, մի թատերական գործ Մետերլինկի՝ «Ինքնամուտը», որ ծաւալով երկրորդ մեծ գրութիւնն է այս հատորի մէջ (24 էջ) — ահա այս բաժնի բոլոր թարգմանութիւնները:

Երկրորդ մասը, որ «Գրադասութիւն» վերնագիրն է կրում, բռնում է 50 էջ (221-272) եւ բովանդակում է 6 յօդուած, որոնցից մէկը թարգմանական եւ խիստ արժէքաւոր՝ ամերիկացի խորհմաստ էմբերսոնի դասախօսութիւնը արուեստի մասին:

Երրորդ մասը, որ կոչւում է «Գեղարուեստ» բռնում է մօտ 70 էջ եւ ունի 7 յօդուած, բոլորն ինքնուրոյն:

Կարող ենք ասել ուրեմն, որ այս հատորը համարեալ ամբողջովին ինքնուրոյն գործերից է կազմուած, որ մեծ արժանիք է: Թիւրքահայ գրականութիւնը այնքան հեղինակ ունի, որ «Նաւասարդ»ը միշտ կարող է իր այս արժանիքը պահպանել նաեւ յաջորդ տարիները: Մանաւանդ որ զայն իղէալը, որով դատակցուած է իմբագրութիւնը իր այս գուտ գրական եւ դեղարուեստական ձեռնարկին մէջ՝ ուղղակի պարտադրում է նրան այդպէս վարուելու: Խմբագրութիւնը վստահ է, կարգում ենք վերջին էջի վրայ, որ «Նաւասարդ»ը հետզհետէ պիտի դառնայ հայ արուեստի լաւագոյն ուժերուն խանդավառութեան մէկ օժախը եւ համեստ խթան մը հայ իմքնուրոյն գրականութեան եւ դեղարուեստի վերածաղկումին համար» (մենք ենք ընդգծել): Նոյն վերջաբանից իմանում ենք, որ յաջորդ հատորը ըլլալ է տեսնելու առաջիկայ տարին՝ միեւնոյն ծաւալով, նոյն բաժիններով, բայց աւելի «խնամուած բովանդակութեամբ»:

Առաջին մասում հանդիպում ենք ուսումնայ հին ու նոր անունների. Վ. Փափագեանը առել է մի կարճ գրոյց. Յոնիկը ցանկանալով աշխարհ տեսնել՝ դուրս է գալիս անտառից եւ անմիջապէս վերաւորուում: Լէյլի, Արմ. Տիգրանեան, Ե. Կուրդինեան տուել են մի մի ոտանաւոր. առաջինը մենութեան մէջ ծնկաշոք ազօթում է, ոչ թէ Աստուծոյ, որին կ'ուղէր նզովել, քանի որ «կեանքն ունայն է, բախտը սուտ», այլ հեռաւոր սիրածի պատկերին, թէևս դիտէ, որ այդ աղօթքն էլ մի «անմիտ խաղ է»: Երկրորդն ուղղում է տարածութեան մէջ մի քանի

տարտաձառքեր, որ ծնում է դեռատի հոգում արթնացող դարունը, երրորդը փորձում է նկարագրել մի գիշեր, տեղտեղ յաջող սողերով, ամբողջը խառն է ու յանդի բերած: Մի-մի ոտանաւոր ունին Յ. Պանարեան եւ Ա. Փանոսեան: Սրանով վերջանում է ուսումնային մասնակցութիւնն այս բաժնին:

Ռուսահայերի հետ հաշիւներս վազելու համար յիշենք Սեւումեանի յօդուածը՝ «Հայ թատրոնին վերածնունդին համար», (Գ. մասում) որի լեզուն խիստ բազմութիւնը անհրաժեշտ է համարել թիւրքահայերէնի փոխելու: Հեղինակն այստեղ նոյն մտքերն է արծարծում, ինչ որ իր զեկուցման մէջ, որ կարգացել է Թիֆլիսում: Մարգարիտ Թարայեան զրի է առնում իր «Տպաւորութիւնները Կոմիտաս վարդապետի անմին ու գործին լուրջ», հազարելով մի քանի կենսագրական տեղեկութիւններ եւ պատմելով մի քանի դէպքեր, որ պարզում են Կոմիտաս վարդապետի անմիտ, գործը եւ թողած տրապաւորութիւնն օտարների վրայ: Կոմիտաս վարդապետին ինքը մի ընդարձակ յօդուած ունի Լօռու գութան-երգի մասին, որին հետեւում է այդ երգն իր ձայնագրութեամբ: Սա մի ուսումնասիրութիւն է, եւ եղակի մեր գրականութեան մէջ բովանդակութեամբ ու մեթոդով: Այս յօդուածը մի նոր աշխարհ է բաց անում անծանօթ մարդու աչքին: Երկար ժամանակ մենք երազում էինք տեսնել ռամկական ստեղծագործութեան մի իղէալական հետազոտող եւ մեղ թւում է, թէ գտել ենք մեր որոնածը Կոմիտաս վարդապետի մէջ: Ռամկական երգը զբաղանքանաստեղծութիւն չէ. մէկը ստեղծուում է պարի շրջանում, աշխատանքի ժամանակ, հարսանիքին կամ սպասանք, միւսը մեծ մասամբ գրասեղանի մօտ:

Մէկը ստեղծուում է երգուելու համար, միւսը՝ կարգալու: Մի տեղ եղանակն է կաղապարիչ տարրը, միւս տեղ՝ տաղաչափութիւնը: Ժողովրդական երգն անկարելի է լիովին բմբռնել առանց եղանակին ծանօթ լինելու. առանց եղանակի նա երգ չէ, այլ քնարական հաս-

ուած՝ նա կորցնում է իր արժէքը, երբ կարդացում է միայն. այն ինչ որ երգելիս թւում է թելագրական ու գեղեցիկ, կարդալիս՝ կորցնում է իր հմայքի մի խոշոր մասը: Բարեբախտաբար Կոմիտաս վարդապետը բանասիրական հրմտութեանը միացնում է երաժշտազէտի լուրջ պատրաստութիւն եւ հայ երաժշտութեան անմրցելի հմտութիւն: Գործադրելով իր տաղանդը երկու ուղղութեան՝ նա արտադրել է մի յօդուած, որ կոչուած է օրինակ դառնալու յետագայ հետազոտողներին: «Երաժշտական բանասիրութեան» մի նմուշ է այս գրութիւնը, որ առաջինն է ծնունդում եւ զարմանալի հմտութեամբ ու մեկին ցուցադրում է այն հարուստ բովանդակութիւնը, որ ունի Լոռու գութաներգը եւ որ, համոզուած ենք, շատ քչերն էին ենթադրել: Մեր կարծիքով այդ յօդուածը ամենից արժէքաւոր, հմտալից եւ արտասովոր գրութիւնն է «Նաւասարդ»ի մէջ, արժանի ամենախորին ուշադրութեան: Կոմիտաս վարդապետը նոյնն է հայ երաժշտութեան համար, ինչ որ Թ. Թորմանեանը հայ ճարտարապետութեան համար: Յովհ. Թումանեան, Կոմիտաս վարդապետ եւ Թ. Թորմանեանն — ահա երեք անուն, որ խորհրդանշում են մեր կուլտուրական զարգացման աստիճանը. մէկն ստեղծում է հայոց ինքնուրոյն գրականութիւնը, միւսները հետազոտում են հայ երաժշտութիւնն ու ճարտարապետութիւնը՝ ապագայ ստեղծագործողների ուղին հարթելով:

Ինչպէս տեսնեք, «Նաւասարդ»ի նըպատակն է դառնալ «համեմատ խթան մը հայ ինքնուրոյն գրականութեան եւ գեղարուեստի վերածնունդին համար»: Այս տեսակէտից էլ կը գնահատենք «Նաւասարդ»ի բովանդակութիւնը, ոչ այնքան առանձին հատուածները նկատի առնելով, որքան ընդհանուր ոգին եւ ուղղութիւնը:

«Գրականութիւն» բաժնի մէջ մենք հանդիպում ենք ծանօթ անունների՝ Վարուժան, Սիւսանիս եւ այլն: Առաջին երկուսը խանդավառ համակրողներ եւ

հետեւողներ ունեն յատկապէս թիւրքահայ գրականութեան մէջ. պէտք է կարծել, ուրեմն, որ նրանց ստեղծագործութիւնը գոհացում է տալիս միջավայրի ճաշակին եւ ոգեկան պահանջներին: Տեսնենք թէ ի՞նչ են ասում թիւրքահայ նորագոյն բանաստեղծութեան այս ակադեմիկոսները:

«Նաւասարդ»ի առաջին իսկ էջը գրուած է Վարուժանի մի բանաստեղծութիւնը, որ կոչուած է «Նաւասարդեան»:

Համաբոյ հայկեամ Նաւասարդեամ առ տօնբում,
Արեւափառ՝
Ա՛յ վերածնէ փլատակներդ, եւ փառաքոյ
Քեարք առ:
Յամուս Ոյծիմ, յամուս Գեղիմ, Վտի՛ր մեհեամ
Աստուածներում
Ջանք մեռիդ՝ բազմէ բազմ համառօտէ
Հուր առ տրիմ:
Եւ բարձրացոյր Ամանիտի ծծերմ ի վեր
Բաժակդ մուռ,
Յետոյ գոնուդ Ֆեքրդներում տրիտի վրայ
Լեցուր, լեցուր:
Ջի մեմէ յամուս Սէրիմ, Սերմիմ, Բու էիմ Յեղիդ
Մարմարէմ կոյս,
Մեմէ, Ջաւակներդ օգոստափառ, պիտի կերտեմ
Նոր Արշալոյս:

Մի քանի դիտողութիւններ: Ապահով եմ, որ ընթերցողը մի անգամից չհասկացաւ այս հոսանաւորը: Պատճառը նրա մթութիւնն է. մինչդեռ գրականութիւնն իր բովանդակ առումով պաշտօն ունի պարզել մթինը, քանի որ նա բանականութեան լեզուներից մէկն է: Հեղինակը կոչ է անում հայկեան հանճարին, որ վերածնէ փլատակների տակից «Նաւասարդի սա տօներուն», որոնք վաղուց է չկան, թէեւ բանաստեղծն ասում է «սա տօներուն»: Հանճարը վերածնէ ինչի՞ համար. որ ջահը մեռի՞ն՝ յանուն ոյժի եւ գեղեցկութեան՝ արիւն ու հուր սփռէ աստուածների մեհեանում բազմից բազին անցնելով: Եւ յետոյ, որ բաժակ բարձրացնէ՝ ոգւի Անահիտի ծծերը եւ ապա զոհուող քերթողների սրտի վրայ թափէ: Ինչո՞ւ. որովհետեւ այդ հանճարի օգոստափառ գաւակները ցեղի մարմարից կերտելու են նոր արշալոյս:

Ի՞նչ աստուածներ ժեհեան է դա, ի՞նչ զոհուող քերթողներ են, ինչո՞ւ են դոհւում եւ ի՞նչ նպատակով. ո՞րն է ցեղի կոյս մորմարը եւ ի՞նչպէս են մարմարից արչալոյս կերտելու՝ թէկուզ եւ նոր, եւ ինչո՞ւ անպատճառ դրա համար նրանց սրտի վրայ բաժակ պիտի թափեն եւլն, եւլն.։ Հնչուն բառերի կուտակումներ, որոնք չեն տրտայայտում ոչ մի պայծառ միայք կամ զգացում եւ ուրեմն չեն կարող ընթերցողի մթին զգացումները եւ միտքը պարզել՝ զեղեցիկ ու մշակուած ձեւի բերելով։

Բայց մենք նպատակ չունինք գեղարուեստական տեսակէտից ընկելու թիւրքահայ բանաստեղծների երկերը։ Մեզ ուրիշ խնդիր է հետաքրքրում։

Սրկերդը բանաստեղծութիւնը, որ կուլում է «Նաւասարդեան աղօթք առ զիցուհին Անահիտ», գրել է Սիւսման-թօն, «Մեղկութեան կրօններն» թողել եմ, ասում է հեղինակը. մեհեանիդ մարմարէ դուռը բաց, ո՞վ Անահիտ, ուզում եմ նրա դիմաց հակաստ արիւնեմ. թոյլ տուր, որ աղօթեմ ձեւիդ առաջ, ես հաւատում եմ քեզ։ Ես եկել եմ ուխտի. ուսիս քղամիդ, ձեռքիս՝ բարամուշ, արծաթ ցնցուղ եւ արցունքով լի խնկաման. իմ ստուերին հետեւում են եղնիկներ։ Բազրեւանդի արեւորդիները թող ցուրը զոհեն քեզ, հարսները տատրակ թոցեն եւ աղլիկներն իրենց մարմինը քեզ րաշխեն։ Թող որ վրէժդ լուծեմ, ահա խաչափայտի երկու թեւերը ձգում եմ բազնիդ կրակների մէջ եւ Լուսաւորչի կողերից ծխում եմ մի ժանտ ոսկր։ Բեղմնաւորութիւն արեւակի տարրից եւ մեզ համար մի մի անյաղթելի հզօր Աստուած ծնիր քո ազամանդէ արզանդից։ Այս է աղօթքը։ Նորից հնչուն բառեր, որ ծնում են մի շարք «ինչո՞ւ» ներ...

Այսպէս են ստեղծում ամէնից ակաւաւոր թիւրքահայ բանաստեղծները։ Այս ամէնը, անշուշտ ինքնատիպ է, բայց ո՞րքան հարազատ է հայ հոգուն ու կեանքին, որոնց անսալով միայն հնարաւոր է հայ ինքնութիւնը զրականու-

թիւն եւ զեղարուեստ ստեղծելը։ Գրականութիւնը մի պատասխան է կեանքին. որքան պատասխանը տեղին է եւ յաջող, այնքան զրականութիւնը հասարակական եւ զեղարուեստական արժէք ունի։ Թիւրքահայ կեանքն իր հարցումներին այս պատասխանն է տալիս իր քերթողներից։ Նկատելով, որ Վարուժանի եւ Սիւսմանթոյի ուղղութեամբ ստեղծում են շատ ուրիշներ, կարելի է ասել, որ սա մի գրական հոսանք է։ Փորձենք գծել այդ հոսանքի ուղղութիւնը եւ տեսնենք ի՞նչ դաշտեր է գնում ոռոգելու։

Չնայած անսովոր ու խորթ յղացումին, անորոշ ու մթին պատկերներին՝ կարելի է ասել, որ Վարուժանի, Սիւսմանթոյի եւ նրանց հետեւողների ստեղծագործութիւնները մի վերադարձ էին զէպի հայութեան հեթանոս անցեալը՝ քրիստոնէական շրջանի ժխտումով։ Ուսումնասիրելով կողք կեր են դառնում Անահիտական կրակին։ Իր հոսթեամբ սա մի նոր գրական հոսանք է։ Սա հին հոսանքն է, որ փոխել է իր հոսնը։ Նոյն ազգային-կրօնական ուղղութիւնն է, որով ստեղծում էին թիւրքահայ բանաստեղծները 50-60-ական թվերին. այն տարրերութեամբ, որ մինչդեռ Բազրատունի, Ալիշան եւ Վերք ընդ նոսա» հեթանոս հայերին անգամ վերագրում էին քրիստոնէական բարեպաշտ զգացումներ ու մտքեր, նորերը հեթանոս զգացումներին եւ ապրումներին առաջին տեղն են տալիս թէ՛ այն ժամանակ, երբ անցեալն են վերստեղծում եւ թէ՛ այն ժամանակ, երբ ներկան ունին նկատի։ Նորերի միտքն եւս ուժի եւ գեղեցկութեան իդէալները որոնում է հայի անցեալում, բայց՝ հեթանոս ուժ է եւ գեղեցկութիւն նրանց որոնածը եւ հեթանոս անցեալում։

Սրանց միտքն եւս աշխատում է կրօնական ուղղութեամբ, բայց նրանք խուճկ են ծխում ոչ թէ քրիստոնեայ հայի Աստծուն, այլ հեթանոս հայի Անահիտին։

Ուշագրաս է այն ժխտական վերաբերումը, որ ցոյց են տալիս նորերը դէ-

պի ջրիստոնէական կրօնը, սա մի հա-
կադոնցութիւն է հայ եկեղեցուն, որ
այնքան լայն ազդեցութիւն եւ մեծ գեր-
ուհի թիւրքահայ կեանքում: Այստեղ
լուում է խուլ արձագանգը այն վերա-
ծնութեան, որ կատարուում է հայու-
թեան մէջ Օսմանեան սահմանադրու-
թեան հետեւանքով: Պատմական իրա-
դարձութեանց բերումով հայ տարրը
ստացել է քաղաքական կշիռ՝ անկախ
այս կամ այն յարանուանութեան պատ-
կանելուց: Թիւրքահայը դուրս է գալիս
եկեղեցու բակից իջնելու համար քաղա-
քական առաջարկէ. ծխականը դառնում է
քաղաքացի եւ եկեղեցին կորցնում է իր
բացառիկ նշանակութիւնը:

Միւս կողմից ուժի գերակցութիւնը
ծնում է աւելի հզոր դառնալու տենչանք
եւ բանաստեղծների երեւակայութիւնը
յաճում է հայի հեթանոս անցելու, ուր
կայ ուժ ու գեղեցկութիւն եւ շկայ
այսօրուան եկեղեցին, ուր պաշտամուն-
քը թուում է բանաստեղծական եւ համա-
պատասխան փամանակիս ախորժակնե-
րին, որ նետել են մէկտեղ քրիստոնէու-
թեան զուգիչ հրահանգները: Միաման-
թուն դիմում է Անահիտին, ասելով.
«Տուր ինձի չէկ զօրութիւնն Արտաշիս-
եան նախնիքներուս»:

Թիւրքահայ վերածնութեան անդի-
տակից մղումը բանաստեղծների հոգու
մէջ անդրադառնում է իբր մի տենչ վե-
րադարձի՝ դէպի հայութեան հեթանոս
ուժն ու կրօնը: Մտաւորական անցեալի
մէջ է իդէալներ որոնում, որովհետեւ
պտուղը ծառից հեռու չի ընկնում: Հե-
ղեւորական բանաստեղծները մեղ երգե-
ցին հայի կրօնն ու պատմական անցեա-
լը. նրանց ողով դաստիարակուած նոր
սերունդը նոյն աղբիւրներին է դիմում՝
ստեղծելով ազգային-կրօնական ուղղու-
թեամբ: Բայց հաւատարմի՞մ է հայու-
թեան տենչերի այս թարգմանութիւնը.
մեղ թուում է՝ ո՛չ: Սա դադարաւորի
հայութեան ըմբռնումն է ազգային ի-
դէալներին ու տենչերին, մի ցոյացում վե-
րածնութեան շողերի՝ անողորմ հայկի-
նների մէջ, որ տալիս է կեղծ պատկեր:

Վարուժան, Սիւսանթո եւ որոնք
գնում են նրանց լուսով, իսկ եւ իրենց
կապերը հայ ժողովրդի հետ: Երկու
ոտուար միջնորմ բաժանում է նրանց
հայութեան սրտից ու հոգուց. մէկը հա-
յոց պատմութիւնն է, որ նրանք չեն ըզ-
գացել ու ապրել հոգով, այլ դիտել են
իրր թատերական տեսարաններ, միւսը
Փրանսական նոր գրականութիւնը՝ ար-
դիւնք մի յագեցած եւ ուժասպառ քաղ-
քենութեան: Մէկը փակել է նրանց ա-
ռաջ իրական կեանքը, միւսը՝ խանդա-
րել է աչքի պայծառութիւնը: Այս պատ-
ճառով նրանք իդէալները որոնում են
անցեալի մէջ եւ իրական կեանքի մի-
տումները թարգմանում են անհարապա-
ռա միջին պատկերներով, միանգամայն
խորթ հայ մարդու սրտին: Նոյն բախտն
ունեցան թիւրքահայ տառապանքի ճի-
շերը տասնեակ տարիներ առաջ. նրանք
թարգմանեցին այնպիսի պատկերնե-
րով ու լեզուով, որ անմատչելի մնացին
հանրութեան եւ շրջակային ոչ ոքի:

Հայութեան իդէալները անցեալի մէջ
չեն, այլ ապագայի եւ հանրային ոգե-
ւորութեան աղբիւրը անցեալը չէ, այլ
ներկան: Հապիւ թէ մէկը, որ ճանաչում
է թիւրքահայ ժողովրդին, համար-
ձակուի ասել, որ նա տենչում է նաւա-
սարդի սօսեր եւ Անահիտական պաշտա-
մունք: Այդ յղացումները ազգային չեն,
այլ որոշ խմբակի, որ ունի ազգային
ապրումներ, բայց թարգման չէ ազգա-
յին շարժման: Տարակոյս չունինք, որ
այս եւ նման բանաստեղծութիւնները
չեն կարող լայն շրջանակներ յուզել եւ
ժողովրդական զանգուածների խուլ ապ-
րումներին ու միջին տենչերին պայծառ
ձեւեր ծառայել: Այսպէս է միշտ զապու-
թը, երբ ուղում է դառնալ ազգի բերան.
այսպէս են կեանքի լայն ճամբաներից
շեղուածները, երբ ձգտում են կեանքն
ոսկրորդել եւ նրա միտումները պարզել
ու արտայայտել: Սահմանափակ շրջանի
բանաստեղծութիւնն է սա, ըմբռնելի եւ
զնահատելի այդ շրջանի համար:

Բայց Վարուժան եւ Սիւսանթո լա-
ւազոյն ուժերն են թիւրքահայ նոր բա-

նաստեղծութեան. նրանց դեռ հասնում են կեանքի ձայները, թէեւ նրանց հոգում ծնում են անհարազատ արձագանգ: «Նաւասարդ»ի մէջ կան ուրիշները, որոնք շատ աւելի մեկուսացած հոգիներ ունին: Այդպէս են Սիրունի բայց մանաւանդ Գոլանճեան, որ կատարեալ այրարանակ է: Սրանք մշակում են նիւթեր եւ արտայայտում ապրումներ, որ ցուցադրում են նրանց խորթացումը կեանքից, եւ հոգու աղքատութիւնը:

Նախ պէտք է մատնանշենք դիտարկութեան պահասը, որ նկատում է նրանց լեզուի մէջ: Ազգային ինքնագիտակցութեան առաջին նշանը սեփական լեզուն ապրելն է հոգով: Թիւրքոսոյ հեղինակների բառաշատ դրուածքները կարգաւորվ մենք գալիս ենք այն տխուր եզրակացութեան, որ այդ դիտարկութիւնը շատ է պակասում Բոսփորի ափերում: «Նաւասարդ»ի խմբագիրներն, օրինակ, գրում են, որ իրենց ժողովածուն պիտի դառնայ «համեստ խթան մը հայ ինքնուրոյն գրականութեան եւ գեղարուեստի վերածաղկումին համար»: Այս գեղեցիկ բառերը շարողը չի ապրել իր դաժնը. եթէ նա ապրէր ամէն մի բանում, այն ժամանակ «խթանը» «համեստ» չէր կարող լինել եւ ոչ «վերածաղկում» կարող էր «խթանուել»...

Այս տեսակէտով «Նաւասարդ»ի բանաստեղծութիւնները անհեթեթեանց ընդարձակ ծով են. յիշենք մի քանիսը միմիայն Ե. Գոլանճեանի եւ Յ. Սիրունու ոտանաւորներից: Այնտեղ գուշ հանգիւսում էք «բացեղէն քնարի», այնտեղ աչքերը լաւում եւ բացով եւ քնարի շէշտերը բացագէտ են. համայն այնտեղ շինուած է շաքարով ու մեղրով» եւ «խունկերն իջնում են մինչեւ հոգին»։ Հայելու մէջ քանդակում է մի նոր եւ անարկու Աստուած. մի մերկ աղջիկ մերկանում է, մերկանում եւ շղարը թողնում, որից երեւում է թէ մերկ չի եղել. այնտեղ աղբիւրներից անձրեւ է կաթում: Գոլանճեանի համար «արշալոյսները հեւում են», իրերը լուսանել են», «բոգների երկրը Յշուի ունի», «նո-

նիների սօսափիւնները անաւառ են», մենութիւնը «զողպատ շնշտ» ունի, խաւարը մածուցիկ է, «սառ կուպր է», «ամալիս զգայարանը արիւն ունի, որ տալիս է մեծ Տղուկին, Աստծուն», եւայլն, եւայլն:

Իսկ մտքերը, ահաւասիկ.

Եսիմ տխուր կարօտն վեր անպատում,
Մաւտում իմ յիշում է այնեւ, այլ իմ սիրեալների:
Այնիմ իմ սիրտս եւ մքնալորսն այլ իմ սէր:

Չհասկացա՞ք: Ես էլ մեզ հետ: Ո՞ւր համար են գրում այս տեսակ ոտանաւորները եւ ո՞ւր են պէտք: Հեղինակի եւ իր լաւ ծանօթների համար, որոնք կարող են գնալ մօտը եւ անմամբ բացատրութիւններ լսելով ամէն բանի ու տողի համար՝ «բարոյանել» ոտանաւորի անհասանելի գեղեցկութիւնները...

Ի՞նչ թեթեւութիւն է դուռ մարդ, երբ այս խեղդուկ, կեղծ, շինծու եւ նեղ աշխարհից դուրս է գալիս ժողովրդական ստեղծագործութեան լայն բացատր. երբ զանազան «նիւթերի տարտամութիւններից», «նաթիւներից» ու «թորերից» յետոյ կարդում էք.

Աստղիկ մի երկնաց ի վար
Կը սիրէ՝ ձկնակն ի ծովում.
Ո՛չ աստղիկն է վար գայաւ,
Ոչ ձկնակն ի վեր գծալու:

Կամ թէ՛

Մացիկդ՝ առաւօտ մում
Աստուտում շաղկերն է ի վրան.
Երթա՛մ, քարի արեւ լինիմ
Գամ ցաքնիմ, շաղկերդ ծաղկիմ:

Փա՛ռք Աստծոյ, բացականում էք, դեռ ապրում է հայ ժողովուրդն ու իր ստեղծագործ հանճարը, ոչ թէ փլատակների տակն է նա, ինչպէս կարծում է Վարուժան, այլ այսօր էլ դեռ ապրում է գիւղերում եւ ստեղծում պարզ, գեղեցիկ, անկեղծ, եւ կարող է առաջնորդել խորթացած ու մեկուսացած քերթողներին...

Թիւրքոսոյից ովքեր խոնարհութիւնն ունեցան այդ հանճարի ձայնը լսելու եւ իմաստութիւն ունեցան նրան

անտալու՝ իրենց անունը կտակեցին ապագային՝ Հայրիկ, Սրուանձտեան, Պարոնեան. նրանց սիրտը տրոփում էր ժողովուրդի լայն սրտի բարախին ներդաշնակ: Թիւրքահայ դրականութեան նշանաբանը պէտք է լինի «վերագարձ», այո՛, բայց վերագարձ դէպի ժողովուրդը, նրա ստեղծագործութիւնը, նրա մտքի եւ գիւցումի ձեւերը, որ պիտի տարերքը կազմեն «հայ ինքնուրոյն գլխավորութեան եւ գեղարուեստի»: Պէտք է շարունակել Հայրիկի եւ Սրուանձտեանի գործը, ազնուացնել, հարստացնել ու

վեր բարձրանալ, որովհետեւ բարձրանում է ժողովուրդի ստեղծագործութեան ալիքը: Շուտով կ'երեւայ անոգոք դատաւորը՝ հեծանոցը ձեռին եւ արդէն տապարը ծառերի արմատներին է դրած: Բոլոր ստեղծագործ կարողութիւնները հայութեան պէտք է ջանան ցորենի հաս դառնալ՝ պիտանի հանրային գործածութեան, բոլոր ծառերը պիտի ջանան տալ պտուղ բարի, հարիւր լինի, յիսուն թէ երեսուն...

Ն. Ա.

ՔՆՆԱԴԱՏԻՆ ԿՈՉՈՒՄԸ

...Պէտք է ըլլալ ժամանակին հետ. ինչ որ պէտք է նշանակէ, նախ եւ ապա, մերժել կեղծ մտանքիւնները, հասարակ ձեւերը, կասկածելի ձգտումները: Լուսագոյն ձեւը, ծառայելու արուեստագէտներուն ու արուեստին, մասնանշելն է իրենց ճամբուն վրայ լարուած թակարդները:

Հեզմանքն ու ֆննդատութիւնը դարմաններ են, որոնք երբեք այնքան անհրաժեշտ չեն եղած, որքան այսօր, որպէս հակաթոյն՝ յաջողութեան քերած պատրանքներուն, հոգիներուն եւ արտադրած գործերուն առեւտրականացման:

Լրացրողի մը գլխաւոր պարտականութիւնը այսօր, չազդուիլն է, չեն-

թարկուիլն է, մնալն է մատչելի եւ տրամադրելի՝ նշմարտութեան, առանց ատելութեան, առանց մոլեռանդութեան. դիմադրելն է՝ փրոփականախ յարձակումներուն, որոշ շահերու շահթաժնեբուն, պորտախ խաղերու համաձայնութեանց. այդ գնով միայն ան կրնայ ծառայել իր ժամանակին, վերհանելով, ժամդակելով, օգնելով նոր նշմարտութեանց, որոնք դանդաղօրէն ծնունդ կ'առնեն:

Քննադատութիւնը այսօր քերես աւելի դժուար է քան արուեստը, քանի որ կը մղէ աշխարհը նոր անդրադարձումներու:

ԱՆՏԻՔ ՓԱՐԻՆՕ

(«Ար» 31 Հոկտ.-6 Նոյ.)

ԲԱԳԻՆԻ ՀԱՐՅԱՐԱՆԸ

— ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ —

ԵՒՈՒԱՐԻ ՏԱՐՕՆԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ա. Պատասխանում.— Ամէնէն անտարբեր քաղաքացին անգամ պէտք է ինքզինք պարտաւորուած գոյայ հետաքրքրուելու քաղաքականութեամբ, այն չափով որ քաղաքականութիւնը խնդրոյ առարկայ կը դարձնէ իր հայրենիքին ապահովութիւնն ու ապագան։ Այս համոզումով, գրաւէտը իրեն քաղաքացիներու մտային պարզացման ծառայող տարր, կարեւոր դեր ունի կատարելիք քաղաքականութեան մէջ։

Բ. Պատասխանում.— Այո՛, ինչպէս երաժշտութիւնը եւ ճարտարապետութիւնը։ Այս արուեստներէն իւրաքանչիւրին լուրջ ծանօթութիւնը հեղտութեամբ կը կլանէ նուիրեալի մը ամբողջ կեանքը, որքան ալ երկարատեւ ըլլայ ան։ Այս իսկ պատճառով, բաղձալի է որ ամէն անհատ իր նախընտրած մարդին մէջ սահմանափակուի, որպէսզի կարենայ շօշափելի արդիւնքի մը հասնիլ։ Առանց մոռնալու սակայն, մեր նախնեաց լեզուով բանաձեւուած սա իմաստուն պատուէրը. «Ձայնս ցլտօք է առնել եւ զայն ոչ քռողոյ»։

Գ. Պատասխանում.— Գրագէտը, կամ աւելի լայն ըմբռնումով մտաւորականը, իր բովանդակ ներշնչումը կը օտանայ մարդկային ընկերութեան կեանքի յայտնակերպումներէն (մանիֆէստալիստ)։ Ընկերային կեանքն է որ իւրաքանչիւր տաղանդի կ'ընծայէ անոր զարգացման ամէնէն յարմար պայմանները։ Առանց ընկերային կեանքի ծանօթութեան, ամէնէն հզօր տաղանդը սահմանուած է ամուլ մնալու, ինչպէս անապատի աւազին մէջ ինկած ամէնէն կենդողուտ սաղմը դատապարտուած է փճանալու։

Արդ, քաղաքականութիւնն ալ, իրեն ազգի մը կամ Ժողովուրդի մը հան-

րային կեանքի մէկ երեսը, չի կրնար եւ պէտք չէ որ անտես առնուի գրագէտին կողմէ, այն վախով, որ ուրիշներ կրնան զինք քաղաքական ձգտումներով ամբաստանել։ Բաւական է որ գրագէտը կարենայ տարբերու համեմատութիւնը պահել իր գործին մէջ։

Արդիւնէլ Հայ գրագէտին որ քաղաքականութեամբ հետաքրքրուի՝ պիտի նշանակէր զատապարտել Արովեանի եւ Բաֆֆիի գործը, իսկ Գրիստափոր հաւաքատ ծնունդն է Արովեանի եւ Բաֆֆիի մտքին, ինչպէս Գարիպալտին Մանձոնիի եւ Լէոփարտիի, ինչպէս Տանթոն, Վոլթէրի եւ Ռուսսոյի՝ եւ ինչպէս Յիսուս՝ Մարգարէներուն։

Դ. Պատասխանում.— Եթէ քաղաքականութեամբ զբաղիլ կը նշանակէ ձգտիլ զիրք եւ աթոռ գրաւել պետական սպասարկութեանց մէջ, այսպիսի ճիգ մը բոլորովին անարժան է գրագէտին, որուն կոչումը ամէնէն բարձրն է մարդկային լոյսը տենշանքներուն։ Վկայ՝ նոյն ինքն ներքին, որ տիեզերական իր դասին վերայէն նախանձաբար կը հառաչէր լուսուներին ետեւէն կոյր եւ թափառական գուսանի մը, որ Հոմերոսն էր։ Այս գաղափարաբոյ բռնակալը կարելի չէ մեղադրել փառամոլութեամբ, որովհետեւ, անոր սպականած որտիւն մէջ, դեռ անեղծ կը մնար ճշմարիտ տաղանդի պաշտամունքը, ինչպէս աղամանդի հատիկ մը, որ աղբիւսին մէջն անգամ անեղծ կը պահէ իր փայլն ու շողը։ Միտքը միակ անկողոպտելի դանձն է մարդուն, գերազանցապէս գրագէտին եւ արուեստագէտին, կամ մէկ բառով մտքի մշակին համար։ Մտքի զործունէութեան արդիւնքներն ալ նոյնպէս անկորնչելի են մարդկութեան համար, մինչ ամէնէն

գլխավոր գործընկեր, քաղաքական թէ՛ գինուորական մարզերու մէջ, յաճախ մուխ ու մոխիրը կը վերածուին:

Յայտնարար, այս յախտնական ճշմարտութիւնն է, զոր Սահակ Պարթեւ կը պատգամէր Վռամշապուհ թագաւորին, երբ զայն կը յորդորէր հովանաւորել Մեսրոպի ծրարները հայերէն գրերու գիւտին:

Արդարեւ, ի՞նչ մնաց մեզի Մեծն Տիգրանի աշխարհակալական նուաճումներէն: Մուխ ու մոխիր միայն:

Մինչ Տարօնցի վանականին՝ Մեսրոպի անաղմուկ ու ինքնամփոփ գործը, աւելի քան տասնըհինգ դարերէ ի վեր յարաճուն փայլով կը ճառագայթէ բոլոր Հայ հոգիներուն մէջ:

Իսկ քաղաքականութիւնն ու պրակտիկութիւնը համադրելու գործը ինծի կը ներկայանայ բաժանումի երեւոյթով: Այսինքն, գրադէտը պիտի մասնակցի քաղաքական պայքարի մը, բայց առաջագրուած նպատակին հասնելէ ետք, պէտք է հետեւի այն հռչակաւոր դիմումներին, որ պատերազմէն ետք գէշերը կը թողու գորանոցին մէջ եւ ինք կը փութայ գէպի արօրը:

Ե Պատասխան. — Համաձայն Ժանօթ խօսքի մը, որ ողբացեալ Զօպանեանին կը վերադրուի. «Եթէ ամէն Եւրոպացի մէկ պարտակաւորութիւն ունի իր երկրին հանդէպ, իրաւանջիւր ինչ երեք պարտակաւորութիւն ունի իր հայրենիքին հանդէպ»: Անուշա, Զօպանեան այս համոզման եկած էր, նկատի ունենալով մեր ժողովուրդի ծով կարիքները եւ անոնց գոհացում տալու մեր տրամադրելի միջոցներուն անբաւականութիւնը: Այսպէս, Հայ գրադէտը միանգամայն թէ՛ ուսուցիչ է, թէ՛ խմբագիր, թէ՛ ազգային գործիչ եւ այլն: Կ'արժէ աւելցնել, որ գործունէութեանց այս իրերաթափանցումը կը տեսնուի նաեւ մարզերով ու միջոցներով հարուստ ազգերու մէջ:

Լամարթին, որ միջազգային գնահատանքին մէջ կը համարուի ոչ միայն մէկը աշխարհի մեծագոյն բանաստեղծներէն, այլ բանաստեղծութիւնն իսկ,

Արտաքին Նախարար եղաւ:

Վիքթոր Հիւկօ, որ Ժորժ Գուրմիլներ կարծիքով առանձինն կը զուգակշռէ ամբողջ Փրանսական պրակտիկութիւնը, եղաւ Ժերակուտական եւ այն ալ ոչ իբրեւ խորհրդանշական լուռ երեւոյթ (Ֆիլիքսիւրան) մը, այլ բաւական աշխուժ եւ աղմկարար անդամ մը Ֆրանսայի Ազգային Բարձրատիճան Ժողովին:

Փատերիւսքի, աշխարհահռչակ դաշնակաւորը, եղաւ Լեհաստանի Հանրապետութեան Նախագահ: Թէպէտ Քլեմանսօ երբ անոր հանդիպեցաւ Ազգերու Դաշնակցութեան նորանցքներուն մէջ, հիասթափութիւն չպահեց. «Աւա՛ղ, ինչ անկում»: Բայց վազբը, իր հարուածները կու տար առանց մտահոգուելու առնոց հետեւանքներով:

Զ. Պատասխան. — Մեր հանրային կեանքին մէջ, որ դժբախտաբար քաղաքացիական առողջ դաստիարակութեան մը օրինակը չի տար, — քանի որ հանրային վէճերն ու անհամաձայնութիւնները դիւրաւ կը չարափոխուին անձնական թիկնախնդրութեանց —, գոհունակութեամբ պէտք է նշել, որ հայ բանաստեղծութիւնը գերծմնացած է հատուածական ազդեցութիւններէ: Անկուսակցական թուամանեան, շատ աւելի յիշատիւական է իր կարգ մը էջերուն մէջ, քան Իսահակեանը, երբ դեռ դաշնակցական էր եւ մաս կը կազմէր ղեկավարութեան: Համայնավար Զարենցը, իրեն պարտադրուած կաղապարներուն մէջն անգամ աւելի խանգարուածն էր դիւցաղներգած է Դաշնակցութեան գործը, քան կուսակցական Համաստեղը, որ կը մտածէ ու կը շարժի բոլորովին ազատ պայմաններու մէջ: Անկողմնակալ է նաեւ Թէքէեան, նոյնիսկ իր «Հայերգութիւն» խորագրուած հատորին մէջ:

Հատուածական ոգիով թելադրուած էջերը ճշմարիտ գրականութեան գէժ այն են, ինչ որ է յարգը մաքուր ցորենի կողքին: Կ'արժէ հոս յիշել Դաշտենցի հետեւեալ գեղեցիկ առղը, որ վճիռ մըն է. «Յարգը զնում է, ցորենն է մնում»:

Ե. Տ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գրեց՝ Վ. ՕՇԱԿԱՆ

Պատմութեան համար, ապսիւրտի թատրոնը իր նոյնքան ապսիւրտ գոյութիւնը կը սկսի Փարիզի մէջ, 1952-1953 թատերական սէզոնին, ձմեռ իրիկուն մը երբ աննշան թատրոնի մը մէջ առաջին անգամ ներկայացուցաւ Մամուէլ Պէլէթ-թի Ան Աքամտան Կոտոն (ճիշդ է որ իօնէսթ-ի Լա Լըսոն-ը 1951-ին ու Լէ Շեզ-ը 1952-ին ներկայացուցան, սակայն շատ կարճ, մէկ արարնոց խաղեր էին ու իրենց իմացական պարունակութիւնը այնքան պայթուցիկ չէր որքան Կոտոն-ի)։ Երկու Էլօշարմեր (պատարկապարտ թուր չի տար ամբողջ իմաստը քօշար-ին որ, հակառակ մեր ընթացիկ ըմբռնումին, կրնայ ոչ գող ոչ ալ անուս ըլլալ ալ պարկեշտ, թափթփած, կեանքը դիւրին ու փրկութեամբէն առնող ու մանաւանդ՝ պարզ, ընկերութեան հիւանդութիւնէն բուժուած մէկը ըլլալ) գիւղի մը ամայի ճամբուն վրայ կը սպասեն Կոտոն-ին որ խոտացած է գալ ու փրկել զիրենք իրենց կացութիւնէն։

Մինչեւ գալը կը խօսին իրար հետ, կեանքի, մահուան, անճանապարհութեան, ժամանակի մասին առանց շատ լաւ հասկնալու գիրար։ Երբեմն կը կատակեն ու քէլ կը մնայ որ կոտին ալ...։ Չեն գիտեր թէ ով է ան, ուր է ան։ Յայտնի չէ թէ կա՞յ իրօք Կոտո մը։ Երկու գիւղեր նոյն տեղը կը սպասեն ու Կոտոն չի գար, անշուշտ։ Երկու հոգի կ'անցնին, խորհրդաւոր երկու անձեր - մէկը տիրակալը, միւսը ստրուկը։ Քեան մը պատահած չունի. ոչ եկող կայ, ոչ գացող կայ. ահաւոր է՝ կ'ըսէ հերոսներէն մին խաղի ընթացքին։ Այսինքն մեր կեանքն իսկ...։ Խաղը ծայրէ ծայր սէնսօլիքով է

ու ամէն ժողովուրդ իր խառնուածքի պծով, զայն մեկնարանած է - Անգլիոյ մէջ աւելի դուարնալի խաղ մըն է, Ծերանսայի մէջ փրկութեամբէն է, Գերմանիա խաղած են եղբրական ընտանիքներ (1)։ Ո՞վ է Կոտո, կա՞յ Կոտո մը - Պէլէթ ինք ըսած է՝ որ եթէ գիտնար ով կամ ինչ ըլլալը Կոտոն-ին՝ արդէն ըսած կ'ըլլար խաղին մէջ։

Չեմ տը Բարթիւն ապսիւրտի նոյն մտասեւեռումը կը բնագործ (1957)։ Այս խաղը տեղի կ'ունենայ պատսպարանի մը մէջ որ միայն երկու պատուհան ունի։ Չորս հոգի կան - անգամաւոր, կոյր

(1) Յատկանշական է այն ընդունելութիւնը որ ստեղծաւ այս անկիւնաքար խաղը երբ ներկայացուցաւ առաջին անգամ։ Լոնտոնցիք բալետովին շուտաւ էին - մէկ կողմէ Քայմալ Էթերբերկ Սարիմընթ-ը, որ բարեմիտներու ամեն անգամակա կարծիքի պատգամախօսն է, ամբողջ խաղը կ'ըսէր խաղին սեւ-պօլիգոնի, յայտարարելով զմեր անբունի ամեն-մեկ վիճի եւ յուզիչ խաղերն մին...։ Եղբրեղ սրն է մարդկային յայտ մասին, խառնած ու միշտ յետաճումով՝ բայց երբեք մարտ...։ խաղ մը որ համակ սեր ու գուրգուրումն է մարդկային շուտումին համդէպ իւրայն։ Միւս կողմէ քառասունի համարեւեալ Բառադը կը մեկ-մէր առաքին արարեմ վերջ մինչ միւսները կը յամեմային դերասանները երգնելու մտադրութեամբ։ Ամերիկայի մէջ Կոտոն կատարեալ ձախողութիւն էր. շաբաթ մը յիմացաւ, արգիլուեցաւ ներկայացումը, կրկին քննադատուեցաւ, կրկին ձախողութիւն էր։ Տը Նիու Լիթըր քերթիմ մէջ Ամերիկացի քննադատ մը, Ժոզեֆ Շիքլի կը գըրէր։- Բայց այդ ի՞նչ արտաքին մտայնութիւն է որ ազդանշանը կը յաւակնի ներկայացմանը պէտք մարդկային ցեղը։ Մեծ գիւղ կը ծանցումն ազամարդիներ որոնք Այնթապ, Մոգար ու Շեյ-քերքեր կը կաշուին։

ու ծերացած բռնապետ մը, դամուած բազկաթոռի մը զօր հոս հոն կը քշէ իր ստրուկը — զաւակը: Կան նաեւ երկու ծնողք ծերունիներ որոնք սրունք չունին ու ամբողջ խաղին ընթացքին երկու աղբի տակառներու մէջէն կը խօսին, կը մեռնին: Բայց ոչինչ տեղի կ'ունենայ որովհետեւ ինչ որ կրնար ըլլալ՝ արդէն եղած է... Այսինքն աշխարհը կործանած է (փարքի-ին վերջաւորութեան կը զանուինք) ու ամէն ինչ դադրած: Դուրսը ամայութիւն է բացի լաճէ մը որ հաւանաբար ապրի բայց շատ յոյս չկայ: Ամբողջ խորհրդանշական իմաստը մարդկութեան վատոյժ անկարողութեան պատկերն է, մեր կեանքին ապսիւրստը: Աքր սան Բարսի մէկ արարեց խաղին մէջ, Պէքէթ կու տայ մունջ թշուառական մը որ անապատի մէջ նետուած, առանց յոյսի բայց անվշտ՝ կը պայքարի ճակատագրի դէմ ու կը մերժէ պարտութիւնը: Յոռեան, Նիհիլիսթ այս ըմբռնումը սակայն ոչ մէկ վայրկեան վատութեան կամ պարտադրականութեան երանք կը ստանայ (2): Ընդհակառակն, տխրած ու թրամիջ այս մարդոց իրականութեան մակարդակը մեզ, հանդիսատեսներս կը քաշէ կը հանէ մեր վրայ համակերպումէն, մեր սուտ-քուն անմեղութենէն, կը մղէ մեզ արի ու յոստակատես կեցուածք ունենալ մեր ճշմարիտ իրողութեան հանդէպ, առանց սակայն այդ առաքինութիւններուն որեւէ բարոյական արժէք տալու:

Էօթէն Իօնէսը-ի թատրոնը աւելի

(2) Կոստ-ի մէջ, վերջիմ վայրկեանին քիշարմերը կը նշմարենք որ քանի մը կանայ շատեր ծածկ են ամուլ, շարքած կանգնած վրայ որ իրենց տեղէն քանի մը մեքր անդին կը գտնուեն: Պէքէթ գիտէր անշուշտ որ երբ ծագավորեցներու բայր առաջակցներուն մէջ ծառը կեանքի խորհրդանշանն է. քիշ չէր գիտեր, անշուշտ ստիպած էր ձեռք ձայնէն, որու քարտաւարը եղած էր: Կարգ մը քննադատներ այդ աստիճանը կը մեկնաբանեն իբր յայտնի մշակի մը գոյաբանութեամբ. այսինքն մարդ իմքն է որ պիտի երթայ գէպի աստուածիկ (Կոստ) եւ ոչ քիշ սպասէ անոր գալուստ: Ամէն պարագայի, խաղը գեղ չէ սպասած իր առաքինութիւնը...



ՍԱՄՈՒԷԼ ՊԵՔԵՏ

Փանթասթիք, անհեթեթ նկարագիր մը ունի: Անոր համար տիեզերքը ամայի է, ներկայութիւն չկայ որովհետեւ Նիլթը ու առարկաները խճողած են տարածութիւնը: Այնպէս որ տան մը կարասիները կը ներկայացնեն առանձնութիւնը իր շփոթիկ կեղեւով: Փրկութեան միակ եղանակը Փանթասթիքն է, հիւմուրը: Պարագութեան ու լեցունութեան այս հակադիր, անհաշտ վիճակը իր խաղերուն հողերանական առանցքը կը կադմէ: Տեղ մը անթիւ սունկեր կը բուսնին տախտակամածէն մինչ դիակ մը կ'աճի, կ'աճի երկրաչափական համեմատութեամբ մինչև որ բնակիչները կը ստիպուին լքել տունը (Ամէն), ուրիշ խաղի մը մէջ (Վիքթորիա տիւ Տըվուար) հարկաւոր դաւաթներ կը դիզուին երեք հոգիի թէյ սպասարկելու համար. կամ կարասիները այնքան շատ են որ կը թաղեն բնակիչները (Լը Նուվօ Լօֆաթեր), ժափ ու Լա Սուլիսիտ խաղին մէջ քանի մը քիթեր կը բուսնին աղջկայ մը երեսին վրայ առանց սիրահարին կրակը մարելու... Մական իր համբաւը կա-

ռուցուած է չորս խաղերու վրայ — Լա Լըսոն, Լէ Շէգ, Լա Քանքաքիս Շով եւ Լը Ռիմսուէթս (1960): Լէ Շէգ-ի մէջ ծերունկ, փախուկ զոյգ մը, մահուան մօտ, անտեսանելի հիւրեր կը հրաւիրեն իրենց սենեակը որպէսզի խուլ-համը հռետոր մը իրենց ապսիւրս կեանքի պատղամը տայ մարդկութեան, այսինքն պարապ աթոռներուն որոնք տասնհալոնեով կը լեցնեն բեմը: Լա Քանքաքիս Շով-ի մէջ ներկայ կ'ըլլանք Անգլիացի պուրժուա բնականութիւն մը ահաւոր, մահացու ծանձրոյթին, անոնց միօրինակ, ամուլ գոյութեան... մարդիկ որոնք տարիներով իրար հետ կ'ապրին առանց զիրար տեսնելու կամ հասկնալու (3): Լը Ռիմսուէթս-ի մէջ հեզնանքը շատ աւելի տուր է ու խաղը կը մօտենայ դասական ըմբռնումով երգիծական գործերու: Քաղաքի մը բնակիչներէն մին օր մը սնգեղջիւրի կը փոխուի: Առաջին ընթացքում անցած, միւս բոլոր բնակիչները մէկ մէկ կը սկսին համակերպիլ կացութեան, բնական դտնել երեւոյթը ու տակաւ բոլորն ալ կը փոխուին ռեզնդ-ջիւրի ու քաղաքին մէկ ծայրէն միւսը կ'արշաւեն աղմուկով ու փոշիով ողողելով բեմը... Բացի՝ սրճարանի մը կառնսօնէն, որ կը յամառի թէ ինք մարդ է, անասուն չէ...: Ու խաղը կ'աւարտի այդ միայնակ մարդուն անյոյս պայքարով: Իօնէս-ի նպատակը յստակ է — ցոյց տալ ինչպէս մարդիկ զիրար կը

կապեն, կը համակերպին ամէնէն աշխարհակալ կացութեան իսկ մինչեւ որ պաշտպանուած հաւաքական կարծիքէն, այլանդակութիւնն իսկ սովորական ու օրինաւոր երեւոյթի կը վերածուի:

Ճիշդ են այս բոլորը, այսպէս ենք մենք — զիրար խառող բայց նախ խառնուած մենք մեզմէ, անիմաստ գոյութեան մը զոհերը, անհաղորդ ու անհեթեթ: Ամէն տնձիր պատասխանը ունի անշուշտ, առնուազն այդ պատասխանին իրաւունքը — ռակայն եթէ նոյնիսկ ընկերութեան ու Պատմութեան նետուած այս ռումբը անվնաս հրախաղութեան մը հաճոյքը տայ միայն, դոնէ ան մեզ արթնցած կ'ըլլայ մեր ժառանգական թմբուկներէն, թունէ մը որուն մէջ միւրճուած կը շտարունակենք երթալ գալ հոս հոն իրրեւ թէ ապրող էակներ ըլլայինք: Եթէ Ապսիւրսի թատրոնը իրականութեան սովորական, պիտազիր մակերեսը կըցաւ պատուել ու մեզ դիտակից կըցաւ ընել ատոր տակի դարանակալ, անողորմ ճշգրտութեան, այսինքն ապսիւրսին՝ ապա ուրեմն յաջողած է եթէ ոչ արուեստի մակարդակին՝ (որ այս պարագային այնքան ալ կենսական չէ) զէթ իմաստասիրական-գոյութենական մակարդակին. ու իրաւունք չունինք, հաւանաբար պահանջելու որ լուծում մըն ալ գտնէ մեր տաղանդին: Արդարեւ, ու հոս իսկ կը կայանայ Ապսիւրսի թատրոնին մեծագոյն խոչընդոտը կամ ներքին հակասութիւնը, եթէ ապսիւրսը ներկայացուի իբր այդ՝ գուրոս կը մնայ արուեստի սահմանէն որովհետեւ արուեստը բանականութեան հակալիւրը կ'ենթադրէ, այսինքն՝ քառսին մէջ որոշ համադրութեան մը ներգործութեամբ պայմանաւոր է. իսկ եթէ ապսիւրսը ներկայացուի իբր արուեստ՝ ան կը դադրի ապսիւրս ըլլալէ...: Ահա այս մտահոգութիւնն է որ կը տիրէ երրորդ թատերադրին, Արթիւ Առամով-ի մէջ: Ան կը փորձէ տիրել ապսիւրսին՝ հոգեբանական բարդ վիճակներու ու երազի խառնուրդէն հանելով նոր համադրութիւն մը:

(3) Ակնարկելով այս խաղին, Իօնէս-ի կ'ստէ Թէ ամ ծաղրն է ոչ միայն մարդկային բնկերութիւնն ալ մանուսն իրապաշտ քաղաքացիին, յուզումի քաղաքացիին, բոյլ կ'ուզէ Պրէշ-թին: Եթամանակ է որ երբեքնմէ մեմ մնգի Թէ ինչ գործ ունիմէ աշխարհի երեսին և ինչպէս, տաւնց խաղնալու Թէ ինչ է մեր ձակա-տաղիքը, կրնամք համոզուիլ միւսական աշխարհի մնջումը: Նա յուզում չունիմ տալիք կացութիւնը կը ներկայացնիմ ու այդ արդէն ինքնին ողորդութիւն է:

Զգալ ամնօրեային ու լեզուին ապսիւրս նկարագիրը, գիտանցիլ քառերու կեդծիմն՝ կը ճշմանակ արդէն լեզուէն անգիմ անցնիլ, այսինքն հասնիլ կատակերգականիմ:

Քիթթըր Արշ, Յունիս 1968

Այս թատերախաղերը անշուշտ իրենց կյոթեւի ու կատակերգական կողմն ալ ունին որ աւելի եւս ցայտուն կը դարձնէ ողբերգութիւնը: Արտառոց, ալիւնդակ տեսարաններ կը խնդացնեն — բայց արդէն ի՞նչ ուրիշ բան չէ եթէ ոչ այլանդակ կացութիւնը որ կը ստեղծուի երբ կը գիտակցինք թէ ողբերգականութիւնը յանկարծ բացակայ է ուրիշական աշխարհէ մը: Հոգեբանութիւն ու բարոյական արտաքսելով, հերոսի ծիծաղելի կամ եղբրական տիպաբը տարբերութիւնով այնպէս որ բոլոր գերակատարներն ալ հերոսի արժէք ունին, այսինքն ոչ ոք հերոս է. պարզացնելով բեմայարգարումը ու գործողութիւնը, մէկ կամ երկու արարի վերածելով դասական չորս կամ հինգ անվերջանալի արարները, մերժելով զլուարճացնել կամ դատարարել հանրութիւնը, եղբրական ու կատակերգական իրար խառնելով հակա-թատրոնը կը յաւակնի բուն թատրոնին ձգտիլ, այսինքն կեանքին (4):

Ապսիւրոի թատրոնը չսահմանափակուեցաւ իօնէսքօ-ի ու Պէթէթ-ի գործերով: Իօնէսքօ ծագումով Ռումանացի է ու Պէթէթ՝ Իրլանդացի — բան մը որ կը փաստէ թէ Եւրոպան աշխարհագրական ու քաղաքական քարտէսներու գունաւոր գիծերէն կախում չունի: Ժան Ժընէ սակայն Յրանացի է, բառին բովանդակ ու նոր սահմանումով: Որքա-



ԵԾԺԷՆ ԻՕՆԷՍՔՕ

նոց, արգիլարան, բանտ, ոճիւր, միասեռականութիւն ու հաշիշ, գողութիւն, հիւանդութիւն ու տաղանդ — այս բոլորը, որոշ անկիւնէ մը գիտուած ոչ լաւ են ոչ ալ վատ ու բան մը չեն փոխեր Յրանացիի իր տաք, ըմբոստ ու արթնափախ խառնուածքէն: Ծանօթ են իր վէպերը ու գրքերէ միմիւր քնարերգութիւն մը՝ սուրբերու, հերոսներու կը կերպարանափոխէ ոճրագործները ու լուսանցքային տիպարները: Տառապած մարդ է Ժընէ, ընկերութեան հակասութիւններուն զուճ մը: Այդ վիճակէն մին-

(4) Ընթացիկ կեցութեամբ է, բնագոյններու ու դերասաններու մէջ հակա-թատրոնի այս տեսութիւնը (իբրակմութեամբ մէջ տեսութիւն ալ չէ այլ ընդգծարուած ճշմարտութիւն մը) զընթել, առնուազմ լուրջի չառնել, առարկելով քէ կեանքի մէջ իտէլաներ ու մշտնկալութիւն անեցող երեւոյթներ ալ կան, քէ այս հեղինակները արիւշ բան չեն երբ ոչ իրենց հերոսներու պատկերները — զգային հիւանդներ: Թայգ Լիթըրըրի Սթրիքընթ-ի Օգոստոս 3, 1962-ի քուին մէջ, բնագոյն մը գիտել կու տայ քէ Էտեսասականօրէն ապսիւրոի մասին մէկ խաղ միայն կարելի է գրել եւ քէ ասկէ վերջ ինչ որ սրբութի՝ կրկնութիւն է... Ինչո՞ւ համար, ապսիւրոսը ընդգծարելէ վերջ, մեծ մաքսիս, պիտի

չվերադառնամ մեր աճիւնքեայ, հեռաբերական պատրամքներուն... Ինչո՞ւ համար, երբ աճիւն ինչ անիմաստ է, մարդիկ, այսինքն ապսիւրոի թատերագիրներ, կը մտնին լուրջ, իմաստալից թատերախաղեր կը գրեն: Ամբողջ հարցը հոն է սակայն որ ապսիւրոսը այդ շէշի երջանկութիւն ու լրջութիւն վերադարձնէ որ կ'իմաստազրկէ, յանուն կեանքի գեր-բանական ճշմարտութեամբ, յանուն քակարող ինկած, մախտուած, իր միտմանը անջատուած ու իրմ պատահածը հասկնալու անկարող մարդու հաւանաբար միակ արժէքին, մեծութեամբ որ քակարգի մէջ ինկած ըլլալու գիտակցութիւնն իսկ է:

չեւ ապստոսի զգայնութիւնը քայլ մըն է լոկ (Տօսթոյէվսքի սերիւշ բան կ'ընէ երբ հարց կու տայ թէ ինչո՞ւ, յանուն ո՞ր գերագոյն իմաստին՝ անմեղ երեւոյթները, այնքան յաճախ, կը տառապին)։ Ժրնէ կը խոյանայ ընկերութեան վրայ աւելի վայրագ կերպով քան Սարթըր կամ Իօնէսը։ Լէ Պօմ (1947), Լէ Նէկր (1956) եւ Լը Պալֆօն (1959) թատերադերքը կը նուիրագործեն տաղանդը այս անքննաւոր դրոշմին որը կը յատկանշէ Ֆրանսացի բարձր մտաւորականը։ Իր ամէնէն նշանաւոր խաղը Լը Պալֆօն-ն է (անոնք որոնք լաւ Ֆրանսերէն գիտեն, կրնան այս բառին երկու վանկերէն արդէն հասկնալ թաքուն իմաստը) ուր աշխարհը վերածուած է քաղաքի մը, ու մարդկութեան ղեկավար ուժերը ու գլուխները՝ հկեղեցական, զինուորական, դատական՝ բոլանոցի մը յաճախորդներուն, որոնց վրայ կը հսկէ, մաթիօն-ի գերին մէջ՝ կրօնքը։ Ուրը գեր-արդիական ոճով դրուած, ծայրէ ծայր ծաղրն է ընկերային կարգերուն, գեղեցիկ յիմարութիւններուն որոնց համար պատրաստ ենք, յանուն մեր չհասկնալի արժէքներուն՝ մեր կեանքը զոհել...

Ֆրանսական ժամանակակից թատրոնը երկու նոր դէմքեր ալ ունի որոնց մասին բաւական զրոյեցաւ վերջինս — Պիլլէտու եւ Արրապալ։ Պիլլէտու-ի վերջին խաղը, Վա Տօմէ Եւ Թօրք կը մասնակցի համազարկին, սեռ ու փաթէթիք խառնելով իր հեղինակին։ Իօնէսը-ի պէս ան ալ կը սկսի արտաքինապէս բնական կացութեամբ մը ուր սակայն խենդութեան հոգնած մը կը նետէ որուն հետեւանքով հերոսները տակաւ կը բռնուին ինքնակործանումի մոլուցքէ մը։ Արրապալ, որ Սպանական ծաղում ունի, Պէթէթը կը յիշեցնէ իր ժուժկալ, խիտ խորհրդանշներով ու զուսպ գործողութեամբ։ Լը Լապիլիք-ը օրինակ,

չորս հոգի ունի միայն — զոյգ մը Թըշ-ուառներ ու անոնց վրայ իշխող քմայքոտ բռնապետ մը ու իր աղջիկը։ Կէռ-նիքա կը դառնայ տարեց, անվնաս զոյգի մը քայքայումին շուրջ, Սպանական պատերազմի ժամանակ։ Կայ դեռ Օտի-պէրթի, բանաստեղծ ու արձակագիր Արթօ-ի սերունդէն՝ բայց նուազ թունաւոր որ նոր եկած է թատերական արուեստին, բերելով իր հիմունքին հետ արտառոց երեւակայութիւն մը որ կը կերպարանափոխէ իրականութիւնը, մինչեւ բանգագուշանքի սահմանները տանելով։

Ֆրանսայէն դուրս, ապստոսը արդէն ցտնած է իր հունտերը։ Անգլիացի Ճօն Օզպօրնի խաղերուն ամբողջ հոգեբանութիւնը, մթնոլորտը, նոյնիսկ ձեռնարկը (եթէ արտօնուի նման բառ մը դործածելը հոն ուր հաւաքական գիտակցութեան մը հարց է աւելի քան սերմամբանուած ուղղութեան) Պրէշթօն-ը կը ներշնչուի, Հէրլըս Բինթըր Պէթթ-ի ճամբան կը շարունակէ, մինչ Սիմօնը՝ Իօնէսը-ի ուղղութեան կը հետեւի։ Գերմանիան ալ իր բաժինը բերած է նոր շունչին։ Յետպատերազմեան նշանաւոր թատերագիրն է Ֆրիտրիխ Տիւրնմաթ որուն զգայացունց խաղը Այցի-լաքիւնը մեծ ազդուկ հանեց թատերական կեանքէն ներս 1957-ին։ Քլաւա Զահանէսեան, ճարպիկ ազնուական բող մը, տասը ամուսին փոխած (բոլորն ալ մի-լիոնատէր), կ'որոշէ դառնալ ետ իր ծընած քաղաքը որ ահաւոր աղքատութեան մէջ կը տապալակի։ Բնակչութիւնը ակրն-դէտ կը սպասէ անոր, նիւթական մեծ ակնկալութիւններով։ Ինքը կու գայ վրէժը լուծելու մարդէն որ աղջկեութեան գինք բռնաբարած էր, յղի ձգած եւ ուրացած դաւալը։ Իր միլիոնները կը հոստին քաղաքին վրայ, կը գնեն ինչ որ կայ — տուն, խանութ, մարդ, խիղճ ու պատիւ։ Ու դրամին ուժով բողանոցի կը վերածէ ընկերութիւնը որ գինքը բող-ըրած էր — քահանայ ու դատաւոր, ծընողը ու բարեկամ՝ կը դատեն խեղճ մարդը ու իրենց իսկ ձեռքերով կը խեղ-դեն զայն...։ Քլաւա վրէժը լուծած

մարդոցմէ, կը դնէ զիրկը զաղաղին մէջ ու կը հեռանայ քաղաքէն, ամուսինն ալ հտեւէն: Այս ֆարս քրածիքը, իր կարծիք, անգուր հեղանքով ու ընկերութեան ահաւոր ծաղրով՝ Պրէշթեան աւանդութիւնն է որ կը շարունակէ:

Միացեալ Նահանգներն ալ ունին իրենց ավանդարտ թաւարոնը: Ամէնէն ծանօթն է Էտուարտ Ալպի, որու Տը Զու Սթօրի խաղը (ուր երկու անծանօթներ իրար կը հանդիպին կենդանաբանական պարտէշին մէջ, կը ծանօթանան ու ամբիւնով կը բաժնուին), եւ Տը Ամէրիքմ Տրիւմ (ուր ամերիկացի բնասնիք մը ճամբայ կ'ելլէ փնտռելու Ամերիկայի Տեսիլքը բայց չգտնելով կ'որդեգրէ դեղադէմ երիտասարդ մը որուն մարմինն մէջ ոչ ուղեղ կայ ոչ ալ սիրտ, միայն մկան ու վիթմմին) կրկին ձաղկումն է մարդկային բնկերութեան: Կայ դեռ Ճէք Կէլլըր իր Տը Քոննէքշն խաղով ու մանաւանդ Տը Էրլը գերբիրադաւա, ծայրայեղ ավանդարտ անտարազելի խաղով որ հանելուկ մըն է — մտալ սեւամորթ մը, սատիք ծխախոտական, նիւթիւթ սընձով մը, գինով մը, բլամթիւք շինուած ցուցափեղկի մանրէն մը, կէս-մտաւորական կնիկճի սինիք Հրեայ մը, անկարելի բայց իրական կին մը որ ամբողջ սրահին հետ սիրաբանութիւն կ'ուզէ ընել, մեռած մարդ մը որ ամբողջ խաղի տեղողութեան կը փորձէ համոզել որ ինք ողջ է...: Տը Արլը իրապէս յեղափոխական է — Կէլլըր ամէն ձեւով կը փորձէ քայքայել մեր կեդեւը, քաղաքի դոց, միօրինակ սպաննել կենցաղի շղթաները փշրել: Հերոսները զիրար կը բոկտեն, իրարու կը պոռան, կը հայհոյեն, կը ծեծեն, սրահ կը ցատկեն, ամէնէնէն գոհարի ու ըմբոստացուցիչ բառերով կը Զանն ցնցել թմրած զգայաբանները: Խաղը բիւնէն աւելի սրահին մէջ է որ տեղի կ'ունենայ, ու հեղինակը թատրոնի բոլորովին նոր Փօրմիւլ մը կ'առաջարկէ — մարդոց հարիւրին ինտունը մեռած կը ծնին ու չապրած՝ կըրկին ոչինչ կը վերածուին, ու թատրոնը ուրիշ բան չէ եթէ ոչ զանազ արթնցնե-

լու, կեանքի կոչելու միջոց մը: Եւ որպէսզի կատարեալ ըլլայ իրականութեան հարուածը, դերասանները իրենց բուն անուններով կը խաղան ու ոչինչ տեղի կ'ունենայ որովհետեւ կեանքի մէջ ալ այդպէս է ու այդ է ահաւորը, այսինքն կամ անհատը պիտի ապրի՝ կամ ընկերութիւնը: Այս պարադային անհատի տպիւն է կարեւորը: Ավանդարտ թատրոնը դեռ ուրիշ երկու ներկայացուցիչներ ալ ունի — Արթըր Փօրթիլ ու Ճէք Րիչըրտսըն (5):

Այսօր հակա-թատրոն խաղեր կը գրուին Լեհաստան, Ճարն ու Արժանութիւն: Նորածնութիւն մը չէ այլեւս ու Պէքէթ եւ Խոնէսքօ արդէն դասական ըլլալու ճամբուն վրայ են: Ապսիւրալ մտած է այլեւս արդի զգայնութեան ցանցին մէջ ու իր մաքսիթօնը ամէն երկիր կը ծախուի: Կականը ծախուիլ չէ, այլ գտնելը թէ ուր կը ծախուի: Թատրոնը հասցէն չի տար այլ միայն լուր (6):

(5) Սարոյեանի փաթեթիք, պատուելիական գրականութիւնը ծանօթ է քույրերն ու մարդ իր տարուի մտածել քէ հիմնած է ան այլեւս: Բարեբախտաբար ճշմարտութիւնը ուրիշ է — վկայ իր կարծիքը ավանդարտ քաղաքի մասին: Այս քէ ինչ կ'ըսէ — Խոնէսքօ ու Պէքէթ յոյն չեն: Անոնք գտած են միջոցը, խորագրէ յուզիչ ու յաջող ձեւով մը, երեսն հանելու մարդկային ցեղի յոյնութիւնը ու հասկցնելու քէ դարձրել ի վեր յառաջատ յիմարութեան մը, եթէ ոչ ոգրագործութեան մը թափում ճամբաներէն կ'ընթացան մարդիկ, առանց գիտնալու: Արհամ ար գիտնալ, մարդկային հագիի գիտնել ո վեր ամենէն ուրայն լուրն է որ մեզ կը բերեն անոնք:

Թիւրքի Արց, Յուլի, 1958

(6) Նուազ ծանօթներէն յիշեմք քանի մը հատը: 1958-իմ կը մեռնէր Խալալի մեծ քանքաղի Իւկօ Պէքթի. որուն թաղուհին եւ Ըմբոսները խաղը դասական ու ավանդաբար կէս ճամբուն կը գտնեղուի: Սակայն կայ մերկայիս երիւս տիւրքիս ավանդաբար որուն իւ Ֆօրէսթա խաղը տեղի կ'ունենայ չիմէթօ-է անտառի մը մէջ ուր կը պիտան խուսի մը խրտուիլակներ: Ապառաջի Մանուէլ տէ Բէտրօ-լօ գրած է տարօրինակ խաղ մը, Հօմէս է Նօ

Թատերական արուեստի մէջ յեղափոխութիւնը միայն հերոս-գործողութիւն-յուզում երրորդութեան քայքայումը չէ, միջբոլոր անցած է ուրիշ մարդերու մէջ ալ: Այսինքն բեմադրական արուեստի թէքնիքի մէջ ալ ընդունուած ձևերը չընդունուած են: Անգլիացի Սին Քէննի-ի ըմբռնումով, բեմի տէջոսները իրականութեան պատրանքին կամ թելադրականութեան պէտք չէ ձգտել ալ չհանդիսատեսը մասնակից պէտք է ընեն բեմական իրականութեան — գաւազները, շուանները, սանդուխները, ինչ որ կը փորձուի ծածկել պէտք է երեւան հանրութեան: Ուրիշ նորութիւն՝ պատրանքին վերջ բուն իսկ բեմը...: Արեւ պատով բեմը (բոսիմիւրմ թատրոնը) քայքայուելու վրայ է, յանուն աւելի անմիջական կապի, իրաւ մտերմութեան դերասանին ու հանրութեան միջեւ: Ջըն-Վել բեմը, զայն փոխադրել ժողովուրդին մէջ, հանրութիւնը բեմ հանել, փոխել մարդոց կեանքը, փչել մարդերը իրարմէ գատող պատերը՝ որոնք կը կոչուին իրականութիւն ու բանականութիւն, ընկերութիւն ու բարոյական: Արդէն այս է Կէլլըր-ի ամբողջ ճիգին իմաստը: Վերջերս Տանիմարեայի մէջ ռատրէի պատեանին ձեւով թատրոն մը շինուած է որ ինքն իր առանցքին վրայ կը դառնայ չորս անշարժ բեմերու մէջ տեղը ուր կարգով կը փոխադրուի գործողութեան վայրը: Աւելորդ է խօսիլ քէլաքը ամ ռոն-ի մասին որ արդէն հինացած է... — Հոս գործողութիւնը տեղի

կ'ունենայ պզտիկ կտր կրկնի մը մէջ ու հանրութիւնը բոլորակի նոտած է շուրջը: Ու դեռ կայ նորագոյն գիւտը բեմադրական թէքնիքի՝ որ այս տարի տեղի ունեցաւ Տիթոն-ի մէջ, Նուի տը Պուրկոնյը-ի փառասօնին ընթացքին: Այս անգամ հանրութիւնը նստած է սըրահին փասին մէջ մինչ չորս կողմը պատուանդաններու վրայ շինուած բեմերու վրայ միաժամանակ չորս տարբեր գործողութիւններ տեղի կ'ունենան, բոլորն ալ տարբեր տեսարաններ նոյն խաղին եւ որոնց միաժամանակ պէտք է հետեւի հանդիսատեսը, մէյ մը հոս, մէյ մը հոն զանալով իր աթոռին վրայ: Յաջը կը կոչուէր G. Appelle M. W. հեղինակն ու բեմադրին էր Միշէլ Բարան: Գործողութիւնը տեղի կ'ունենայ շիրօշիմա հելլէական ոտմը տանող օգանաւորդին զիտակցութեան մէջ, զիտակցութեանէն դուրս, ճամբայ չելած, ոտմը նետելէն վերջ երբ ընկերութեան դէմ ըմբոստացաւ, խենդութիւն կեղծեց իր յանցանքը քաւելու համար: Ուրիշ առթիւ աւելի մանրամասնօրէն կ'անդադրանանք այս նորութիւններու — Հոս կ'արժէ միայն յիշեցնել թէ միայն յեղաշրջումն ու յեղափոխութեան մէջ է արդի թատրոնը, բուն մը որ փաստն է իր կենսունակութեան ու հարստութեան:

Ահա այս այլազան բայց հապէս միատարր մթնոլորտին մէջ է որ կը զարդանայ եւրոպական ժամանակակից թատրոնը: Վերջերս, Յրանսացի քննադատ մը, Պիլյէտու, կը գրէր թէ թատերական արուեստն ու գրականութիւնը ոչ մէկ առնչութիւն ունին իրարու հետ: Թատրոնին բուն էութիւնը կը դոյանայ միայն բեմական արուեստի տարրերով — բեմադրութիւն, լոյսի խաղ, շարժում, ձայն ու անջատ բառ, դիմախաղ ու տէքօս: Զգացում, պատգամ, հոգեբանական թնճուկ, արդարութեան յաղթանակ ու քարոզ՝ կապ չունին զուտ թատրոնին հետ: Այս ծայրայեղ դատումը կրնայ շատ ալ ճիշդ չըլլալ բայց եթէ այս սահմանումով կրնայ մէկ երկվայրկեան արթնցնել քնաշրջիկ մարդ-

որ տեղի կ'ունենայ քանտի մէջ: Բանտաբլիսաները կ'անդրադառնան թէ իրենց բանտապահը եւս քանտի խօսքներն մէկում մէջ արգիլափակուած է: Այս վերջինը իր կարգին կ'անդրադառնայ թէ իր բանտապահն ալ քանտի խօսքներն մէկում մէջ ճատած է ու այս վերջինն ալ կ'անդրադառնայ թէ եւայլն հայրն: Սպանացի Ֆերմանտո Արրապալ գրած է խաղ մը Ծանօտ էթ չիս ուր մտքը մը իր անդամայն թարեկանութիւն կը պտղով տնկուի կառքի մը մէջ: Ոտնոցուած ու կը սպաննէ գայն երբ վար կ'իյնայ աքառ-կառքին ու կը կոտորէ ձեռքի քմրուկը:

կութիւնը, եթէ կայ մէկ հիւլէ յոտա-
կատեաութեան կարելութիւն՝ ապա ու-
րեմն աւելի յարգի է ան արդի խուճա-
պահար, շուարած բայց արժնիւց մար-
դուն համար՝ քան բոլոր գայթակղած,
տիւզ-տապալտ ու հետեւակ զանգուածնե-
րու իմաստութիւնը ու այդ իմաստու-
թեան պատգամախօսներու բանաձեւերը:

Բնականաբար, ավանկարտ այս
թատրոնի ետին կայ ոչ միայն աւանդա-
պահ գունդը, այլեւ կայ առիւթը կարող
յետապահել, որ գասականը չէ, այսին-
քըն Շէյքսպիր ու Ռասին, այլ միամիտ,
կարծր-գլուխ ու լուսահոգի իրապաշ-
տութիւնը զոր մենք հայերս այնքան կը
սիրենք տակաւին: Փարիզի 52 թատրոն-
ներու խաղացանկերուն մէջ տասնէն մէկը
ավանկարտ է միայն: Մարդիկ կը
խրտչին անծանօթէն, չփորձուածէն, նո-
րէն, ու կը խուսափին արկածախնդիրնե-
րէն: Արդէն ավանկարտի մէկ ուրիշ հա-

կասութիւնն ալ այն է որ շատ կարճ է
կեանքը — մէկ շաբաթ կամ շատ շատ
մէկ սէզոն: Ատկէ վերջ ալ կորսնցու-
ցած է իր նորութեան ցնցիչ յատկութիւ-
նը, եղած է սովորական (մարդ կը տար-
ուի մտածել թէ Դոնէսքո-ի Ռեզեզիւ-
րը, եթէ բարոյական դաս մը ունի, այդ
ամէնէն աւելի հեղինակին համար է...) ու
պէտք է նորը ստեղծել եթէ չ'ուզե-
րինք զինք կրկնելու մահացու մեղքը դոր-
ծել: Այս ծայրայեղութիւնները անշուշտ
համադրումի ֆօրմիւլ մը ունին (Շալ-
յօ-ի բեմը 25 մէթր լայնք ու 22 մէթր
խորութիւն ունի մինչ թէաթըր ան ոտն-
բեմին տրամագիծը 5 մէթրը չանցնիր)
որու մակարդակին թատրոնը կը նոյնա-
նայ միւս բոլոր արուեստներու հետ:
Այդ բոլոր արուեստներէն միայն մէկը
կը հետաքրքրէ մեզ հիմա — վէպը: Այ-
սինքն Նոր Վէպը, Ֆրանսայի մէջ:

Վ. Օ.



ՃՇՂՈՒՄ — Հոկտեմբեր Թուի յօդուածին
մէջ, էջ 61, տասնին տեւակի 19-րդ տողին Ան-
թոնիօ պէտք է ըլլայ՝ Անթոնիօսի:

Ճ Ո Ն Ս Թ Ա Յ Ն Պ Է Ք

1962-ի ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԻՈՐ

«Տաք ու բուռն ապրած եմ միշտ: Տակառի պէս խմած եմ, կամ ահաւոր կերպով կերած՝ կամ ալ բերանս բան չեմ դրած. կամ օրերով քնացած եմ մէկ կտոր՝ կամ ալ գիշերներ անվերջ աչք չեմ դոցած. կամ ծանր ու երկարատեւ աշխատանքի մէջ նետուած եմ փառքի օրերուս՝ կամ ալ բացարձակ ծուլութեան անձնատուր եղած եմ օրերով: Բեռնակիր՝ անտուկ շալկած ու հրած եմ, փայտահատ եղած եմ, լիւս մազլցած եմ. սիրաբանած՝ ամենայն հասնայքով, ու երբ դինարբուրի յաջորդ առտուն չոր լեղի բերնով արթնցած եմ, շատ բնական բան մըն է, — ըսած եմ ու քալած անցած»:

Ահա մարդը եւ կեանքի իր ոճը, որ շատ տարբեր չէ իր հերոսներէն: Զարքալ, թիկնեղ, յաղթահարող Քալիֆօրնիայի իր 60 տարիներու ընթացքին մէկ նիւթ դտած է, մէկ ձեւով դրած է ու մէկ բան ըսած: Սկսած վիպակով՝ հասած է ու կանգ առած վէպին մէջ: Սկզբած է իր գիւղէն ու վերջացած է իր գիւղին մէջ: Արտակարգ ոչինչ իր կեանքին ու գործին մէջ, որոնք հոգ ու խոտ կը բուրեն. փոշի ու հանքածուխի մուր նստած է մորթին վրայ, կոշկոռ կապած են ձեռքերը, բայց չէ կապած այն՝ որուն ինք սիրտ անուր կու տայ: Առողջ, բարի ու բերրի մարդիկ են իր աշխարհի

բնակիչներն ու անասունները՝ որոնց չարութիւնը խառնուածքի գիծ չէ այլ ընկերային ծուռ կարգերու հետեւանք:

Սթայնպէք միջին Ամերիկացին է, ու իր գործը՝ Ամերիկայի կեանքն իսկ է (1): Այն Ամերիկացին՝ որ մեծ քա-

1) Քամի տարիէ ի վեր Սթայնպէք Նիւ Եորք կը բնակէր, Եւրպա ու Խորհրդային Միութիւն այցելելէ ետք: Կտրուած էր իր բնավայրի ետքէն, որուն մասին ամառային չէր գաղտնի գրել: Առաջնութիւնը սկսած էր տկարամտ ալ կենդանակամ բնագոյով մը կը զգար թէ եկած էր ժամը եւս դառնալու...: Երկու տարի առաջ, բնակաւ մը վարձեց, վրան եիմ նստակի մը քապիւն-ը դրու ու Զարիի անուն շնիկ մը հետը, եւ իր ֆալիֆօրնիայի մարման բանեց, 10,000 մղոն դէպի Արեւմտեւ, զիճկէտ կրիայ մը որ իր տունը շաղկած՝ գլուխը կ'առնէ կ'ըրթայ...» (նատարը, Երատարակուած այս տարի, կը կոչուի — Ճահապարհորդութիւն Զարիի հետ): Ամիսներ անընդհատ արեւուն ու անձրեւիմ տակ, անտառներու, ագարակներու, գիւղերու ու լիճերու համարներուն վրայ քափառեցու, հազարաւոր մարդոց հետ եիմ բարեկամներու պէս ճաշեց, խօսակցեցաւ, խմեց ու ծխեց, ու որքան մօտեցաւ իր եզրին՝ տարիներու յաւերը այնքան քափեցաւ վրայէն ու վերագտաւ իր առաջ կազմը: Տարօրինակը այն է որ այս տարեց զաւթի տնտեսութեան, ոչ մէկ ամէ կրցաւ համայն գիմէ: Սթայնպէք կարգ Ամերիկացիի վերածուած էր: Արժանիւ է թէ քերութիւն — անձնակամ տնտեսկտի հարց է:

զաքեներու ճարպիկ ու ջղախի մեքենան չէ, ոչ ալ շուարած, աղետաբեր թուրիս-
քը որուն կը հանդիպինք աւերակներու
մէջ, ոչ ալ օինչմայի պոստառի ջրա-
ներկէ գծուած ոճիւրի ու սեռականու-
թեան տարաշխարհիկ, պատանի մասնա-
պէտք, այլ հայհոյող ու աղօթող, կըռ-
ուսական ու բարոյախօս, խակ ու կենսու-
նակ հողագործը. աշխատանքի մարդը:

Այսպէս մարմնաւորած էր աշխար-
համասի բնագոյական թափը, իր բաղմու-
թիւններու միջին կերպարը, անոր դոր-
ծը ջերմ ընդունելութիւն գտած է հոն
ուր մարդոց ճաշակը չէ հասած զուտ ի-
մացական վայելքներու բարձրութեան,
կամ ալ հասած բայց դժգոհ՝ բնագոյին
անկարելի ապրումներու կարօտով կը
բռնկի ու կը ցանկայ ետ դառնալ, ետ՝
մայրաքաղաքի պողպատէ գիմակներէն
ու հատուկութեան հիպոթետիկէն, ետ՝
ցեխին մաքրութեան, անասուններու ան-
գիտակից անմեղութեան, մարդոց կոշտ
ու ձրի մտերմութեան մէջ: Այս վերա-
գաժը անհրաժեշտ է դործին ամբողջա-
կան վայելումին համար, որովհետեւ ան
որ չի ճանչնար հերոսական բանապաշտ
կամ զեղապաշտ զրականութիւնը, չի
կրնար գնահատել այն թարմ, սիրտ առ-
նող, անգիմադրելի բնականութիւնը
Սթալինի աշխարհին, ուր եղերական
դէպքն իսկ, դրուած իր բնավայրին մէջ,
պարզ մանրամասնութեան մը կը վերած-
ուի ու կը կորսնցնէ իր ոճրային նկա-
րագիրը: Չուարճախօս, համակրելի,
միամիտ բայց կարծր այս մարդոց գո-
յութիւնը, այսպէսով կը հալի բնութեան
խորհրդաւոր ներկայութեան մէջ, ինչ-
պէս կրիան, խլուրդը կամ ողնին՝ որոնք
կը վիստան իր հատորներու գալտերուն
մէջ:

Կարօտը սակայն, զրական չափանիշ
չէ: Եւրոպացի գրողներ, մանաւանդ Ծը-
րանսացիք, ակնոցաւոր, քնատ ու ան-
զուժ՝ աւելի լայն ու խորունկ քլաքէ-
քիւ կը պահանջեն: Փիլիսոփայական
մտածողութիւններ, հոգեբանական բարդ
թնճուկներ, ընկերային տաղանայներ,
զեղապետական չափանիշ, աշխարհահայ-



Ճ. ՍԹԱԼԻՆ

եացք ու կառոյց — այս ու այլ ճամբա-
ներէ է որ անոնք կը մօտենան արուես-
տի քառուղիին: Այս տեսակէտով Սթալին-
պէք միջակութիւն է, առնուազն: Հոս
նպատակ չունինք իր մտտակին արժե-
ւորումը ընել, այլ միայն մատնանշել
որոշ երեւոյթներ որոնք կապ ունին իր
Նոյէլեան մրցանակի արժանանալուն:

Արդ, հերոսական գրական մամուլը
տարակարծիք է իր արժանի ըլլալու մա-
սին: Անպիտոյ մէջ կէսապաշտօնական օր-
կան մը, Թայմզ Լիթթըրըի Սաքլիմըք,
իւր 16 Նոյեմբերի թիւով դիտել կու տայ,
որ եթէ գիտական մրցանակներու բաշ-
խումին մէջ Սթոքհոլմի Ակադեմիան
կրցած է միշտ ճշգրիտ ու արդար ընտ-
րութիւն մը ընել, պարագան նոյնը չէ ե-
ղած գրական մարդին մէջ, ուր զրակա-
նէն տարբեր չափանիշեր յաճախ միջա-
մըտած են. ու այնպէս կը թուի թէ
«վերջերս այդ մրցանակը տրուած է
մարդոց կողմէ, որոնք տարօրինակ կեր-
պով անհապորդ են, մօտէն չեն հետեւած
արդի քրիթի չափանիշներուն ու ըմբռ-
նումներուն»:

Ֆրանսացիք նոյն վերապահութիւնը ունին, այլ պատճառներէ դրդուած: Ֆրանսական մտաւորականութիւնը, իր ջանքախիշ մեծամասնութեամբ, համալըսարանական կրթութիւն ունի ու դրական վաստակ մը կ'արժեւորէ գլխաւորաբար իմացական կշիռով: Աւելորդ չէ՞ յիշել թէ Սթոյնպէք այդ տարողութեամբ գրող չէ, հակառակ որ շրջան մը համալսարան ալ յաճախած է, առողջ սակայն մտաւորականի վերածուելու: Ափսոսաբար թէ ուրիշանալ այս իրողութեան համար... Ամէն պարագայի, Սթոյնպէք ինքն ալ, հաւատարիմ իր խաւնդած քնն ու իր կոչումի ըմբռնումին, ինքզինք անարժան դտած է մրցանակին:

Պէտք քոյր նկատողութիւնները անշուշտ լուսանցքի մէջ կը մնան: Իրլանտական ու գերմանական ծագումով այս հսկան, որ հոգադործ, նաւազ, օրմնադիր, ներկարար, սպասեակ, պատերազմական թղթակից, շէնքի պահակ եղած է վիպասան ըլլալէ առաջ ու մնացած է ըլլալէ վերջ՝ այսօր միջազգային հանրութեան մը տիրացած է: Զինք կը դասեն Ֆոքսըրի ու Հէմինկուէյի կարգին, ինչ որ քիչ պատիւ չէ: Ուրիշ մընի շուրջը կը գտնենք իր գործին մէջ: Ու նոյնիսկ եթէ Յասման ռզկոյզները կամ Մուկերու եւ Մարգոց Մասիմ դուռ իմացական քովանդակութենէ դուրկ են, այսուհանդերձ անոնց մէջէն փնոյ թաց հովը, րնտութեան հեւքը տարերային այնպիսի հմայք մը ունին, պարզ մարդոց կեանքի համին ու արդար ընդգլուսին մարդ-

կային որակը հաղորդական այնպիսի անկեղծութիւն մը ունի որ մարդ պահ մը կը տարուի մտածել - արդեօք ա՞յս է գրականութեան բուն կոչումը...:

Ըստ երեւոյթին, Սթոյնպէքի Ակադեմիան իր որոշումը տուած է, հաւատարիմ կտակարարի ցանկութեան, ըստ որուն մրցանակը պիտի տրուի այն անձին որ գերական կալուածին մէջ, իտէալիսթական ձգտումով ամէնէն բարձրորակ երկը արտադրած է:

Իտէալիսթ երբ կ'ըսուի, կարելի է չմտածել Հայ գրականութեան մասին: Վերէն վաղ ու ալէն ձախ՝ իտէալիսթ եղած ենք, կեանքով ու գործով: Երիտասարդ ժողովուրդներու յատկանիշ է անշուշտ, ու ասոր համար իսկ Սթոյնպէքի գործը շատ մօտ է մեր զգայնութեան: Ու բարիք մը կ'ըլլայ մեր գրականութեան եթէ թարգմանուի ան: Կ'իմանանք թէ Պրն. Ս. Ահեան վերջերս թարգմանած է Յասման ռզկոյզները. նախաձեռնութիւն մը որ զնահատելի է:

Պիտի տեսնե՞նք արդեօք Նօպէլեան Հայ մրցանակաւոր մը...: Յունաստանէն ու Եռլկոսլովիայէն հտք, ինչո՞ւ ոչ մենք: Բացայայտ է որ իտէալիզմը չի բաւեր ոչ ալ երիտասարդութիւնը՝ եթէ չաւելնայ նաեւ որոշ իմաստութիւն ու հասունութիւն: Յարգ գոհացած ենք յուսարով - ինչ որ կրկին երիտասարդութեան փաստ է: Կը մնայ խելք գործածել ու ապրիլ մարդկութեան մէջ, մարդկութեան հետ:

Վ. Օ.



ԴՈԿՏ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

ՄԱՐԺՍԻՍ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ

Ե Ի

ՆՐԱ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Գ.— ԴԻԱԼԵԿՏԻԿ ԲԱՑԱՍՈՒՄԸ
ԿԱՄ ՀԱՄԱԴՐՈՅԹԸ

Սովետական Միությանում, նիւթապաշտական իմաստասիրութիւնը բացասման բացասումը, դիալեկտիկ ընթացակերպի երրորդ փուլը կամ աստիճանը, կոչում է այժմ դիալեկտիկ բացասում: Բացասման այս սկզբունքը, որին օրէնքի ստուգութիւն եւ անխուսափելիութեան բնոյթ են վերագրում ներկայի մարքսիստները, ողնուծուծն է կազմում դիալեկտիկայի տեսութեան:

Համաձայն դիալեկտիկայի բացասման օրէնքին, աշխարհը անդուլ եւ անդադար ընթանում է գէպի զարգացում, բայց հակադրութեանց պայքարի մղումով եւ ուղիով: Նաեւ զարգացումը անհրաժեշտ արդիւնքն ու հետեւանքն է այդ պայքարի: Եթէ անպայման եւ անվերապահ կերպով իւրացնենք այս օրէնքի ճիշդ ու զօրու լինելը, դրանով իսկ ընդունած կը լինենք մարքսիստ դիալեկտիկայի տիեզերականութիւնը:

Այդ պատճառով իսկ անհրաժեշտ է վերլուծել այս օրէնքի նախադրեալները, որոնք նրա կառոյցի հիմունքն ու ատղձներն են:

Այդ նախադրեալները գլխաւորաբար երկուք են:

Ա.— Բնութեան հակադրութիւնները, որոնք իրերամարտ եւ յաւերժական պայքարի բունած են, անհրաժեշտաբար փոխարկւում են հակասութիւնների մեր մտքում:

Բ.— Ամէն ղէպքում, հակասութիւնների բախումը ի վերջոյ յանգում է բարեյաջող լուծման, զարգացումի:

Այժմ քննենք իւրաքանչիւր հաստատումը առանձին:

Ա.— Ըստ մարքսիստ իմացաբանութեան, մարդու մտքից բխած բոլոր դատարարները, հակացութիւնները արտացոլումն են իրերի եւ երեւոյթների, որոնք մարդու գիտակցութիւնից անկախ գոյութիւն ունեն արտաքին, նիւթական աշխարհում: Հետեւաբար հակասութեան դադարաբար արդիւնքն է առարկայական իրականութեան մէջ ծաւալող հակադրութիւնների: Լենինը ամփոփած է իմացաբանական այս ըմբռնումը հետեւեալ տույթով. «Իրերի դիալեկտիկան է, որ ծնում է դադարաւորների դիալեկտիկա եւ ոչ թէ հակառակը» (Լենին, Փիլիսոփայական տեսքեր. ռուսերէն, էջ 189):

Հակասութիւնը իմացական ստորո-

դուքին է, մասնորոշեան, դատողութեան մի ձեւն է: Հակառակեան հասկացողութիւնը իր մէջ պարփակում է տարակարծութիւն, տեսակէտների ընդդիմութիւն, անհամաձայնութեան և անհաշուութեան կերպարանք, հետեւաբար բախում ու պայքար: Շատ տեղին ու ճիշդ է այն ասոյթը, թէ տեսակէտների բախումից լոյս է ծագում, որովհետեւ կարծեքների փոխանակութեան եւ վիճարարութեան, դիմադրի շնորհիւ խորթին կէտերը պարզաբանում, եղբայրանութիւնը մեկնում և յստականում յիշարմացութիւնները վերացնում, ստուերոտ խորշերը լուսաւորում են եւ ճշմարտութիւնը մերկ ու մեկին երեւան է դալիս: Սա հանրապարտադիր եղելութիւն է, որովհետեւ բոլոր ժողովրդավար երկիրներում ընդունուած դրութիւն է եւ ամէնուր կիրառւում է այդ իրրեւ խորհրդարանական հիմնական սկզբունք: Մինչդեռ անգործանական աշխարհի եւ ատողագիտութեան մէջ, ներհակների, հակառակների եւ կողմերի հանդէպութիւնը եւ հակադրութիւնը անպայման հակասութեան առկայութիւն չի նշանակում:

Դիւալկտիկայի էութիւնը սահմանելիս եւ բնորոշելիս, Լենինը գրում է. «Հակադրութիւնների միասնութիւնը անցողիկ, ժամանակաւոր, պայմանական և յարաբերական է: Իսկ հակադրութիւնները պայքարը բացարձակ է, ինչպէս շարժումը եւ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ»: (Լենին Նրկեր, Հատոր 12 էջ 324):

Հարց է ծագում:

Բնութեան մէջ գոյութիւն ունեցող հակադրութիւնները անպայման պայքարի մէջ են, այն էլ մարքսիստ դիւալկտիկայի մատնանշած կերպով:

Պատասխանում ենք ո՛չ:

Հեզելը անգրադառնալով իր սեփական հարցումին, թէ բնութիւնը դիւալկտիկ է, որոշակի պատասխանում է հետեւեալ կերպով. «Աճումը՝ բնութեան ծոցում գոյացած առաջնիքացը, դիւալկտիկ չէ, այլ միայն հակամիտութեան մի հոսանք»: (Հեզել, Տրամաբանութիւն, անգլերէն, էջ 74):

Աւարկայական իրականութեան փատերը, տուեալները կտրուկ կերպով հերքում են Լենինի պնդումը, թէ հակադրութիւնների պայքարը բացարձակ է:

Խորհրդածութեան համար, առնենք մի քանի օրինակ բնութիւնից:

Սուրբ կոթը իր շեղքի հակառակ ծայրն է: Ահա երկու հակառակ կողմեր, ուր մեքլիմ շարժումը անընդհատ թաւալում է, սակայն լինելով հանդերձ հակադրութիւն, չկայ ոչ պայքար, ոչ հակամարտութիւն եւ ոչ էլ դոյզն հակասութիւն: Սուրբ հակադէմ մասերը պարզապէս տարբեր են եւ այդ հանգամանքով իրար լրացնում են:

Մեր երկրպագուդի վրայ վիտում են բազմաթիւ կէտեր, որոնք հակոտնեայ են կոչւում, քանզի ներկայացնում են հակառակ ծայրերը երկրի որեւէ տրամագծի: Օրինակ, արեւմտեան հակոտնեան հակադիր է արեւելեանին եւ սակայն սրանց յարաբերութեան մէջ ոչ հակամարտութիւն կայ եւ ոչ էլ երկուքի միջեւ պայքարի հետք: Հակոտնեանների հակադրութիւնը ոչ միայն գործուն չէ, այլ ոտոսած, քարացած անտարբերութիւն է: Ինչո՞ւ, որովհետեւ մարդկային մտքի ստեղծումն է այդ, եւ ոչ նիւթեղէն իրականութեան: Միտքը ստեղծում եւ գործածում է այդ՝ բնական երեւոյթները նկարագրելու համար:

Ելեկտրականութիւնը բաղկացած է երկու հոսանքներից, դրական եւ բացասական: Ոչ թէ այս երկու հոսանքների հակառակութիւնից, այլ օրանց միասնութիւնից է, որ գոյանում են էներգիայի ալակերպութիւնները, ուժ, լոյս, շարժում եւ այլն: Ելեկտրականութեան երկու հոսանքները եթէ հակամարտ լինէին, նրանց համադրոյթը պիտի լինէր բացասում: Մինչդեռ ելեկտրականութիւնը ընդմիշտ միում է ելեկտրականութիւն, իր բաղկացուցիչ հոսանքների յաւերժական եւ անկորնչելի միասնութիւնով: Երբ կտրում ենք հոսանքներից մին, իր յարուցած եւ արտադրած էներգիաները ընդփոյթ չքանում են, բայց

եկեկտրականութիւնը մնում է անվթար, թէեւ ոչ գործուն, այլ ներուժական վիճակում: Նրա հոսանքները չեն պայթարում իրար դէմ, այլ իրար լրացնում՝ տիեզերքի հաւասարակշռութիւնը եւ ներդաշնակութիւնը պահելու համար: Եթէ երկու հոսանքների պայթար գոյութիւն ունենար, համադրոյթով նորը ըստեղծուելիս, հինը պէթ մասամբ պիտի չքանար: Մինչդեռ եկեկտրականութիւնը իր շրջանաձէւ շարժման մէջ մնում է նոյնը, եկեկտրականութիւնը փոխարկւում է շարժումի, շարժումը ջերմութեան, շարժումն ու ջերմութիւնը վերադառնում են իրենց մեկնակէտին՝ եկեկտրականութեան:

Մարդն էլ լինելով բնութեան մէկ մասնիկը, քննենք թէ հակադրութեան պայթարը նրան եւս կիրառելի՞ է:

Անենք երկուորեակների պարագան:

Երկու մարդիկ, որոնք կազմական, դիմադժային նմանութիւններով եւ շարժումներով այնքան հարադատ են, որ մէկը միւսից զանազանելը անկարելի է: Ասկայն նկարագրով, խառնուածքով եւ հոգեխառնութիւնով կարող են հակապատկեր լինել: Երկու հակադրութիւն՝ պարփակուած նմանողութիւնով պայմանաւոր, միասնութեան մէջ: Պայման է, որ դիտելով պայթարին դու՛րս գնան անմեղ երկուորեակները եւ իրար յօշոտեն: Եւ այդ իրերակերութիւնից ի՞նչ համադրոյթ դուրս պիտի գայ, առաջգիմական քա՛յլ, որ զարգացում համարուի: Հակամարտութիւնը կարող է այնքան սաստկանալ, որ հակադրութիւնները իրար սպանեն: Այդ դէպքում կը ստեղծուի ոչ թէ համադրոյթ, այլ չքացումը թէ՛ դրոյթի եւ թէ հակադրոյթի, կը ստեղծուի ոչ թէ զարգացում, այլ բնաջրջում: Բայց կայ երկընտրանքի մի ուրիշ ուղի, հաշտութեամբ մի ապրելաձեւ ստեղծել, ուր բացարձակ կոչուած պայթարը դադարի եւ դոյանայ մի համակեցութիւն, այսօրուայ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ եղած համակեցութեան նման, որի անունով խրուչովեան դիալեկտիկան երդում պատառ է լինում:

Մի ուրիշ օրինակ:

Այր ու կին, թէ կազմախօսական առանձնատկութիւններով եւ թէ հոգեմըտային եւ բնախօսական իւրայատուկ խառնուածքով անջատ միաւորներ են, նաեւ երկու հակառակ սեռեր են ներկայացնում: Մարդկային քննադատ միտքը սրանք որակել է հակառակ սեռեր: Գիտական տեղեկան եւ նրբազնին ուսումնասիրութիւնները կարկառուն եւ յոյժ հետաքրքրաշարժ մանրամասներով յայտնաբերել են մարդկային երկու սեռերի հակամարտութիւնները: Հնամենի դրական տիտաններից մինչեւ ժամանակակից վարպետները ջանացել են վերլուծել երկու սեռերի ներհակ հակամարտութիւնները, համակենցադի եղբայրան յանդուհները, տարուբերումներն ու վերջիվայրումները: Աւագի հատիկների չափ հակադրութիւններ եւ հակասութիւններ, եւ տաղերի պէս բազմատեսակ բնաւորութիւններ եւ հոգեկան անդրադարձներ: Մի յարատեւ ու անվախճան պայթար: Սրանք հակադրութիւններ չեն, այլ այլազանութիւններ. սրանք հակասութիւններ չեն, այլ տարբերութիւններ: Մարդկային միտքն է, որ ստեղծել է դրանք նկարագրելու, բնորոշելու եւ ճշմարտութիւնը որսալու համար: Եթէ մարքսիստ դիալեկտիկան սեռերին կիրառէ, էզը պիտի համարենք դրոյթ, արուն հակադրոյթ, իսկ համադրոյթը: Իդէ եւ արուի համադրոյթը ի՞նչպիսի արարած պիտի ստեղծի ապագայ մարդկութեան համար: Հուանարար ճիւղների մի նոր սեռ, պսակը յաղթական համայնավարութեան, որի մանրանկարն է մարքսիստ դիալեկտիկայի ծնունդ՝ Ստալինը:

Մարքսիստ դիալեկտիկան մի մեթոդ է, որով տրամասանները յաւակնում են ապագան դուշակել: Արդ, կիսնքը եթէ դրոյթ է, ապա ուրեմն մահը հակադրոյթ է: Ի՞նչ պէտք է լինի սքանցից յառաջացած համադրոյթը: Մի նոր եւ աւելի բարձր վիճակ, որ ուրիշ բան չի կարող լինել, այլ միմիայն անմահութիւն:

Վարելի է շարունակել շարքը օրի-

նակներին, որոնցում ծիծաղելին, արտա-
ռոցը եւ անհեթեթը առգանցին առանց
զազարի: Սրա պատճառը այն է, որ էն-
զելսից եւ Լենինից մինչեւ արդի մարք-
սիստ տեսարանները հակադրութեան
զաղափարը դործածում են երկզմի ի-
մաստով, քմահաճ եւ կամայական կեր-
պով ջոկում են դէպքեր եւ երեւոյթներ,
որոնց բռնազբօսիկ մեկնաբանութիւնը
ծառայում է մարքսիստ դիալեկտիկայի
հաստատումին եւ ու էլ իր հերթին հա-
մայնափարութեան ծաւալումին եւ վերջ-
նական յաղթանակին: Նրանց մէջըրած
օրինակները սովորաբար խաբուելի,
խաբեպատիր եւ միտումնաւոր են: Այս
հանգամանքը ցայտուն եւ ակնբախ է
մանաւանդ քաղաքական ընթացիկ եւ հը-
րատապ հարցերի մեկնաբանութեան նը-
ւերում զրութիւններում: Մարքսիստ
դիալեկտիկայի ամբողջ մտասեւեռումն
է ապացուցել, թէ դալիք հասարակարգը
անխուսափելի կերպով պիտի լինի հա-
մայնափար:

Հիմա կանդ առնենք դիալեկտիկ բա-
ցասումի երկրորդ նախադրեալի վրայ:

Ի. Լենինի երկերից մէջըրբուած
վերոյիշեալ յայտարարութեան մէջ, աս-
ուած է, թէ պայքարը բացարձակ է,
ինչպէս շարժումն ու ԶԱՐԳԱՅՈՒՄԸ:
Մի ալլ առիթով, Լենինը նոյն միտքը
կրկնում է ուրիշ ձեւով եւ յարում է.
«Դիալեկտիկան զարգացման օրէնքն է»:
Ինչպէս խօսելով դիալեկտիկ բացարձակ
մասին, ասում է. «Մա (բացարձակ բա-
ցասումը, այսինքն համադրոյթը) վեր-
ջին աստիճան ընդհանուր է եւ այդ պատ-
ճառով իսկ բնութեան, պատմութեան եւ
մաքի զարգացման յոյժ կարեւոր օրէնքն
է» (Անտիդիլեիզ, ռուսերէն, էջ 159):
Վերջերս տասնութէկ հռչակաւոր ռուս
տրամադաններ, Գիտութեան Ակադեմի-
այի պատուէրով հեղինակած եւ հրա-
տարակած են ստուար մի հատոր,
«Մարքսիստ իմաստասիրութեան Հի-
մունքները խորազորով: Դիալեկտիկայի
ախոյանները գրում են. «Դիալեկտի-
կան միակ գիտական տեսութիւնն է, որ
համաձայն առարկայական իրականու-

թեան, զարգացումը ըմբռնում է, իբրեւ
հինը նորի փոխարկում, հինի մահացու-
մով նորի տեղում: Դիալեկտիկան նաեւ
բացայայտում է ներքին հակասութիւն-
ները, որոնք փոփոխութեան ենթարկում
են իրերը, եւ հակասութիւնների ծաւալ-
ման եւ լուծման մէջ տեսնում է զարգա-
ցումի մղիչ ուժը» (Հրատ. 1959, էջ
219): Նոյն գրքում մի ուրիշ տեղ, գը-
րում են. «Զարգացումը հակասութիւն-
ների պայքարն է»:

Վերոյիշեալ հաստատումների մէջ ա-
կրնբախ եւ բացորոշ է մի յատուկ ճիշդ
համայնափար քարոզչական հնարքնե-
րով, համոզում դոյացնել ընթացողի
մտքում, թէ զարգացումը անխուսափելի
է եւ նրան ներշնչել անկեղծ լաւատե-
սութեան ոգի: Անխուսափելիութեան
զաղափարը բխում է նիւթապաշտու-
թեան որոշադրութիւնից, դետերմինիզ-
մից: Ի դէպ, անհրաժեշտութիւն բաւը
գրեթէ միշտ դործածւում է անխուսա-
փելիութեան իմաստով, որը բացարձա-
կապէս սխալ է: Պարզաբանութեան հա-
մար բերնք մի օրինակ: Եթէ տեղատա-
րափ անձրեւի տակ մնաս, թրջուելը ան-
խուսափելի է: Այս երեւոյթը օրէնք է,
դիալեկտիկայի բարբառով, օրինաւա-
րական է: Մակայն անձրեւից չթրջուե-
լու համար, անհրաժեշտ է, որ պաշտ-
պանուես հովանոցով կամ անձրեւանո-
ցով: Այս երկու բառերի անխափ դոր-
ծածութեան միտք բանին նոյնպէս ճա-
րողական է:

Տիալեկտիկայի բացարձակ տեսու-
թիւնը մարքսիստների համար ոչ թէ
սկզբունք է, այլ ԲԱՏԱՐՁԱԿ ԾՐԷՆՔ:
Միթէ՞ սա իրականութեան համապա-
տասխանում է:

Վճռապէս ո՛չ:

Նախ ի՞նչ է նշանակում հակասու-
թիւն:

Հակասութիւնը ապացոյց է դոյու-
թիւն ունեցող թերութեան եւ անկատա-
րութեան, որ լիցք է ստանում քայքայ-
ման եւ մահացման ճանապարհով: Նորը
ստեղծելու եւ զարգացումը ապահովելու
նախապայմանն է որ պայքարող հակա-

սութիւնները իրար բացասեն, վանեն եւ չքացնեն: Իրականութեան ծոցում, եթէ սա օրէնք լինէր, հակամարտ կողմերը իրար պիտի ջնջէին, որով պայքարի արդաւորը պիտի լինէր ոչ թէ էութեան աճումն ու բարգաւաճումը, այլ էութեան փոխարկումը անէութեան: Հակառակութիւնների բարեյալոց լուծման համար, անհրաժեշտ է մի ուրիշ սկզբունք, մի գործօն, որ լինէր ստեղծող, պահպանող եւ գոյատեւող:

Հերակլիտը, գիտելիութիւն անդրանիկ ձեւակերպելը, իր ուսմունքը հիմնաւորել է հետեւեալ կերպով: Հակասութիւնը, ասում է Հերակլիտը ծընողն է ամէն ինչի, թէ պայքարի եւ հակամարտութեան, որին կոչում է պատերազմ, եւ թէ հաշտութեան եւ ներդաշնակութեան, որին տալիս է խաղաղութիւն անունը: Այս արդիւնքները սիրակալը լինէր միայն նոյնականութիւնը, միապապաղութիւնը, միօրինակութիւնը եւ համաձայնութիւնը: Բարեբեքի ձեռքբերում համար, անհրաժեշտ է վանողութեան հետ քաջողութիւն, պայքարի հետ հաշտութիւն, տարամերժումի հետ հաւանութիւն: Ուրեմն, յայտնական երկու տարրեր ազդակներ միասնաբար գործում են: Հերակլիտ աւելացնում է. «Ըստ էութեան հակամարտ ուժերը ինչպէս հաշտում, համաձայնում եւ ստեղծում են խաղաղութիւն եւ բազմակերպ ներդաշնակութիւն նման աղեղի եւ քնարի»:

Ի՞նչ կապակցութիւն կայ աղեղի եւ քնարի միջեւ, որ Հերակլիտը յիշում է իր տեսութիւնը հիմնաւորելու համար:

Որո՞շումաստութիւն է թաքնուած աղեղի եւ քնարի խորհրդանշական օրինակում: Փ. Էնդելսը, որ ներհուն եւ համայնագիտական միտք է, մի անգամ իսկ չի յիշատակում իր բազմազատոր երկասիրութիւններում Հերակլիտի աղեղի ու քնարի օրինակը: Ձի յիշատակում, որովհետեւ մեր կարծիքով Հերակլիտի աղեղը մի մահացու նետ է վերապահած մարք-

սիստ գիտելիութեայի արտին ուղղուած:

Հերակլիտը հետեւեալ կերպով է բացատրում իր դասական օրինակը: Աղեղը ներկայացնում է երկու հակադիր եւ հակամարտ ուժերի մի համակարգ, սխտեմ: Որքան ուժգին պրկենք աղեղի հակադիր ծայրերը, այնքան աղեղն եւ արդիւնազոր՝ կը դարձնենք աղեղը, իւրեւ գործիք: Եթէ թույլացնենք աղեղի լարերը, այնպէս որ պրկումը չքանայ, աղեղը կը վերածուի անպէտք, նպատակի չծառայող մի ձողի: Նոյն սկզբունքով գործում է քնարը, որ բազմալար աղեղ է: Երբ բաւարար չափով պրկուեն քնարի լարերը, քնարը կը դառնայ արդանդը հիասքանչ ներդաշնակութիւնների, հեշտալուր բարեհնչիւնների եւ ամօքիչ անդորրութեան: Քնարը ցայտուն պատկերն է այն բացերիւ իրողութեան, թէ հակամարտութիւնից առաջանում է եւ մեր առջեւ պարզում է մեղեդիների մի կախարդական աշխարհ, հաշտութեան եւ խաղաղութեան հրաշագեղ մի իրադրութիւն:

Աղեղի սկզբունքով կերտուել են ճարտարապետութեան բազում հրաշալիքները: Տաճարներում, պատմական կոթողներում եւ յուշարձաններում հանդիսադրուած կամարների թէ կատարելատիպ արուեստը եւ թէ տեղւոնութիւնն ու ամրակուռութիւնը: Հակամարտ եւ իրերամերժ ուժերի հաւասարակշռութեան եւ ներդաշնակութեան սկզբունքով է թաւալում եւ դոյաւանդում ամբողջ տիեզերքը, իր բազկացուցիչ մասերով, արեգակնային համակարգով, հիւլէների սքանչազոր՝ յարակցութիւնով:

Աղեղն ու քնարը, իրրեւ գործիք, իրարից թէեւ վիտրոյի տարրեր են, բայց իրենց մշտագործուն սկզբունքով նոյնական են: Տարրեր են եւ հակադիր են միմեկմանակ, ինչպէս մահն ու կենսութիւնը, քանդի աղեղը մահաբեր գործիք է, իսկ քնարը՝ նրբակերպ: Ուրեմն, ըստ Հերակլիտի, հակամարտութիւնը երկու երես ունի իր ընթացակերպում, մին ստեղծարար, եւ միւսը կործանարար:

Մարքսիստ դիալեկտիկական անտեսում է հակամարտութեան կործանարար վախճանը, որովհետև կանխակալ միտումով կլանուած է միայն լատստեսութիւն ըստեղծել եւ զրա համար համադրութիւն վերադրում է անպայման յաջող ելք, զարգացում եւ առաջընթացութիւն: Գիտական բազում փաստերն եւ մարդու կենսափորձը ժխտում են առաջընթացի անխղճափելիութիւնը: Անուրանալի եղելութիւն է, որ երբ հակասութիւնները լուծւում եւ հաշտւում են, յաճախ յանդում են առաջընթացի, նաեւ որոշ պարագաներում քայքայումի եւ անէացումի: Օրինակ, մարդկային մարմնակազմում, բոլոր գործարանները աշխատում են ներդաշնակ փոխազդեցութիւնով, մանաւանդ ներծոր ղեղձերը անմիջական փոխարարներութիւնով, որով գործանների հաւասարակշռութիւնը տեւարար պահպանում են: Հենց որ որեւէ փոխարար մանրէ մուտք է գործում եւ բազմանում է, մարմնակազմի դիմադրական ուժերը բուռն պայքարի լծւում են, որպէսզի կազմային ներդաշնակութիւնը չխանդարուի եւ պաշտոնատարութիւնը չխաթարուի: Երբ մանրէների չափազանց ազդեցութիւնը դերակշիւ է դառնում, պաշտպանութեան պատենէները փլուզում են թարկւում են: Երբ հիւանդութիւնը աւելի է զարգանում, դիմադրական ուժը խորտակւում է, մահն է դալիս վերջ տալու կենսաքին: Այսինքն, բարդ եւ բարձրորէն զարգացած օրգանիզմը վերածւում է հոտարակ եւ անկենդան նիւթի: Սա ոչ միայն առաջընթացութիւնն է, այլ բացայայտ յետադիմութիւն:

Պատասխան, որ իմաստասիրական դիալեկտիկայի խորիմաց հետախույզը եւ վարպետ ճարտարապետն է, յայտնում է թէ «հակասութիւնները կարելի չէ համադրել եւ մերել դաշնաւորութիւնով, քանի զեռ նրանք հայտուած չեն: Յատուկ ճարտարութիւն է հարկաւոր թշնամական հակասութիւնները վերածելու սիրալիք համաձայնութեան»: Իրականութեան մէջ տիրող ներդաշնակու-

թիւնը այս ձեւով է դոյանում եւ յարատեւում: Երգահանն է, որ ձայների խառնահնչութիւնների քառսը, իր արուեստապէտի նրբազգաց զգայարանքով, վերածում է հրաշագեղ եւ հիասթանչ մեղեդիների եւ համերգների: Բժիշկն է, որ դիտական ձեռնհասութեան եւ հարուստ կենսափորձի շնորհիւ, դարմանական կամ վիրահատական իր միջամտութեամբ, հեռացնում եւ չէզոքացնում է քայքայման մահացու սպառնալիքը եւ վերականգնում է մարմնակազմի դաշն պործանութիւնը: Նոյնն է գիտութեան բոլոր ճիշդերի վերարբմամբ, ուր մասնապէտի վճռական նպաստը արդիւնում է վերահաս կազմալուծումը եւ կարգաւըցում է խանգարուած մասերը:

Արիստոտելը, որին կարելի Մարքսը հիացումով անուանել է «իմաստասիրութեան անգերադաշնակ հսկան», յայտնում է, թէ անհամաձայնութեան պայքարում՝ հակասութիւններ կամ կամ իրար «լափում» են եւ հետեւարար սպարդիւն կերպով անհետում, եւ կամ իրար «գլխեցնում» են: Եթէ հակասութիւնների եւ հակադրութիւնների պայքարը միայն լափել լինէր, մարդկութիւնը առաջընթաց չէր ունենայ, իսկ կենսաբան, իրրիւ էութիւն եւ զոյութիւն վաղուց դադարած կը լինէր:

Հակասութիւնները բովանդակում են երկու կարեւոր տարրերութիւն, որի լուծումը իրարից դանաղանում է: Մէկը տրամաբանական հակասութիւնն է, որ ինքնաբերաբար եւ ակնթարթում լուծւում է, որովհետեւ իր ներհակը գոյութիւն չի կարող ունենալ: Օրինակ, երկիրը դառնում է արեւի շուրջ: Այս հաստատումը իր ներհակը չունի, քանզի հանրայայտ գիտական մի ճշմարտութիւն է այդ: Նրա ներհակը կը լինի, արեւը դառնում է երկրի շուրջ, որ լուի անհեթեթութիւն է: Երկրորդը իրական հակասութիւնն է, ուր հակամարտ կողմերի անհամաձայն են, եւ որոնց հաշտութիւնը կարող է յանգել կամ նորի կառուցման եւ կամ քայքայումի եւ յետադիմութեան:

Իմաստասիրական անտիմոմենտները տրամաբանական հակասութիւններ են, որոնց մէջ ամփոփուած է իրական եւ ներդաշնակ մի համակարգ: Է. Կանտի իմաստասիրութեան համար, անտիմոմենտները, իրենց հակադիր իմաստով իսկ, բացառապէս են իրականութեան ներդաշնակութիւնը: Եթէ անտիմոմենտներն են միայն միջանկյալ, ապա միջանկյալ անտիմոմենտները կը դառնայ անհատական հակասութիւն: Սակայն իրականութիւնը թէ բաղադրուած է եւ թէ բաղադրուած չէ: Օրինակ, մարդը մահացած է, եւ մարդը անմահ է: Այս երկու դատողութիւնները, առաջին հայեացքով, տրամաբանական հակասութիւն են, եւ երկուքը միասին անհամատեղելի են: Սակայն իր խորաննք նրանց իմաստի մէջ եւ ստիճանները, պիտի գտնենք, որ իրականում երկու դատողութիւններն էլ ուղիղ են: Որովհետեւ մարդ արարածը իրիւ համադրութիւն, ներդաշնակ միութիւնն է անցողիկ եւ յաւիտենականի, որոնք իր-

բեւ հակասութիւն իրար դիմացում են: Մարքսիստ դիալեկտիկան ոչ միայն դիտարկում չէ, այլ որոշապէս հակադրական է:

Ի վերջոյ, եթէ բացարձակ օրէնք է, որ աշխարհում ամէն բան իր հակադրութիւնում, ապա ուրեմն բանական է մըտածել, թէ համայնափարութիւնը եւս իր դէմ պայքարող, իր կողմը դառնող մի ուժ՝ մարմին պիտի առնի:

Եթէ ուղիղ է դիալեկտիկ բացասումը, թէ անխուսափելիութեան օրէնքով, հինը դատապարտուած է մահացման, ապա ուրեմն համայնափար հասարակարգը դատապարտուած է կործանման, տեղ տալու համար գալիք նորին:

Եզրափակելով, մարքսիստ դիալեկտիկան մահուան դատապարտութիւնն է համայնափար հասարակարգի, որից խուսափելու ճար չկայ:

ԳՈԿՏ. Ե. Ս.

ԳՐԱԳԵՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասցէ վե տրուած էր ինքի, ուր պէտք էր ներկայացնել, գործի մը համար: Տա-

- ն լսողի մէջ:

- Այո պարոն:

Ձանգը տուի. ոչ մէկ պատասխան:

- Վստահ ես որ տուցի:

- Այո պարոն:

Ձանգը տուի, աւելի ուժեղ կոխելով կոճակին եւ աւելի երկար ժամանակ՝ ոչ մէկ պատասխան, ոչ մէկ ձայն ներսէն:

- Զե՛ս ամէնքդ սուտ խօսելու:

- Ի՞նչ, պատասխանի միջոցով. երբեք սուտ չեմ խօսել:

- Բայց... ծնողիդ եթէ մերսը ըլլայիմ, պիտի գայիմ դուրս բանալու:

- Անկապած. սակայն մեծ հոս չեմ ասելու որ...:

ՄԱՐՍԵԼ ՓԼՆԻՈՂ

ԹԱՏՐՈՆ ՈՒ ԲԵՄՍԿԱՆ ԿԵՆՆԻՔ

Գ Ա Ր Ն Ա Ն Ա Ն Ձ Ր Ե Ի

Գեկտեմբեր 1, 2, 8, եւ 9-ին, Յոսիփիան-Մանուկեան վարժարանի թատերադահլին մէջ, Վահրամ Փափաղեան թատերախումբը ներկայացուց, Հայաստանի երիտասարդ թատերադերներէն Գ. Տէր-Գրիգորեանի «Գարնան Անձրեւ» թատերակը, բեմադրութեամբ ու բեմայարդարութեամբ Պրն. Պերճ Տիպլեանի:

Երջանիկ ընտանիք մը կը կազմեն գործարանի մը տնօրէն Լեւոն, իր կինը՝ Աննա եւ փոքրիկ աղջիկնին՝ Գոհար: Անցեալին մէջ սակայն, ամուսինէն զաղտնի դէպք մը կայ: Պատերազմի տարիներուն, ճակատի վրայ, Աննա, երբ ամուսինը մեռած կը կարծէր, տեղի տըւած է երիտասարդ սպայի մը, Արիսի, որ խորբայ մը ու արիկայ մը դուրս եկած է, եւ Հիմա, տասնչինգ տարի ետք, կու գայ շանթաթի ենթարկելու Աննան, պաշտօն մը ապահովելու համար անոր ամուսնոյն գործարանին մէջ:

Աննա վախնալով, կը ստիպուի այդ պաշտօնը ճարել: Եղա կը սկսի տառապիլ, մտածելով թէ ամուսինը կրնայ տեղեկանալ, եւ կորսնցնել մինչ այդ իր հանդէպ ունեցած անխախտ հաւատքը: Աննայի քոյրը, Սիրան, խորհուրդ կու տայ ամէն ինչ խոստովանիլ ամուսնին: Քրոջ ամուսինը, Գարեգին, տեսնելով Աննայի տառապումն ու վարանքը, ինք կը յայտնէ Լեւոնին, անցեալի այդ դէպքը, յուսալով որ Լեւոն իր կնոջ հետ բացատրութիւն մը պիտի ունենայ, պիտի ներէ, եւ ընտանիքը պիտի վտնէ իր նախկին խաղաղութիւնն ու երջանկութիւնը: Լեւոն սակայն, կը սպասէ որ կինը առնէ առաջին քայլը, եւ իր ազատ կամեով խոստովանի իրեն:

Երբորդ արարուածի վերջաւորութեան, ի վերջոյ Աննա կը գտնէ քաջու-

թիւնը խոստովանելու, պահանջելով որ ամուսինը սպաննէ զինք: Լեւոն ի հարկէ այդ շընք, կը պահէ իր հաւատքը անխախտ: Ղարնան անձրեւը սրբած տարած կ'ըլլայ ամէն ինչ:

Ահա նիւթը, տրամաթիք կարելու թիւններով հարուստ: Դժբախտաբար սակայն, երիտասարդ թատերադերը չէ կրցած իր հերոսներուն տալ բաւարար չափով կենդանութիւն, բնականութիւն: Ձէ կրցած մահաւանդ ԿԱՌՈՒՑՆԷԼ իր թատերակը: Գրեթէ բոլոր տեսարանները, թիւ քաջառութեամբ միայն, կը թուին «չինովի»: Բռնազգեսիկ մուտքեր, էլքեր, առանձին մշակներ, առանձին թողուններ, անկիւն մը քաշուած մենախօսութիւններ, արտայայտութիւններ, մինչեւ անգամ մտածումներ, կը զրկեն թատերակը ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԷՆ, ԿԵՆՆՔԻՆ: Ախտոս, որովհետեւ, ինչպէս ըսինք, տրամաթիք կարելութիւններով հարուստ նիւթ մըն է: Եթէ միայն հեղինակը կարենար տիրապետել բեմական արուեստին ու թէքնիքին, ու կարենար իր տիպարներուն տալ բաւարար չափով բնական արտայայտութիւններ, բնական զարգացումով արտաքին, կամ մանաւանդ ներքին դործողութիւն:

Թատերակը եթէ արժէք մը կը ներկայացնէ, եթէ իրօք Հայաստանի թատերասէր հասարակութիւնը գնահատած է զայն, ինչպէս յայտադրին մէջ կը յիշատակուի, այդ ալ երեւի պէտք է փնտռել այն իրողութեան մէջ, որ երկարատեւ արդեւորէն է ետք, առաջին անգամն է որ ընծայուած համեմատական ազատութիւններէ օգտուելով, թատերադեր մը, անձնական, անհատական ապրումներու հարցեր կը քննէ, տառապանք, սէր, հաւատք, սպառումներ խնդրոյ տ-

ոարկայ կ'ըլլան. մինչեւ անգամ, տիպարներէն մին, Հեղինէ, «Պետութեան անվերապայիմ ինծի տալիք երջանկութիւնը ես ի՞նչ ընեմ. ես հիմա ասորի կ'ուզեմ», կ'ըսէ:

Որոշ արժէք մըն ալ կը բերեն երկրորդական տիպարները, իրենց բնական, սրամիտ, կենդանի արտայայտութիւններով ու ասկումներով:

Գլխաւոր տիպարները սակայն, հիմնական նիւթը, գրկուած են բնական, աստիճանական զարգացումով ընթացող գործողութեան մը համար պէտք եղած տեխնիկ, իրենց ասկումները տանելի, իրական զարձնող կառոյցէն:

Այս իրողութիւնը նշմարուած է նաեւ այնտեղ, այնտեղի թատերական քննադատներուն կողմէ ալ. յայտագրի սկիզբնաւորութեան մէջ բերուած գնահատանքի հատուածներէն պարզ կ'երևի աստիճան. շատ ճիշդ կ'ըսէ Վ. Ռիֆսոն՝ «Հնդկական շի յաջողուել տուեալ քեմայի շարք սկսուած խօսակցութիւնը քննարկելով պատահականութիւններէ յաջողութիւնը»:

Ամենայնոց մասը թէ թատերական, թէ խաղարկութեան, կողմնակի, երկրորդական, եւ զուարթ եղող բաժինն էր: Այսպէս՝ բանուոր Յարութիւնը (Վահրամ Իշխանեան) խանդավառ, անկեղծ, գութգութ ու զէպի իր տնօրէնն ու անոր ընտանիքը. կամ Աննայի քոյրը, Սիրան (Ասողիկ Պատմաճեան) կամ Հեղինէ, մենութիւնէ տառապող դրացուհին (Տիկ. Սիրվարդ Ֆալլեան) եղան բնական, ջերմ, բաւարար չափով կենդանի: Տիկ. Ֆալլեանի շարժումներն ու խաղարկութիւնը, արտայայտութիւններն ու շեշտերը բնական թէեւ, սակայն աստիճանաբար աստիճանութիւնը բնական պահանջած յատկութեամբ չէր, որով շատ յաճախ դժուար լսելի, դժուար հասկնալի կը դառնար. մանաւանդ որ արեւելահայերէնով է որ տրուեցաւ թատերակը, իսկ արեւելահայերէնի մէջ տարբեր են թէ հնչիւնները, եւ թէ շեշտաւորումը: Լեզուական այս դժուարութիւնէն տառապեցան բոլոր գերասաններն ալ ան-

շուշտ, բնականաբար:

Կողմնակի այս բաժինն մէջ, մասնաւոր յիշատակութիւն մը պէտք է կատարել անկասկած, Աննայի քոյրը, Սիրանի ամուսինին դերը կենդանացնող Պրն. Գրիգոր Սաթմեանին համար, որը կրցաւ արժեցնել իրեն արամադրուած տողերը, եւ մինչեւ անգամ չտրամադրուածը, ու լեցուց բնածիր խաղարկութեամբ, տիրապետեց, գրաւեց հասարակութիւնը, արժէքաւորեց դերը, ու իւրեք արժանի ծափեր: Թատերակին հիմնական, տրամաթիք բաժինը սակայն, Լեւոն (Թորոս Սարգիսեան), Աննա (Ասողիկ Գասպեան), Արիս (Յարութիւն Թումայեան) չկրցան հասնիլ պէտք եղած բնականութեան եւ ուժգնութեան: Ծիշդ է, գոյութիւն ունէր անշուշտ թատերական յատուկ տկարութիւնը, անբաւարարութիւնը. ճիշդ է, անոնք ճիշդ չէին նայեցին, մասնաւորաբար Թ. Սարգիսեանն ու Ա. Գասպեանը, տալու թէ սորվածը՝ գերտառոյցէն, թէ ինքնակը՝ սեփական ըմբռնողութեամբ կառուցուածը. տեղ տեղ նոյնիսկ կրցան յուզում մը փոխանցել սրահ (Ասողիկ Գասպեան, Աննայի խոր յուզումի, լացի, դաւի հետ ունեցած ցաւապին տեսարաններուն) սակայն չկրցան ոտքի կանգնեցնել իրենց կերպարները, կեանք տալ անոնց: Անբաւարար, կամ անբնական կառոյցով տեխնիկ, անհրաժեշտ էր բնականացնել, փոխարինել խաղով, դերասանական հտրուտ արուեստի նուրբ գործածութեամբ. անշուշտ դերասաններուն եւ բեմադրիչին սերտ գործակցութեամբ: Պակսեցաւ աստիճան Գարնամ Անճրեւիմ: Բեմայարդարութիւնը յաջող, սակայն շատ աւելի աշխատանք ու ճիշդ կը պահանջէր բեմադրութիւնը, առնուազն պատճառաբանեալ ու բնական զարձնելու համար դերակատարներուն տեղափոխութիւնները բնական վրայ, անզաղար տեղի ունեցող դիրքի, կեցուածքի փոփոխութիւնները, նստիչներն ու ոտքի ելիչները, շատ յաճախ հասարակութեան կոնակ զարձնելները, (առանց անհրաժեշտութեան) վերջին արարուածի վեր-

ՓԱՐԻԶԻ ԱՐՈՒԵՍՏԻ ԹԱՏՐՈՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Ա.

ՍԱՐԹՐԻ «ՀԻԻ ՔԼՕՆ»

Սօֆի Լորանսի թատերախումբը, որ Փարիզի Արուեստի Թատրոն կը կոչուի, Պէյրուսի հասարակութեան հրամցուց իր խաղացանկէն չորս կտորներ. երկուքը դասական հեղինակներէ, Մոլիէրէն ու Ռասինէն, երկուքը՝ արդիական հեղինակներու գործեր. Ժան Փոլ Մարթրի «Հիւ Քլօն» (Դոնփակ) եւ Մարսէլ Աշարի «Վուլէ վու ժուէ ալէք Մօան»:

Մարթր մտածումներու հեղինակ է, իր թատերականները միջոց են մտածումներուն արտայայտման, ներկայացման: «Հիւ Քլօն» նիւթը եթէ ուզենք ամփոփել, մօտաւորապէս հետեւեալը պիտի ստանանք՝ «Մարդուն մտածածն ու ըսածը չէ որ կ'արտայայտէ զինքը՝ այլ իր կեանքը, իր ըրածները, կատարուող աֆօնին են միայն որ կ'արտայայտեն թէ ինչ ցանկացած ենք, կամ ոչ: Մարդուն պատիժը իր իսկ մէջն է, իր իսկ ներքին ձայնն է: Մարդոցմէ ամէն մէկը դատաւոր մըն է քովին համար, երբեմն դաժնէն է քովին: Անհատական առանձնացում կարելի չէ, մարդիկ հաւաքաբար պիտի ապրին, հաւաքաբար ալ պիտի կարենան ազատուիլ, կամ հաւաքաբար ալ պիտի դատապարտուին ու

կորսուին: Վերջ չունի մարդոց փոխադարձաբար իրար դատելը, իրար չարչարելը:

Մտածումը կ'արտայայտուի հոս, երեք անձնաւորութեանց միջոցով, այլ մը՝ Կարսէն (խաղարկութիւն Ժան Փիէր Քաֆոնի) եւ երկու կանայք՝ Ինէս (Վալէրի Քինսի) ու Էսթէլ (Թէրէզ Ռուսէլ): Երեքն ալ անծանօթ իրարու, կը հանդիպին իրարու յաջորդաբար, տարօրինակ պահուկի մը սենեակին մէջ, ուրկէ դուրս զալ կարելի չէ, ուր կեանքի յարմարութիւններ գոյութիւն չունին. որ իրականութեան մէջ դժոխք է, անդիտի աշխարհն է, ինչպէս հետզհետէ կը զգայ, կ'անդրադառնայ հանդիսատեսը: Անձնաւորութիւններն ալ նոր մեղմոյներ են, որոնք իրարու կը հանդիպին առաջին անգամ ըլլալով, եւ դատապարտուած են միասին ըլլալու, (այդիւ բառը կարելի չէ գործածել անշուշտ) եւ իրարու դատաւորը, դաժի՛ճը ըլլալու: Ամէն փորձ, քաշուելու անկիւն մը, կամ առանձին մնալու՝ ի դուր կ'անցնի: Ստիպուած են պարզիլ իրենց աֆօնը, կեանքի մէջ իրենց բրածները, գործած գիտակցական կամ երեւութապէս անդիտակից ոճերները. ստիպուած են ըլլալ իրարու դատաւոր, փնտռել իրարու վրճիռները, կարեկցութիւնը. նոյն ատեն իրար կը շարժարեն, իրար կ'ամբաստանեն, մէկը միւսին պատիժը մէկը միւսին դաժի՛ճը կը դառնայ: Ու երբ կը կարծես վերջաւորութեան հասած ըլլալ, Կարսէն, երկու թեւերը բանալով կը դադարեցնէ սկսող ծափահարութիւնները, ըսելու համար՝ «Ծարուհակներ...»:

Երկու ժամ կը տեւէ Մարթրի «Հիւ Քլօն» ներկայացումը. երկու ժամ առանց դադարի, մէկ տրամուշտով, երկու ժամ՝ առանց պատմութեան մը ծալքերուն բացումին. սակայն, հոգեկան դադարի մնացած անկիւններուն աստիճանական լուսաւորումով, շնորհիւ անձնաւորութեանց աշխարհի վրայ ունեցած

շաւորութեան լոյսերու արուեստական նուազումը, կամ այլ եւ կնի՛ իրար հասկընալու տեսարանին շարժումները, ապրումները...

Կրնանք սխալիլ անշուշտ, սակայն կը թուի մեզի, թէ բնագործի թատերակը, սակայն առանց դայն սիրելու, հուշերու, ինչ որ պէտք չէ ըլլայ. արուեստը, մանաւանդ բնագործութեան դժուարին արուեստը որպէս նախապայման ունի ենթակային խանդավառութիւնը դէպի իր մշակած նիւթը, տարրերը:

Բ. Փ.

կենսաբեր, մտածումներուն, կատարած գործերուն պատմութիւն:

Կարելի է իսկոյն ըմբռնել դժուարութիւնը, որ կը ցցուի դերասաններուն եւ բեմադրիչին դիմաց: Պատմութիւն մըն է ամբողջ թատերակը. վարը, անցեալին կատարուածներու, զգացուած բաներու: Նոյն ժամանակ, ներկային մէջ զգացուող տառապանքին հետ ազուցուած: Երեք հոգի, փոխն ի փոխ, երբեմն միասին, ոնենակի մը նեղ պատերուն մէջ, ինքզինքնին ու շուրջիննին պիտի վերլուծեն, գործողութեանց նուազագոյն կարելիութիւններով իրենց տրամադրութեան տակ (խօսքը արտաքին, երեւցող գործողութեան մասին է) եւ ներքին գործողութիւն մը արտայայտելու անհրաժեշտ պարտադրանքով: Պէտք է անվարան ըսել, թէ թատերակի թաւալումին հետ, հետզհետէ, տախտակաւոր ուսուցանող տպաւորութիւնը, հետզհետէ աւելի ու աւելի կենդանի խաղարկութեամբ մը, դերասանները կրցին սրահը պահել գրեթէ շուշը բռնած վիճակի մէջ, ու վերջաւորութեան՝ խել արժանի, երկարատեւ ծափեր:

Կային անշուշտ շարժումներու անբաւարար պատճառաբանութեան, երբեմն միօրինակ ձեւով շրջանաւարտեալ անաւարտութիւն, դերակատարներուն իրար ետեւէ զիջ մը մեքենականօրէն դառնալներուն թերիները. կար նաեւ, երբեմն, զիջ մը թատերական եղող, երկարող շնոր, օակայն ընդհանուր առումով, արուեստի գործ մըն էր հրամցուածը: Մասնաւոր յիշատակութեան արժանի է մանաւանդ Ժան Փիէր Քաֆօն, որ իր աչքերուն շղային կծկումներով, մատներու շարունակական պրկումներով, նայուածքին հետզհետէ աճող անձկութեամբը, կրցաւ լրիւ արտայայտել ներքին սարսափը, անձկութիւնը, անվերջանալի պայքարը հակասական մղումներու ճնշումին տակ ինկած մարդուն:

Ք.

Մ. ԱՇԱՐԻ «ՎՈՒԼԷ ՎՈՒ ՓՈՒԷ»Ն...

Բուրբուրի տարբեր մօտեցումով,

տարբեր տիպարներով, տարբեր ներթով թատերակ մըն էր Մարսէլ Աշարի «Վուլէ վու ժուէ ալէք մօան», Ֆրանսերէն «մուս» բառը դիտումնաւոր կերպով գրուած «Մօս» (Կ'ուզէ՞ք ինծի հետ խաղալ): Զուարթօրէն քննուած լուրջ հարց մըն է. սիրէի երկու փառնանք ի վիճակի չեն իրենց աշխատանքը շարունակելու, որովհետեւ սիրահարուած են միեւնոյն աղջկան, իրենց հետ աշխատող, ու գրեթէ ամէն ինչ թեթեւօրէն վերցնող, խաղի վերածող, լուրջ զգացումներն անգամ կատակի տալու տրամադրի իզայէլին: Երբորդ մը, Օկիւսթ, կը փորձէ եւ մաս կազմել խումբին, յանձն առնելով անձայն տանիլ ոտքի հարուածները, որ իրեն կու տան երկու փառնանքը, կատարելագործելու համար փառնի իր դաստիարակութիւնը, եւ գրաւել իզայէլի սիրտը: Գրաւութեան զանազան միջոցներ կը փորձուին, երգել, պարել, լալ, սպաննել, անձնասպան ըլլալ, խաղաթուղթեր անհետացընելու անպարարական ճարպիկութիւններ, դուրս շարժել, բանաստեղծական զեղումներ, լուռ մնալ, շատ խօսիլ, փորձել համբուրել, կամ շփոթել համբուրել: Թատերակը պատմութիւն մը չունի, դարձեալ: Երեք արարուածներու տեղողութեան, երեք անձնաւորութեանց եւ միեւնոյն աղջկան միջեւ խաղցող կատուի ու մուկի խաղ մըն է որ կ'ընթանայ արագ կշռոյթով մը: Խաղ մը, որ տակն ու վրայ կ'ընէ խաղաղ գործակցութիւնը երկու փառնանքի միջեւ, կենսաբան փառնանքը՝ սիրէի ներս, կենսաբան նորեկ երիտասարդին ալ:

Երեք տարբեր սէրեր, նոյն աղջկան համար. երեք տարբեր մտածումներ, որոնք կ'արտայայտուին գրեթէ միեւնոյն ձեւերով, գրաւելու միեւնոյն միջոցներով, միեւնոյն որ իզայէլ իր ընտրութիւնը կատարէ (Օկիւսթ), եւ երկու փառնանքը կարենան վերադառնալ իրենց նախկին կենսաբան, նախկին հասարակչութեան:

Այսքան է ներթ: Սակայն հեղինակը կրցած է ստեղծել ապուղ հակներ:

շորան ալ իրենց ծիծաղելի եւ յուզիչ կողմերով, ներկայ են, կենդանի են, մարդկային են:

Կատարեալ խաղարկութիւն մը երեւան բերին Քրոքոն՝ Բլաւմին դերը խաղցող, Սթիկ Կէրսըն՝ փոխն ի փոխ սրամիտ, զուարթ, լուրջ, աստապող, արտում, յուզումներով լի. եւ Իդապէլի դերը խաղցող, նոյն ատեն բեմադրիչը հողոյ Սօֆի Լորանս, լեցուցին բեմը. բեմին ամէն մէկ անկիւնը կեանք առաւ, մասնակից եղաւ իրենց փնտռումներին, ծարաւին, կարօտներուն, սէրներուն, Հիսաթափութիւններուն, թեթեւութեանց ու լրջութեան:

Նուաղ չափով բնական, բայց եւ այնպէս ոչ մէկ բոպէ ամբողջութիւնը խանգարող խաղարկութեամբ մը, Ժան

Փիէր Մութիէ երկրորդ Բլաւմին, Ռոսֆասի դերով, եւ Տանիէլ Կալ՝ Օկիւսթի դերով, բերին իրենց թափը, այս մըլտական պղպղակումի մէջ հղող թեթեւ փմէտիլն:

Պէտք է ըսել, որ այս երկրորդ կըտորին մէջ շատ աւելի զգալի էին բեմագրիչին Թէֆնիֆն ու արուեստը, խումբն ու թատերակը բանաստեղծական որոշ բարձրութեան մը տանող:

Հակառակ սրահին փոքրութեան ու բեմական սնյարմարութեանց, (ՕՍՍԻԻ սրահը), թատրոնը սիրողներու համար վայելք մըն էին թէ Սարթրի, թէ Մ. Ա. շարի բեկաններուն ներկայացումը Սօֆի Լորանսի խումբին կողմէ:

Բ. Փ.

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՍՕՖԻ ԼՈՐԱՆՍԻ ԿԵՏ

Թէպէրը տ'ար տը Փարի՝ Գոմփանի Սօֆի Լորանս. այս անուան տակ ներկայացաւ Պէյրութի Հասարակութեան, երիտասարդ դերասաններու խումբ մը: Երիտասարդ էր նաեւ խումբը ղեկավարողը, կենդանացողը, եւ իզական սեռէն, ինչ որ քիչ մը դարմանք կը պատճառէ:

Սակայն քանի մը բոպէ խօսելէ ետք Սօֆի Լորանսի հետ, մանաւանդ թոյլ տալէ ետք իրեն որ տարուի իր արուեստին թափէն, մոռնայ ինքզինք, մամուլը, մամուլին յատուկ տեսակցութիւն մը ըլլալը, ու խօսի իր փնտռումներէն, արուեստի իր ըմբռնումներէն, թատերական իր ձգտումներէն, այն ժամանակ պարզ կը դառնայ, թէ ինչպէս փոխարինուած են տարիքի յատուկ կարծիքի ծանրութիւնն ու ազդեցութիւնը, ներքին թափին համոզելու կարողութեամբ:

— Ինչպէ՞ս եկած էք քատրոնին, իրիւր բեմադրիչ անշուշտ: Կը հարցնեմ, որովհետեւ քիչ մը անսպասելի կը զբոսնեմ երիտասարդ կնոջ մը համար խումբ կազմելու, բեմադրելու պահանջը: Վարժուած եմք աւելի քանկան զանաւոր

բեմ բարձրանալու եւ խաղալու պահանջը:

— Իմ պարագայիս, մէկը առաջնորդեց միւսին: Կը խաղայի Փարիզի այլ թատերախումբերու մէջ. սակայն զոհ չէի, ոչ ուրիշներուն, ոչ ալ իմ խաղարկութեան: Այնքան զգուսնք կը զգայի խաղացած ժամանակս, որ զադրեցայ խաղալէ, բեմ ելլելէ: Եւ որովհետեւ բեմ մը կը քաշէր դիտ, պահած էր իր գրաւչութիւնը ինծի համար, սկսայ փնտռել պատճառները զգուսնքիս:

«Արդի՞նք» — դուայ որ բեմադրութիւնն էր պատճառը, թէ իմ ե թէ միւսներուն անհամ խաղարկութեան, որով տեսակ մը հարկադրանքով էր որ ստիպուեցայ զալ բեմադրութեան, կազմել իմ սեփական խումբս, բացատրել իրենց մըտածումներս թատրոնի ու բեմադրութեան մասին եւ սկսել աշխատանքի:

«Եական էր կազմել խումբ մը, որուն անդամները յանձն պիտի առնէին փոխել իրենց խաղալու կերպը:

«Խումբը կազմուեցաւ, 18-ի չափ զործեր բեմադրած ենք ցարդ, — մեծ մասը դասական կտորներ. բայց եւ այն—

պէս դեռ գոհ չեմ:

«Օրինակի համար, Ռասինի Պրիթանիքիւսը կը փորձեմ նոր բեմադրութեամբ մը ներկայացնել, զայն վերադարձնելով տեսակ մը Պախի երաժշտութեանց կըլնոսթով: Ձեռ գիտեր թէ պիտի յաջողի՞մ աւարտել այդ աշխատանքը, որ սոնուադն տարի մը կ'ուզէ, բոլոր դերասաններուն կատարեալ գործակցութեամբ: Կը ջանամ իրենք ողբերգութիւնը ստեղծել. սակայն դժուարին աշխատանք մը կը սպասէ դերասաններուն, թէ ձայնական մարդին մէջ, թէ ֆիզիքական, թէ շարժումներու:

— Որո՞նք են ձեզի համար ամենադժուար եւ ամենանիւրայեան քստերակի մը բեմադրութեան ընթացքին:

— Բոլոր դերասաններն ալ խանդավառ են սկզբնաւորութեան, երբ կը բացատրեմ թատերակը, կամ իմ ըմբռնողութիւններս՝ զանազան դերերու մասին: Հետզհետէ սակայն, քանի կ'առաջնան փորձերը, եւ որովհետեւ չափազանց պահանկոտ եմ, կը սկսին ջղայնանալ ինձմէ: Հաւած կ'ըլլանք այն բույրին, երբ արդէն ստիպուած են իրենք գործել. ա՜մենադժուար ու ճակատագրական բոսորդին՝ դերասանին համար: Կամ կը ձախողին՝ այն ժամանակ պիտի դադրին մաս կազմելէ խումբին, կամ կը յաջողին՝ ու Հիանալի արդիւնք մը ձեռք կը բերեն: Սակայն մինչեւ անցնելը այդ ճակատագրական բույրներուն, անտանգի պահեր կ'ապրիմ. կ'ապրին եւ իրենք անշուշտ:

— Որո՞նք են ձեր ամենէն ուրախ բույրները, եւ ամենադժուար անցնող պահերը:

— Նախ բեմադրութեան համար տարուող աշխատանքներուն սկզբնաւորութեան, երբ կը բացատրեմ իրենց թատերակը եւ իմ ըմբռնումներս, բիւրին ու զանազան դերերու մասին: Անգամ մըն ալ անշուշտ՝ երբ կ'անցնին դժուար պահերը, երբ դերասանը յաջրած դժուարութեան, կը սկսի գործել ինքը, պէտք եղած ձեւով:

«Անշուշտ, անհամութեան բույրներ

կան նաեւ յաջող թատերակի մը յաջող ներկայացումէն ետքն ալ: Օրինակի համար, երբ երկուստեան նոյն թատերակը կը խաղցուի, կը սկսի արժէքազրկուել, թէ դերասանին, թէ բեմադրիչի աչքին: այլեւս նոյն հաճոյքը չես առներ:

«Թատրոնը անցողակի արուեստն է:

«Կարենալ հասնելու համար արուեստի այդ անցողակի հաճոյքին, ուրախութեան, անհրաժեշտ է հաւաքին աշխատանք, մանաւանդ հաւաքակազմ աշխատանք:

«Յրանսայի մէջ, մենք չափէն աւելի անհատապաշտ ենք: Մինչդեռ Յոյներն ու Ռուսները բնական ձեւով ունին հաւաքականութեան ըմբռնումը: Ինչ որ Հիանալի է յունական թատրոնին մէջ, խո՛ւմբն է, որ կու գայ իր հաւաքական արտահայտութեամբ ու խաղարկութեամբ բարձրացնելու անհատ դերասանին խաղը»:

Հիմա արդէն մեկնած է Սօֆի Լորանս, ոչնչի հին յունական թատրոնները՝ ձեռքի շարժումներով եւ աչքերու քաղաքարութեամբ կը ներկայացնէ անհատ դերասանին խաղարկութիւնը, յունականներն ու սպորտներուն տնձր, եւ ճիշդ ժամանակին, տեղին, հաւաքականութեան մը, խումբին միջամտութիւնը, աւելի եւս բացայայտ դարձնելու համար արտայայտուած տառապանքը: Հարցումը ձգած մէկդի, իր սեփական մտածումներուն կծիկը կը քակէ, արագ, կտրատ կտրատ, կարճ ժամանակի մէջ իր մտածումները հալածող ամէն նիւթ կարենալ արտայայտելու յստակ մտահալածանքով մը:

— Այո. հաւաքական վերացում մը կայ, ներդաշնակութիւն մը: Մինչդեռ մեր խաղարկութեան ներկայ ձեւերով ու պայմաններուն մէջ, դերասանը աւելի իր խաղարկութեան մասին կը մտածէ, եւ ամբողջութեան անբաժան մասնիկը ըլլալու զգայնութիւնը չունի: Բեմական կարելիութիւններն ու անկարելիութիւններն ալ կը նպաստեն ատոր. այսպէս, դերասանը որ իր բաժինը խաղացած է,

զուրա ելած, քուլիսներուն մէջ կը խոսակցի, կամ կը ծխէ, ու կորսնցուցած է կապը ամբողջութեան հետ. քիչ վերջ, վերադառնալէ քան մտնելով, պէտք է անմիջապէս վերադառնէ իր քովը, չեղար, տարուամբ. նպատակ մը չէ այս անգամ, ու ես, անգամ մը, ստիպուեցայ Անտրոնի Դերակատարներէն պահանջել որ ասէնքն ալ բեմին վրայ մնան, նոյնիսկ երբ դեր չունէին: Դեր չունեցողը կը քաշուէր անկիւն մը, գորգի մը վրայ, սակայն հոն էր, ներկայ՝ միւսներուն խաղաղութեան, ապրումներու հոգովով: Դերակատարներն ալ գոհ մնացին, հասարակութիւնն ալ:

— Բեմադրութեան որոշ դպրոցի մը կը հետեւի՞մ. նախընտրութիւն մը ունի՞մ այս կամ այն դպրոցին համար:

Պատասխանը կու գայ կարճ, կը տրուի՝ — Ոչ: Աւելի կը թերեւս դէպի պարայարգարանք — (Քարէկրափի): Բեմադրչիներուն մէջ ամէնէն շատ կը հաւնին՝ Փիւքաթըրը, որ Գերմանացի է: Եւ, ի դէպ, այդ բեմադրչի բառն ալ չեմ սիրեր, անծիշէ է, դոյրութիւն չունի, ներկայացում մը բեմին վրայ չի դրոյր, ներկայացումը կը զեկավարուի, կը կենդանացուի, կը յարգարուի, սակայն բեմ չի հանուի:

— Նախընտրութիւն մը ունի՞մ այս կամ այն հետեւիսին վերաբերմամբ, կամ գրական սեռի, քառերակի, դերի մը վերաբերմամբ:

— Կը սիրեմ Ժիւլիէն Կրազը, կը նախընտրեմ դիւցազներգական վէպերը՝ Քաղաքաբնակ, Յոգեմբ. չեմ սիրեր ճորտ վէպը բռնածը: Որպէս թատերադիրներ եւ թատերականներ՝ կը սիրեմ Քլոտիլդը, Պրէլիթը եւ անոնց գրած Բիւնները: Երկուքն ալ ներշնչուած են չինական թատրոնէն. Քլոտիլդ՝ աւելի նրբորէն, Պրէլիթ՝ աւելի գիտական, վարդապետական ձեւով մը:

— Ի՞նչ կը կարծիք մը պէտք է ըլլայ միայնակը թատրոնին, թատերագրին, դերասանին ու բեմադրչիին:

— Թատրոնին նպատակը պէտք է ըլլայ հանդիսատեսը դուրս բերել իր սո-

վորական, ընթացիկ մտածողութենէն, արտաքին մտահոգութիւններէն, ընծայելու համար անոր կարելիութիւնը՝ գտնելու ինքզինքը, որպէս էութիւն:

«Նոյնը պէտք է ըլլայ դերասանին նպատակը:

«Ինչ կը վերաբերի թատերագրին՝ սոն պէտք է ջանայ, ամէն բանէ առաջ, ստեղծել իր լեզուն, բառը: Ո՞՞՞՞ ըսել չեմ ուզեր, այլ խօսքը, լեզուն: Ամէն ինչ բոլորած է, լեզուն, արտայայտութեան իւրայատուկ գործիքը, կրնայ նորութիւն բերել:

«Բեմադրչիին պարտականութիւնն է ունենալ ո՞՞՞՞ մը, յատուկ իրեն, եւ կատարելագործել զայն:

Սօֆի Լորանսի խօսակցութիւնը կը դառնայ արագացող, բուն: Նայուածքը սեւեռած է հեռուն, չի նայիր որ ուր է, հետն է իր մտածումներուն, դժգոհութեանց, պահանջներուն: Նախադասութիւնները կը յաջորդեն իրարու, կտրուկ, կտրճ, արագ, աւելի արագ: Կը զգաս ներքին թափը, միշտ ուժը որ զինք տարած է թատրոնին, բեմադրչիի դժուարին ու յաճախ շատ ապերախտ ասպարէզին:

— Գիտէ՞ք ինչ. մեր թատրոնը մեռնելու վրայ է: Արեւմտեան թատրոնը ըսել կ'ուզեմ: Յիշատակի մէջ, 10 000 դերասաններու վրայ 300-ը միայն իրաւ դերասաններ են: Մեծ վտանգը, ահաբեկ վտանգը կու գան սինէմայէն, եւ հեռատեսիլէն: Հեռատեսիլը, սինէման անգամ, պղտիկ տաղանդներով կը գոհանան: Սինէմայի բեմադրչիը դերասանին անհատականութիւնը փնտռած չունի. անոր ուղածը իր հրամանին կատարելին է: Պղտիկ տաղանդները թատրոնին համար մեռեալ ծանրութիւն են միայն. ստիկէ կ'առաջանայ իրաւ դերասաններու պակասը:

Կանգ կ'առնէ քիչ մը, սիկարէթ մը կը վառէ քիչ մը պրկուած, ջղային չարժումներով, ու կը շարունակէ, քիչ մը մեղմացած թոնով մը:

— Ահա թէ ինչու մշտական մաշում մըն է բեմադրչիին կեանքը, պէտք է

չարունակ փնտռեց բեմը սիրող ուժեր, զանոնք պահել ջանայ. չեն մնար, կ'երթան Հեռատեսիլին, սինէմային. թափուած աշխատանքը արդիւնք չի տար: Կը կարծեմ, թէ պիտի ստիպուիմ, երբ վերադառնամ Փարիզ, զգրոց մը բանալ, իմ գրոցս, գերասաններ պատրաստելու համար, տարբեր, նոր մօտեցումով մը:

— Լաւ, այդ պարագային անշուշտ պատգամ մը կ'ունենամ փոխանցելի անոնց, որոնք արուեստը, մասնաւորաբար քննական արուեստը կը սիրեն ու տրամադիր են նախընտրելու անոր:

— Այո: Նախան մեծելը բեմական արուեստին պա՛ թող գիտնան թէ թատրոնին մէջ կարեւորը ԴԻՄԵՆՍԻԿ կարեւորն է, կամքն է՝ յարատւելու, ինքզինքը սրբապրելու, ստեղծագործելու:

«Թող գիտնան նաեւ, թէ թատրոնը երեւալու վայր չէ, այլ ընդհանրական իմաստով թեման տեղն է: Դերասանը պէտք չէ ունենայ ի'ր դէմքը, ի'ր դիմապիծը, այլ բոլոր դիմապիծները: Այդ զնով է միայն, որ փոխան ընկերային պոստիկ էակին, պիտի դառնայ ԱԶՄԻՏ ԷՄԻ ՄԷ, ԱՄԲՈՂՋԱՆԱՆ, ԼԻՐԻ, արուեստին կարգապահութեանց ու կաշկանդումներուն ընդմէջէն:

«Այո. հակասութիւն թող չթուի «ազատ» բառը, «կաշկանդումներ» բառին հետ գործածուելը. ազատօրէն ընդունուած կաշկանդում մըն է ստիկոս, կարենալ իրականացնելու համար էութեան ամբողջական արտայայտութիւնը:

«Աշխատիլ պէտք է, պէտք չէ սարսափիլ ու պէտք է պատրաստ ըլլալ օրական 14 ժամ աշխատելու. խօսքս անշուշտ արհեստով դերասաններուն համար է:

«Արդ զերասանին համար ալ կենսական է յարատեւ աշխատանքը. անոնք ունին սակայն սէրը թատրոնին՝ որպէս մտրակող ուժ: Միայն թէ, դժուարութիւնը հոն է, որ դերասան ըլլալու համար պէտք է ապրիլ, պէտք է աշխիւ, պէտք չէ խնայել ինքզինք, ոչ իսկ մասնակցով մը, ամբողջական պէտք է ըլլայ

նուիրումը. այդ գնով միայն կարելի է իրաւ ըլլալ, իրական ըլլալ:

— Ի՞նչ կը խաղան Փարիզի մէջ մերկայիս: Ի՞նչ կը պահանջէ քաղաքական հասարակութիւնը:

Երկու տեսակի հասարակութիւն կայ: Անոնք՝ որոնք իրենց ընթերցել կը մարտն են դրօսնուլ կ'ուզեն, ցրուել կ'ուզեն, կ'ուզեն պրկումը վերացնել իրենց ներաշխարհէն. սակայն չեն գիտեր թէ ի՞նչ կը նշանակէ պրկումը թուլցնել. կը սիրեն խնդալ, զուարճանալ: Մեծամասնութիւն են անոնք:

Կայ երկրորդ հասարակութիւն մը, ուսանողութիւնէ բաղկացած հասարակութիւնը, որ կը կանչէ, կը նահանջէ, կը սպասէ, կ'ուզէ, արժէքներու ըմբռնումը անվթար պահած է:

Փնտռուած ու գնահատուած հեղինակներ են, ներկայիս ալ, Պրէյսթ, Գլոտէլ, Օ' Գազէյ: Սակայն ես չեմ հաւատար Բոգմոֆիթ թատրոնի կարելիութեան: Պրէյսթը կարելի է լաւ խաղալ միայն գերմաներէնով, Գերմանացիներու կողմէ, Մոլլէրը Ֆրանսերէնով՝ Ֆրանսացիներու կողմէ:

— Ի՞նչ է ձեր կարծիքը «սօսեթն» կոչուած քաղաքական մասին, կամ քաղաքակրթական մէջ պատմութեան մը անհրաժեշտութեան մասին:

— Էականը պարզ գործողութիւն մը ներկայացնելն է, յաջող ձեւով մը, ուր երեւան պիտի գան ժարդկային ապրումներ, կիրքեր, մտածումներ:

«Գործողութիւնն է միակ կարեւոր բանը, եւ ոչ թէ պատմութիւնը:

«Եթէ կրցած է հեղինակը այս կամ այն գործողութեան միջոցով մարդկային այս կամ այն ապրումը արտայայտել, իրեն յատուկ լեզուով մը ու յաջողութեամբ, արուեստի գործ մը տուած պիտի ըլլայ: Արդիական կոչուած ձեւերը, եթէ բռնադրօսիկ են, եւ մանաւանդ եթէ չեն յաջողիր գործողութեամբ մը արտայայտել մարդկային այս կամ այն գիծը, ըստ ինքի, արժէք չեն ներկայացնել:

Բ. Փ.



« ՏԵՍԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ »

Հեղինակ՝ Գեորգ ԱճԻՄԵԱՆ

160 էջ. 19 սմ 14 սմ:

Տպարան Սեւան, 1962

Գիրքը հաւաքումն է հեղինակին լոյս ընծայած տեղական եւ քննադատական փորձերուն, «Սփիւռք» շաբաթաթերթին մէջ, անցնող չորս տարիներու ընթացքին:

Տեսական հարցերու քննութեան այս փորձերը դժբախտաբար զրքի ձեւին եւ կամ են տաւայ վերամշակումի, զանազարտ պահելու համար անոնց նախնական հարազատութիւնն ու ժամանակի կնիքը՝ կ'ըսէ հեղինակը: Արդիւնքը՝ կապակցումի որոշ պակաս, որոշ կրկնութիւններ, դժուարութիւններ՝ հետեւելու հեղինակին մտածողութեան:

Գիրքը բաժնուած է վեց մասերու՝ ա) Վիպադրութեան արուեստը, որ կէսն է զրբէ գրքին, եւ ընդհանուր վիպագրութեան կը վերաբերի, բ) Գրականութեան սահմանումը եւ ակնարկ Սփիւռքի Հայ Գրական Ձարթօնքին վրայ, գ) Միտք եւ Գրականութիւն, զ) Արուեստ Գրախօսութեան, ե) Մուսան Մեր Գրականութեան մէջ, եւ զ) Անդուգական Բանաստեղծը կամ Բանաստեղծները մասերը, որոնք աւելի կը վերաբերին Սփիւռքահայ արդի գրականութեան:

Ճիշդ կը մատնանչէ հեղինակը, իր զրքի յառաջարանին մէջ՝ «Մեր գրականութեան մէջ տեսական վերլուծումներու բացը գրայի եղած է միշտ. մանաւանդ ներկայիս, երբ մեր գրականութեանը կը բոլորէ փոխանցման շրջան մը: Այս շրջանը կրնայ վտանգաւոր հանգիստ

տանալ, եթէ կանխաւ չսպարդուին մեր պայմաններն ու սպարագանքը՝ օժտելով զանոնք բաղդատական չափանիշերով:

Հաւանաբար այդ աշխատանքը ընել փորձած է հեղինակը. սակայն, ինչպէս ըսինք, բաւարարուած է իր նախապէս լոյս ընծայած յօդուածներուն մէկտեղումովը. արդ, տարբեր է յօդուածի մը կառոյցը, տարբեր է՝ գրքինը. ու այս գիրքը տուած է ատկէ. մանաւանդ իր առաջին կէսին մէջ, Վիպադրութեան Արուեստը բաժնին մէջ, որ ունենալով հանդերձ անհրաժեշտ ստորաբաժանումները (ներածական, մուտք, Վիպադրութեան բաղադրիչ ուժերը, Կառոյց, Ժամանակ, միջավայր կամ տեղ, Արուեստ՝ Սեռ, Խորք, Նպատակ, Եզրակացութիւն՝ Ապարան) չի թողուր ընթերցողին վրայ մշակուած, ըմբռնուած ու ըմբռնելի ամբողջութեան մը տպաւորութիւնը:

Որոշ է հեղինակին մտահոգութիւնը, մինչեւ անգամ մտատանջութիւնը, երբ հարցը գրականութեան ու արուեստին կը վերաբերի. որոշ է նաեւ, որ իր արտայայտած մտքերը կրնան վիճելի ըլլալ. ինք եւս կը գիտակցի ասոր՝ «Տեսալքիւններ, եւ տեսական ռեւիւ մտաւճաւարութիւն միշտ կրնան, եւ պէտք է ըլլան վիճելի» (էջ 75), եւ վիճելի են, (ոչ գրախօսականի մը մէջ անշուշտ). կատկած չկայ նաեւ, որ տեսական զրեւնադատական հարցերու մէջ որոշ շափով իմաստասիրական հարցեր մուտք պիտի

զաննեն. սակայն որպէսզի տեսական այդ հարցերուն քննութիւնը ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՄ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՀԱՆՁ ՄԸ ԳՈՀԱՅՆԷ, անհրաժեշտ էր որ մասնաւոր ճիշդ մը թափուէր կարելի եղածին չափ պարզացնելու՝ արտայայտուած մտքերը, շօշափուած հարցերը, կարելի եղածին չափ մէկ ընթերցումով ըմբռնելի դարձնելու օտար տեսարաններու կողմէ արտայայտուած մտքերն ու մտածումները, ըմբռնումները:

Կրնայ հեղինակ մը կարեւորութիւն չտալ անշուշտ «դիւրամբունելի»ութեան պահանջին, սակայն այն պարագային միայն, երբ ի մտի չունի ընթերցող հասարակութիւնը, այլ կը գրէ իմաստաբութիւն, կամ տեսական հարցերը առօրեայ մտածողութեան նիւթ դարձուցած փոքրաթիւ ընթերցողներու միայն ուղղելով իր խօսքը. արդ, այդ չէ պարագան այս գրքի հեղինակին, ու մասունքին մէջ լոյս ընծայուած յօդուածներն են որոնք գրքի վերածուած են, որով լայն հասարակութիւն մը պարտաւոր էին նկատի ունենալ:

Հեղինակը կը դառնայ աւելի վճռական, ու իր մտածողութիւնը՝ աւելի պայծառ, երբ երկրորդ մասին կ'անցնինք, որ կը վերաբերի աւելի մերօրեայ դրականութեան, գրախօսութեան, քննադատութեան, գրական արուեստին եւայլն:

Ձուտ տեսական հարցերու քննութեան ժամանակ յայտնաբերուած ճիշդ անհետացած է արդէն, ու մտածումները՝ աւելի հարազատ հեղինակին, կու գան հոսուն, շատ աւելի յստակ կապակ-

ցութեամբ մը:

Գրական-քննադատական մեր կեանքին մաս կազմող կարգ մը ախտաբանական երեւոյթներ մատնանշուած են, ճշգրիտ ախտաճանաչումներ կատարուած են, մինչեւ անգամ մտրակումներ կան, որոնք ցաւէ աւելի կրնան խթանում մը պատճառել՝ «Դժբախտաբար հայ գրողը եղած է ծռլ: Գէր այն գրողները որ մեմֆ ցանցած ենք: Ան վստահած է մուսային, եւ ինքզինքը նկատած է վաւերական բանաստեղծ կամ արձակագիր ու այնուհետեւ չէ մտածագրած երգեք»:

Կամ՝ «Հայ սփիւռքի մէջ գրական ֆմնացատութիւնը վերածուած է զանաւորի մը: Զանաւոր ծիծաղելի է եւ խղճաւի, որովհետեւ կատակերգութիւն իսկ չէ»:

Ահսոս որ գիրքը կ'աւարտի վերի լրջութեան հետ խոտոր համեմատող տասնեակ մը էջերով, «Անգագական քանաստեղծը կամ քանաստեղծներ» որոնք ծաղրանք ու հեզանք կը պարունակեն, առանց երգիծանքի մը արուեստը յայտնաբերելու, եւ առանց լուրջ մտրակում մը ըլլալու:

Թէեւ վէպ մը չէ Գէորգ Աճէմեանի գրածը, փորձերու մէկտեղում մըն է միայն, սակայն նաեւ այս պարագային կը վերաբերի իր իսկ արձանագրած սահմանումը՝ «Կառույցը է նաեւ արուեստի բանալին: Լաւ եւ յաջող կառույցի մը վրայ կանգնել գործը հմտութիւն կ'ենթադրէ, իրողութիւն մը որ պիտի նըպաստէ արուեստագետին նիւթի նաւաճումին:

Բ. Փ.





ՉԱՐԵՆՑԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

Այս վերնագիրը մերը չէ։ «Մոզեստական Հայաստան» ամսագրի Օգոստոսի թիվն մէջ, Հր. Գրիգորեան նոյն վերնագիրը գործածած է, «Դաշնակցական» բառին յաւելումով՝ «Չարենցի ժառանգութիւնը» եւ դաշնակցական կեղծարարները։

Յօդուածը կը սկսի հետեւեալ տողերով՝

«Տարիներ շարունակ հետեւել եմ կեղծարարական այն խայտառակ քաշ-քշուկին, որ ստեղծել եմ մեր բանաստեղծի՝ Եղիշէ Չարենցի անունն ու ըստեղծագործութեան շուրջը դաշնակցական շէֆերն ու շէֆուկները։ Յանախ ուղեցել եմ գրիչ վերցնել, ցոյց տալ ճշմարտութիւնը իր ամբողջ հասակով և պատուել դաշնակցական կեղծարարների դիմակը»։

Տարիներ շարունակ ուղեր է գրիչ վերցնել, քայց չէ վերցուցած, դաշնակցական կեղծարարներուն դիմակը պատուել ուղած է, քայց չէ պատուած։ Ինչո՞ւ արդեօք չէ պատուած... բացատրութիւն մը կայ անշուշտ Հր. Գրիգորեանի այսօրեան երկա՞ր համբերելուն, դաշնակցական կեղծարարներուն դիմակները այսօրեան երկա՞ր տարիներ չպատուելուն... սակայն մեր տալիք բացատրութիւնը ի՞նչ արժէք ունի, իր բացատրութիւնը լսենք, որը «կեղծարարական» բացատրութիւն չէ անշուշտ։ Ահա՛

«Բայց այն միտքը, թէ Չարենցի պայծառ անունն կողքին հարկ կը լինի յիշատակել մի շարք եղկելի անուններ, միշտ էլ ետ է պահել մեզ այդ քայլից»։

Ինչ գուրգուրա՞նք Չարենցի պայծառ անունն հանդէպ... Ինչ յուզիչ մը տահոգութիւն Չարենցի պայծառ անունը չաղարտելու, յիշատակելով անոր կողքին «մի շարք եղկելի անուններ...»։

Գուրգուրանքը որ այս աստիճան ըծախնդրութեամբ ցոյց կը արուի Չարենցի պայծառ անունն հանդէպ, կրկնակի յուզիչ է երբ ցոյց տուողը Հր. Գրիգորեանն է։

1946 Հոկտ. 25-ին, Երեւանի մէջ կայացող Հայաստանի Գրողներու Բ. համագումարին զեկուցարարը կը յայտարարէր՝ թէ գրականութիւնը ծանր վիճակ մը կը ներկայացնէր 1936-37 թթ. ակնմանքուն, թէ զեկավարութեան մէջ թափանցած բուրժուայ-մացիանալիստները, լրտեսները, վնասարարները, փաշիզմի հաւատարիմ ծառաները, մեծ վնասներ հասցացած էին, ինչպէս ներքին տնտեսութեան, այնպէս ալ, առանձնապէս նրա կուլտուրային։

Մէկ անուն միայն կը յիշատակէր զեկուցարարը, հալածուած բաղձաթիւ հայ գրագէտներէն, մէկ հատիկ անուն միայն ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆԸ։

«...Ֆաշիզմի այս նազկալի գործակալներին քստմնելի գործերի մասին այ-

սօր քտիպուած եմք խօսել, այն պատճառով, որ նրանք մեծ վնասներ հասցրին և գրականութեան: Մասնաւորապէս այդ բուրժուա-նացիական ըմբռնումներին տարբեր տեսք տրուեց Պրիշի Պարեմ-ցը: Ի բնէ, խառնուածքով տատանող լի-նելով՝ մա չկարողացաւ դէմ գնալ մա-ցիոնալիստական թռչնի մթնոլորտին, եւ իր մի քանի երգերում, «Գիրք Ճամա-պարհի»-ում, կրկնեց բուրժուական մա-ցիոնալիստների կեղծ, ոչ գիտական ըմ-բռնումները:

Այդ համադրմանը գեղարարներն էր, - գլխաւոր գրեւէ որ աւելի պարզ լլայ - ՀԲ. Գրիգորեան: Նոյն ՀԲ. Գրիգորեանը, որ այսօր տէր կանգնած է «Պարեմի» պայծառ անուան:

1946-ին, ՀԲ. Գրիգորեան «Ստիպ-ուած էր խօսել» Պարեմի հասցէին, զայն ամբաստանելով, որպէս «Փաշիպի հաւատարմ ծառայ», որովհետեւ «նը-րանք վնասներ հասցրին եւ գրականու-թեան»:

Անկէ ետք, 16 տարի լռութիւն պա-հած է Պարեմի անուան շուրջ, լռած է ՀԲ. Գրիգորեան, նոյնիսկ երբ Վ. Նա-ւասարդեան «Կեղծարարութիւն» ըրած է, եւ Պարեմը ներկայացուցած է որ-պէս համայնապարտութիւնէն հրաժարի-ւածի, եւ Դաշնակցութեան հանդէպ գողքի խօսք ունեցողի: Ինչու լռած ըլ-լալուն տեղեակ էք արդէն, «Պարեմի» պայծառ անուան կողքին մի շարք եղկե-լի անուններ չի չատակելու համար:

Մայրաքաղաք կատակերգութիւնը ող-բերգութեան կը վերածուի: Ողբերգու-թիւն չէ՞ ՀԲ. Գրիգորեանի գրչին տակ կարգաւ «Պարեմի» պայծառ անուան հողքին» բառերը...

Դուք կրնաք չըթուէք խածնել ի տես այս խեղկատակութեան, այսքան անհ-րեսութեան. սակայն մի կարծէք թէ նը-ւագապոյն չափով իսկ հոգն է ՀԲ. Գրի-գորեանին, կամ բոլոր ՀԲ. Գրիգորեան-ներուն. ան, նոյն պաղարկութեամբ կը շարունակէ թաթխել գրիչը, սուտի օւ խարդաւանների կազմարին մէջ,

միշտ «յանուն գրականութեան պաշտ-պանութեան», Պարեմի «պայծառ ան-ուան» պաշտպանութեան: Կը գրէ՝

«Մինչեւ 1937 թուականը, նրանք ո-չինչ անել չէին կարող, կեղծել բանաս-տեղծին իր կենդանութեան օրով հնարա-ւոր բան չէր: Բայց ահա եկաւ այդ տը-խուր տարեթիւը, մեծ բանաստեղծի աղ-բերգական կոյտուտը ձերբագրուեց դաշ-նակցականներին: Այժմ նրանք կարող էին անպատիւ խարդախել ու կեղծել, չարաշահել մինչեւ իսկ նրա մահուան տխուր հանգամանքները՝ Պարեմի ուղ-ղակի դաշնակցական հռչակելու հա-մար...»:

Երբ մէկը «Կեղծարարութեամբ» եւ «անպարտութեամբ» կ'ամբաստանէ ու-րիշ մը, կը սպասես անշուշտ որ ինքը կեղծարար չըլլայ եւ անպարտութիւն չընէ: Միամիտ ընթերցողներու հետ մենք ալ միամիտ դատանք ըստէ մը, եւ համա-րենք ՀԲ. Գրիգորեանը ոչ անպարտ, ոչ կեղծարար, ու միամտարար ալ հարցը-նենք:

- Պարեմի «Կեանքի ողբերգական վախճան» կ'ըսէք, «Տխուր տարեթիւ» կը կոչէք 1937-ը, «Մեծ բանաստեղծի ող-բերգական կոյտուտը» կ'ըսէք, «Նրա մահուան տխուր պարագաները» կ'ըսէք. կը հաճե՞ք մեզի ըսել թէ ի՞նչ ողբեր-գութեան մասին է, որ կ'անարկէք, ին-չո՞ւ տխուր տարեթիւ կը կոչէք 1937-ը, որո՞նք են Պարեմի մահուան տխուր պարագաները: Ինչո՞ւ չէք խօսիր, ին-չո՞ւ լռած էք Պարեմի պայծառ անուան ողբերգական բնաջնջման հարցին շուրջ: Ինչպէ՞ս Մեծն Պարեմը, ԸՄԻՔ ԱՅԼ-ԵԻՍ ՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ՈՐՈՒՆ ՁԱ-ԻԱՆԻ ԵՐ ԱՆ, ՈՐՈՒՆ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԻՐ ԱՄԲՈՂՋ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ, եւ ոչ թէ մեղի կամ ձեպի, ասոր կամ անոր. ըսէ՛ք Հայ ժողովուրդին թէ ՈՐԻՐ, ՈՐԻ ԹԸ-ԻԱԿԱՆԻՆ, ԵՒ ՄԱՆԱԻԱՆԻ ԻՆՉՊԻՍ ՍՊԱՆՆՈՒԹԵԱՒ ՁԱՐԵՆՑ Եւ ՈՐՈՒՆ ԿՈՂՄԷ...:

Երբ կ'ըսէք «Նրա ողբերգական կո-

դուստրը ձերբազատեց դաշնակցականներին» քիչ կը մնայ կարծենք թէ Դաշնակցութիւնը մատուցի Զարեհի ողբերգական վախճանին մէջ:

Երբ պատասխան տալիս իր այս հարցումին, Տի Կորձուիբ Սթալինի կամ Իհրկայի արվեստաբանական ձեռքբերում վերայ նետել Չարենցի մաթթործման խեղճը, ոճերը. որովհետև ԴՈՒԻԻ ԻՖ ՄԱՏԱԲԵՐԱԾ ԼԵՏԵԻՆԱԼ ԲԱՄԵՐԻՐ, 1946-ին, Սովետ. Դրակ. եւ Արուեստ ամօադրի 1946-ի 9-10 թիւին ՏԷԼ, «Սովետական դրականութիւնը եւ նրա եւտադար գարգացման ուղիները» վերնադրով ձեր յօդուածին ՏԻՏ՝

«1935-37 տարիների շրջանին, փա-
շկզվի նազկալի գործակալները առանձ-
նաշխատ սուր պայքար էին տանում հռը-
րիշխման դեմ»։ Այս պայքարին
հար. իշխամութիւնը վերջ տուեց՝ վրե՛-
նական հաշուեյարգարի ենթարկելով նը-
րանց Խ Կ. Կափուհն ստեղծեց առաջ
մթնովորտ սովետական գրողների
միւնիւնը»։

Այո, համայնավար կուսակցութեան
Կ. Կոմիտէն է որ կուսակցութեան Մոս-
կովայի կեդրոնին հրահանգով մաքրա-
գործման ենթարկեց Հայաստանի Հայ
գրողներու շարքերը, աղգայնանու-
նեան, դաշնակցութիւնի ամբաստանութիւն-
ներով, եւ ոչ թէ՛ Սօսյայի կամ Բերիա :

Կուսակցության հուլիսյան կամադա-
տար՝ երկվ Ձարենցը կ'ամբաստա-
նելիք որպէս Դաշնակցության դա-
շակաւները պաշտպանածի, ապա,
նոյն կուսակցության հրահանգով, 16
տարի լռեցիք, իբրեւ թէ Ձարենցի պաշ-
տու անուանք պաշտամունքէ մղուած,
ամեր անունին հետ չիշխատուելու հա-
մար ճմի չարե հեղինակ անհետք՝ աշ-
ուր ալ, նոյն կուսակցության Գ. Կոմի-
տէի անդամ Ձեմի իմպ երկու Կենտրո-
նԱՐԱՐԻԹԵԱՆ Կ'ենթԱՐԿԵՐ, գրելով՝
Հարկ է պատկոյն րոյր տյմ մարդակն

դիմակը, որոնք փորձում են անմաքուր
նպատակներով պղտորել Զարեմցեան
յստակ ու գուլյա աղբիւրը:

Դուք որ այնքան մտառոգ կ'երեւիք Ջարնից անուշիկի պայծառութեամբը, Ինձն ԿԵՆԻՅԻ 1935-ին, երբ ԱՅԴ Ա- ՆՈՒՆԸ ՈՐԳԱՆ ԴԱՇԷԱՅԻՉՈՒԹՅՈՒՆ ԴԱՆԱ- ՓԱՐԱԿԱՆ ԴԻՐԲԵՐՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆ Կ'ԱՄԲԱՏԱՆՈՒԹԻՐ, եւ ոչ թէ արտա- սանմանի մէջ, և. Նաւասարդեանի կող- մէ, այլ Մոսկուայի մէջ, եւ Դրաստա- ման Տէր Մոսինեանի կողմէ:

Դուք որ պաշտամունք յոյն կու
տաք, այսօր, էրեւն թէ, Ձարենցի ան-
ունան հանդէպ, ի՞նչ ըրիք 1937-ին,
երբ ՁԱՐԵՆՅԻ ՄԱՀՈՒՄԷՆ ՈՂԲԵՐԳՈՒ-
ԹԻՒՆԸ ԿՐ ԽԱՂՏՈՒԻՐ:

Դուք, որ Զարենցի ժառանգության անվթարությունն էլ հառեք, էլ հանձնե՛ք քսել, թէ 1955-ին ապուած Զարենցի գործերու ՍովետՏԱԿԱՆ Հրատարակութեան մէջ ինչո՞ւ է կար ՏԻՐԵՐ Յանապարհոնն անբողովութեամբ. եւ թէ դուք ինչո՞ւ է չարագրացոյցի՞ք ձեր ընդհզումի, քողոքի՞ մայր, ի տես Զարենցի ժառանգութեան ամենաթանկարժէք մասերուն զեղումին, Հայաստանի ընթերցողներուն չհամցունելու... 1955-ին ոչ ինքեա կար, ոչ Սթալին. կային ձեր այսօրուայ համեմատական աշտանութիւնները, եւ Զարենցի անունին հանդէպ գլուխթիւն ունեցող ամաքեալան վերցուած էր Անասթաս Միկոյեանի իսկ կողմէ:

Անպարտութիւն... Կեղծաբարտութիւն... Ո՞ւր կը փնտռեն, կը տենեն՞ք, եւ Ո՞վ է փնտռողը... Քաղաքական կեանքին ներս ցոյց արուած բարբերէն ազատ կապուցանէին զէթ գրական կեանքը, մշակութային հարստութիւնը մեր ժողովուրդին:

Զարեհնցի մահուան ողբերգութիւնէն
ետք, գէթ թող խնայուի Հայութեան, իր
անուան շուրջ խաղցունող կատակերու-
թիւնը:

U. 2.

ԱՆԳԱՐՁ ՄԵԿՆՈՂՆԵՐ

ԱՐԱՄ ՍԱՀԱԿԵԱՆ



Դրականության *ամսթիւ* մը՝ իր շուրջ հաւատք ու համադրանք սփռող այս գրագէտը, որուն կարապի երգը կրնանք համարել Ս. Մեսրոպի ծննդեան 1600-ամեակին նուիրուած *Բաղիկի* իր գրութիւնը, Սիւսանքոյի «Ս. Մեսրոպ» բանաստեղծության մասին:

Ամսթիւ մը՝ որ ուսման իր ճառագագոյն պաշարը ճոխացնելով, կրթական հաստատութիւններէ դուրս, տարիներու եւ դժուարութեանց քռուրդին մէջ, կրցաւ մտնել հայկական դպրութեան տաճարէն ներս եւ աղօթել՝ առանց խոր ու խաղոր բխումներու, առանց մեծղի յաւակնութեան, իր բուն արժէքէն յանալս աւելի վար համեստութեամբ մը: Բայց աղօթեց Արամ՝ հաւատով: Բայց մանաւանդ աղօթե՛լ տուաւ, օգնելով յանալս մեր գրականության եւ մշակոյթին հանդէպ երերալ սկսող հաւատք-ներու:

Ուժ էր, *սինսիզմ*, համագում: Ոչինչ պայմաններէ մեկնելով՝ հասաւ գրականութեան ափը: Ու նորէն, ոչինչ պայմաններէ մեկնելով՝ հասաւ հանրային գործիչի բարձր աստիճանի մը:

Գրագէտ մըն էր, որ մինչեւ վերջն ալ գրականութեան լուսանցքին վրայ կը գտար սակայն ինքզինքն եւ այդպէս ալ կը յայտարարէր: Իրմէ նըւագ արժէք ունեցող գրիչ շարժողներուն աւելի յօժարութեամբ գրագէտ կ'ըսէր. քան ինքզինքն: Երիտասարդութեան վաղ շրջանէն սկսեալ, իր գրութեան պարտականութիւններէն մին յրաժ ըլլար կարծես մտաւարական կեանքի ստեղծման ու բարձրացման օժանդակ մը ըլլալ, քաջալերող մը, ճանաչող հանազ մը, այլ մանաւանդ գրական գործերու եւ շարժումներու բարձրակարգ հովանաւոր մը, իր կարեւորութիւններու սահմանին մէջ: Եւ հարկ է խոստովանել անմիջապէս, որ, մասնաւորաբար Լիբանանի եւ Սուրիայ մեր գրական երեսնամեայ կեանքին մէջ, յաշարարի, խթան հանդիսացողի, հաւատք ու լատենտութիւն ներշնչողի բարձրօրէն ազնիւ դեր մը եղաւ իբրեւ, անկախաբար իր գրական վաստակէն, որուն մէջ, անցողակի ըստած ըլլալ, *Անահիտ Մանուկեանի Օրագիրը* առաջին տեղը կը գրաւէ զբոս մեզի, հագեցնական քափանցումի իր շատ անգամ յաջող փորձերով:

Ընթերցողներու՛ն, այսինքն թիւով շատին ու պարզին գրագէտը նախընտրեց ըլլալ աւելի, քան բարձր արուեստի խաղաղկու մտաւարականութեան մը կամ խոստահայեաց քննադատներունը, ինչպէս հանրային բեմերու վրայ, իրեն բանաստեղծ այս տոգամ, տրամաբանութեամբ պաղին մախընտրեց գագաւմներուն փայլն ու քերականութիւնը: Մանր սանտրով մը գրական արտայայտութեանց ու քերական խօսքին մօտեցողներէն ուզեց հեռու պահել ինքզինքն: Ի շահ իրեն՝ պիտի ըլլան իր գրական նախընտրութիւնները թէ ոչ՝ դժուար է հիմա ըսել: Ճիշդ չէ ի հարկէ այնքա՞ն սիրելի մէկու մը տակաւին քարմ հազակոյտին այսքան մօտիկը կեցած, այսքան յազումներու մէջ, փորձը ընել մնչեցեալ գրագէտի կեանքին ու ստեղծագործութեան լրիւ դիմագծութիւնը տալու. վաղը գրականութիւնն ու Հայ գաղութներուն պատմութիւնը կ'ընեն ատիկա, աւելի արդար. բառերով:

Գ. ՄԻՍԻԹԱՐԵԱՆ

ԲԱԳԻՆԻ խմբագրական կազմն ու վարչութիւնը սրտի անհուն կրակի ծով կ'արձանագրեն գրական ակնաւոր քննադատ, «Հայրենիք» թերթի խմբագրապետ ու «Բագին»ի աշխատակից Գ. Միսիթարեանի մահը:

ԲԱԳԻՆ պիտի անդրադառնայ ողբացեալ մեծ մտաւարականի կեանքին ու գրականութեան:

ԲԱԳԻՆԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԲԱԳԻՆ պիտի հրատարակէ այս տարի ուրիշ բարձրորակ գործերու կարգին, Սփիւռքի մեր միջին սերունդի գրագէտներէն Բ. Կռանեանի «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ» եւ Լ. Գարսեանի «ԼԵՐԱՆ ՇՈՒՔԸ» վեպերը, գաղութահայութեան անհուն սրամ մը եղող իրական կեանքէն առնւած:

Յաջորդ թիւով իսկ ԲԱԳԻՆԻ էջերուն մէջ կը սկսի տպուիլ արդէն Բ. Կռանեանի

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ

•

Յաջորդ թիւէն սկսեալ պիտի շարունակուի նաեւ Լ. Մկրտչեանի յօտո հետաքրքրական ու արժէքաւոր ռուսամասերութիւնը Ակսել Բախուկի կեանքին ու գրական վաստակի նախընթաց:

»

ԲԱԳԻՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ 1963 Յունուար 19-ին, Շաբաթ իրիկուն, ժամը 8.30-ին, Պուրն Համալսարանի ժողովրդային Տան սրահին մէջ:

ԱՀՆԻՁՈՐԻ անդարկին երիտասարդ հեղինակը Հայաստանի մէջ արժանացաւ ե՛ւ գովառանքի ե՛ւ հալածանքի. ԱՀՆԻՁՈՐԸ գովազ քննադատները արժանացան ծանր յանդիմանութեան. գայն հրատարակող իմփագիւրը հեռացուեցաւ իր պաշտօնէն...

ԱՀՆԻՁՈՐԻ ճայնը սակայն կը շարունակէ արձագանգել ամէն Հայու սրտէն ներս:

ՆԻՒԹ՝

ԱՀՆԻՁՈՐԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻՆ ԺՊՏԱՆԱԹՆ ԼԱՅԸ

ԴԱՍԱԽՕՍ՝

Բ Ժ. Բ. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

**«ԲԱԳԻՆ»Ի ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ
ՍՏԱՑԱԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՆՈՒԷՐՆԵՐԸ**

- Գոռգ մը, Պր. Զարեհ Գալֆաեանէն (Պէյրուք) :
- Գոռգ մը, Պր. Խոսրով Շաւլեանէն (Պէյրուք) «Բագին» խմբագրատան
կահաւորման համար :
- 50 տալար, Պր. Արշաւիր Շիրակեանէն (Մ. Նահանգներ) :
- 50 տալար, Պր. Մարտ Փիլոյեանէն (Մ. Նահանգներ) :
- 5 տալար, Օր. Նուարդ Օտանեանէն (Մ. Նահանգներ) :

«ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐՆԵՆ

- Պր. Յակոբ Աշնեան (Պէյրուք)՝ *Հոռիներն վարժարանին (Նոր Սիւ), Արզարեան վարժարանին (Նոր Ատանա), Բառասուն Մանկանց վարժարանին (Նոր Մարաշ), Հայ Կաթողիկէ Մեքորայեան վարժարանին եւ Պր. Հայրապետ Թորոսեանին (Պուրճ Համուս) :*
- Պր. Պողոս Թագեան (Պէյրուք)՝ *Իր Էդբորք՝ Զօհրապ Թագեանի (Մ. Նահանգներ) :*
- Պր. Կալծակ Թաշեան (Բուէյթ)՝ Պր. Հայկունի Թաշեանի (Ֆրանսա) եւ Պր. Գարեգին Թաշեանի (Պուրճ Համուս) :
- Ոմէ (Պէյրուք)՝ Պր. Սեպուհ Փափազեանի (Իրաք) :
- Ոմէ (Պէյրուք)՝ Մ. Նշան՝ *վարժարանի Շրջանաւարտից Միութեան, փոխան ընդհանրութեան Պր. Յակոբ Խաչմանեանի (Մ. Նահանգներ) ոնուան աօնին առթիւ :*
- Տոքթ. Յարութիւն Գազանեան (Պէյրուք)՝ Պր. Տիգրան Աբապեանի (Պուրճ Համուս) :

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

E. D. BOYADJIAN

B. P. 1153, BEYROUTH - LIBAN

Ձեր տպագրական ամէն տեսակ գործերուն համար շինեցէք

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ

որ սարքաւորուած է արդիական մեքենաներով եւ զոյգ տաղաշար-
ներով :

Մասնաւորաբար կը ստանձնէ գիրքերու տպագրութիւն՝ Լի-
թանմի քէ արտասահմանի համար :

Մաքուր եւ անթերի տպագրութիւն

հղնամիտ գործ

Հասցէ. —

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ

Հեռ. 245402

Նամակատուք՝ 2745

Ռիւ տը Ֆրանս

Պէյրուք — Լիթանմ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ 7 ՏՈՒԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ .—

DIKRAN KOUYOUMDJIAN

P. B. 587, Beyrouth — Liban